



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





2520

ԳՊՐՈՒԹՅՈՒՆ

ԿՍՄ

ՏՈՐ ԲԵՐԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆ

Ա Մ Վ Կ

ԵՐԱՅՈՒՆ

ԵՐԱՅՈՒՆ ԿՈՄՍՊՈՒԹԻՅԱՆ

ԾԱԽԻՐ ԶԱՅԱԶԵՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԵՇԻՊԱՆՈՒՄ

Կ ՐՈՒՄ

ԵՄՍԿՐՈՒԹՅԱՆ ՈՒՅՑ ԵՆԻՐԵՑԵՆ

Կ Ե Ե Ե

491.99-5

Գ - 34



2010







1565



213

# ԳՊՐՈՒԹԻՒՆ

49199-5

4-34

ԿԱՄ

## ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ


ՀԱՅԵՐԷՆ

485



ՅՈՐԻՆԵԱՅ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԷՇԻԿԹԱՇՈՒ ՀՍՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԾԱԽԻԻՔ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻԻՐԲԵԱՆ

Կ.ՊՈԼԻՍ, ՖԻՆԱՆՍԱԳՐԱՐ

— 1863 —

2002



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
**Տ. Տ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի**  
ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ  
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

**Տ. Տ. Ե Ս Ա Յ Ե Ա Յ**  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ

**Տ. Տ. Պ Օ Ղ Ո Ս Ի**  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ



37059.66



Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Ուսումնական խորհրդոյն ազգային դպրոցաց ուսման ընթացքին մէջ Հայերէն գրաւոր լեզուն ուսմանը տուած կարեւորութիւնը տեսնելով Հայկազեան Ընկերութիւնս Հայերէն Ֆերականութեան այս երկրորդ տպագրութիւնն աւելի ճոխ եւ կատարեալ ընել տալ հարկ համարեցաւ. մանաւանդ որ ասկէ առաջ համառօտ Ֆերականութիւն մը 'ի պէտս նորագոյն ուսանողաց 'ի լոյս ընծայած է:

Ֆերականութեանս հեղինակն այս տպագրութեան այն ամեն փոփոխութիւններն ու յաւելուածներն ըրաւ զոր իւր եւ այլոց փորձառութիւնը կը թելադրէր, եւ գրաբար լեզուն ուսմանը ազգային դաստիարակութեան մէջ ունեցած եւ ունենալու բազմադիմի կարեւորութիւնը կը պահանջէր: Հեղինակն Ուսումնական խորհրդոյն գրաբարին ուսմանը նկատմամբ ըրած նախատեսութիւնն այնչափ աւելի կը յարգէ որչափ համոզուած է թէ Հայ սերնդեան արդի լեզուն ինչպէս ծնունդը գրաբարէն է, նոյնպէս աճումն ու դարգացումը գրաբարով պիտի ըլլայ: Աս տեսութեամբ գրաբարին ուսումը մեր ազգային նախակրթական դաստիարակութեանն առաջին եւ գլխաւոր մասը պիտի ըլլայ մինչեւ որ ազգային արդի լեզուն ժամանակիս գիտնարար եւ գրագիտական պիտոյիցը բաւական ըլլալու վիճակին հասնի: Այս կարեւոր վիճակին ուր կը կենայ մեր լեզուն, նա մանաւանդ մեր մտաց դարգացումը՝ արդարեւ քանի մը ճամբով կրնանք հասնիլ. բայց ով կրնայ ժխտել թէ ան ճամբաներուն մէկն ալ գրաբարին ուսումը չէ: Հոն պիտի գտնենք նոր եւ ճշդագոյն գաղափարներու պատկերներ. խորին մտածութիւններու եւ փափուկ զգացումներու ձեւեր. հոն է մեր գոյացնելու լեզուն եթէ ոչ կերպական՝ անշուշտ նիւթական մասը. եւ ո գիտէ թերեւս ան լեզուն որուն կարեւորութիւն

50860-Ա.Կ.



նը կը զգանք եւ առ որ կը դիմենք՝ նոյն իսկ մեր հին, հրաշար, երբեմն նաեւ ճշտաւ կոչած լեզուն է:

Գրաբար լեզուին կարօտութիւնն օրրատօրէ աւելի զգացուելով, հարկաւ անոր ուսմանը գործիքներն ալ, որոյ մէկն ալ Ֆերականութիւնն է՝ հետեզհետէ նոյն կարօտութեան լրմանը յարմարագոյն ըլլալու են: Մեր Ֆերականութեան նպատակն առ է. ոչ թէ Ֆերականութիւն շինող մը երեւիլ կ'ուզենք, այլ թէ կրնանք արդեօք 'ի նպատ լեզուին ուսմանը բան մը ընել: Աւտի Ֆերականութեան մէջ մեր սկզբունքն է. 1. Կանոնները կամ պատուէրները համառօտ, յստակ եւ ճիշդ ընել. 2. Լեզուին ընդհանուր օրէնքներն այնպէս աւանդել որ օրէնքը դէպքին անվրէպ մերձենալի ըլլայ. ինչպէս որ ասիկայ կը տեսնուի Տէր բայիի, Հայցական հոլովի, Ազգական խնդրոյ, Յարաբերականի, Յօդերու, Գիտորոշներու, Բայերու ժամանակներուն գործածութեան կանոններուն մէջ. 3. Լեզուին մատենագրութեանը մէջ այն երեւոյթները, եւ համաձայնութեան ձեւերուն այն կերպերը որ ընդհանուր օրէնքի մը արդիւնք են՝ առնուլ, ապա թէ ոչ թողուլ. եւ այս ընտրութեան չափ եւ կանոն առնուած է դէպքերուն յաճախութիւնն ու միօրինակութիւնը. ըստ որում այնչափ աւելի բանաւոր է դէպքէ մը օրէնք հետեւցնել՝ որչափ դէպքը յաճախ եւ միօրինակ պատահական է:

Առաջին տպագրութեան թիւերը փակագծով նշանակուած են, որպէս զի Ֆերականական կրթութիւնն առ տպագրութեան հետ ալ գործածել դիւրին ըլլայ:

Հայկա ղեան Ընկերութիւնը իւր դպրոցասէր նպատակին մէջ յարատեւ ըլլալուն նոր ապացոյց մ'ալ տալով կը յուսայ որ, ուղղախոն հասարակութեան խրախուսիչ մղմաւոր, մանանխոյ մը հատի փոքրկութենէն ոստալից հովանաւոր ծառի մը մեծութեանը կը հասնի յօգուտ Ազգին, պաշտպանութեամբ Անոր որ ամեն անձնանուէր ջանք օրհնել սովոր է:



## Հ Ա Յ Ե Ր Է Ն

# Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն



1. Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն արուեստը լեզու մը ունի և խօսել եւ ունի գրել կը սորվեցնէ :
  2. Ուղիղ խօսելու եւ ուղիղ գրելու համար պէտք է գիտնալ թէ խօսք մը ինչպէս կը շինուի :
  3. խօսք մը բառերէ կը շինուի :
  4. Բառերուն վրայ գիտնալու երեք բան կայ :
  5. Նախ՝ թէ բառերը քանի տեսակ են եւ ինչ փոփոխութիւններ կը կրեն :
- Երկրորդ՝ թէ խօսքին մէջ ինչ պաշտօններ կը կատարեն , եւ ան պաշտօնները ցուցրնելու համար իրարու հետ ինչպէս կը համաձայնին :
- Երրորդ՝ թէ ինչ կարգով կը շարուին \* :

---

\* Աս երեք բաներուն նայելով՝ Քերականութիւնը երեք մաս պիտի ունենայ . Բարասփիտաբիւն , Համաձայնաբիւն եւ Երկարասփիւն :



## ՄԱՍ Ա.

### Բ Ա Ռ Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

6. (10) Հայերէն լեզուին բառերն ութ տեսակ են . Անուն , Ածական , Իերանուն , Նախադրութիւն , Բայ , Մակբայ , Շաղկապ , Զայնարկութիւն : Ասոնք Մասունք բանի կը կոչուին :

### Գ Լ Ո Ի Խ Ա .

#### Ա Ն Ո Ի Ն

7. (12) Անունը , որ գոյական ալ կ'ըսուի , անձ մը կամ իր մը կը ցուցնէ . հայր , մայր , հայ , Կապուտ , գետ , զգեստ , հոգի , Իմաստութիւն , գոյական անուններ են :

8. (13) Անունը երկու տեսակ է , հասարակ անուն եւ Յատուկ անուն :

9. (14) Բազուտ , գետ , լիւ , հասարակ անուն են . ամեն քաղքի՝ քաղաք , ամեն գետոյ՝ գետ , ամեն լեռան՝ լեռ կրնանք ըսել . ասոր համար հասարակ կ'ըսուին :

10. (15) Փարեղ , Եգիպտոս , Այրարատ , յատուկ անուն են . ամեն քաղքի՝ փարիզ , ամեն գետոյ՝



Եփրատ , ամեն լեռան՝ Այրարատ չենք կրնար  
ըսել . մինակ փարիզ քաղքին՝ փարիզ , մինակ  
Եփրատ գետին՝ Եփրատ , մինակ Այրարատ  
լեռան՝ Այրարատ կրնանք ըսել , ասոր համար  
յատուկ կ'ըսուին :

11. (16) Յատուկ անունները գլխադրով կը  
գրուին :

12. (17) Գոյական անունը երկու փոփոխու  
թիւն կ'ունենայ . Թի- և Հու՛ :

13. (18) Թիւը երկու է . Ելաի՛ և Յոհնաի՛ :

14. (19) Եղակին անունին նշանակած բանին  
Տէ՛ հաս ըլլալը կը ցուցնէ . ինչպէս . մարդ , քա  
ղաք , գետ , Տէ՛ մարդ , Տէ՛ քաղաք , Տէ՛ գետ  
կը նշանակեն :

15. (20) Յոքնակին՝ անունին նշանակած բա  
նին Տէ՛ի աւել ըլլալը կը ցուցնէ . զոր օրինակ .  
մարդ+ , քաղաք+ , գետ+ , մարդեր , քաղաք  
ներ , գետեր ըսել են . այսինքն՝ Տէ՛ի աւել մարդ ,  
Տէ՛ի աւել քաղաք , Տէ՛ի աւել գետ :

16. Հոլովն՝ անունի մը վերջաւորութեանը  
կամ ծայրին փոխուիլն է :

17. Հոլովը Հայերէնի մէջ վեց է . Ուղղական ,  
Սեռական , Տրական , Հայցական , Բացատրական եւ Գոր  
ծիական :

18. Անունին վերջը փոխուելուն հաւել կ'ըս  
ուի :

19. Հայերէնի մէջ ամեն անուն մէկ կերպով  
էի հոլովիր , այսինքն՝ ամեն անուն իր վերջը



մէկ կերպով չի փոխեր, շատ մը հոլովելու կերպեր կան որոնք Հոլովումն կը կոչուին :

20. Հայերէնի մէջ աստուծոյ կանոնաւոր, քանի մը հասա ալ անկանոն հոլովմունք կան :

21. (28) Ամեն անուն եղակիին մէջ տարբեր, ու յոքնակիին մէջ տարբեր կերպով կը հոլովի :

ՏԱՍՈՒԵՐԿՈՒ ԿԱՆՈՆԱԻՐ ՀՈԼՈՎՄՈՒՆԻՔ

Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ուղղական.	Բան.	Բան-+
Սեռական.	Բան-ի.	Բան-ից.
Տրական.	Բան-ի.	Բան-ից.
Հայցական.	չ Բան.	չ Բան-ա.
Բացարական.	'ի Բան-ի.	'ի Բան-ից.
Գործիական.	Բան-ի-.	Բան-ի-+.

Արքայ, յի, յիւ.                      Գիծ, դծի, դծիւ.  
Հանդէս, դիսի, դիսիւ.            Ողջոյն, ջոնի, ջոնիւ:

Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Քաղաք.	Քաղաք-+.
Ս.	Քաղաք-ի.	Քաղաք-աց.
Տ.	Քաղաք-ի.	Քաղաք-աց.
Հ.	չ Քաղաք.	չ Քաղաք-ա.
Բ.	'ի Քաղաք-ի.	'ի Քաղաք-աց.
Գ.	Քաղաք-ա-.	Քաղաք-ո+.

Աւաղան, անի, նաւ.                Լեզու, զուի, զուաւ.  
Արդեակ, դեկի, դեկաւ.        Պարակի, տիզի, տիզաւ:



Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Զգեստ.	Զգեստ-ի.
Ս.	Զգեստ-ու.	Զգեստ-ուց.
Տ.	Զգեստ-ու.	Զգեստ-ուց.
Հ.	չԶգեստ.	չԶգեստ-ու.
Բ.	'ի Զգեստ-ի.	'ի Զգեստ-ուց.
Գ.	Զգեստ-ու.	Զգեստ-ուի.

Ծով, ծովու, ծովու.      Զին, զինու, զինու.  
 Ինձ, ընձու, ընձու.      Քաղց, ցու, ցու:

Աս հորովման տակ գացող անուններէն ոմանց բացառականը «-ի կ'ըլլայ, զոր օրինակ. Զարդ, զարդու, 'ի զարդուի. խրատ, խրատու, 'ի խրատուի. Նախանձ, նախանձու, 'ի նախանձուի. Քաղց, քաղցու, 'ի քաղցուի, եւայլն:

Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Գետ.	Գետ-ի.
Ս.	Գետ-ոյ.	Գետ-ոց.
Տ.	Գետ-ոյ.	Գետ-ոց.
Հ.	չԳետ.	չԳետ-ու.
Բ.	'ի Գետ-ոյ.	'ի Գետ-ոց.
Գ.	Գետ-ով:	Գետ-ովի.

Ծեր, բոյ, բով.      Խոնակ, խնկոյ, խնկով.  
 Էշ, էշոյ, էշով.      Յոյս, յոսոյ, յոսով:

Աս հորովման տակ գացող բառերէն ոմանց եզակի տրականը «-ձ ալ կ'ըլլայ. զոր օրինակ. Նոր, նորոյ, նորում. Հին, հնոյ, հնում. Մի, միոյ, միում, եւայլն:



Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Եղակի.
Ո.	Տրդատ.	Հոխիախմէ.
Ս.	Տրդատ-այ.	Հոխիախմ-եայ.
Տ.	Տրդատ-այ.	Հոխիախմ-եայ.
Հ.	չՏրդատ.	չՀոխիախմէ.
Բ.	'ի Տրդատ-այ.	'ի Հոխիախմ-եայ.
Գ.	Տրդատ-աւ.	Հոխիախմ-եաւ.

Հայկ, կայ, կաւ.	Գայիանէ, նեայ, նեաւ.
Արամ, մայ, մաւ.	Յուլիոս, լեայ, լեաւ.
Վահան, նայ, նաւ.	Լուկրետիա, տեայ, տեաւ.
Արշակ, կայ, կաւ.	Եսայի, սայեայ, սայեաւ.
Տիգրան, նայ, նաւ.	Օգոստոս, տեայ, տեաւ.

Աս երկու հոլովմանց տակ յատուկ անուններ կ'երթան, անոր համար յոքնակի չունին: Վեցերորդ հոլովման տակ գացող « վերջաւորածներն Աւաղին հոլովման պէս ալ կ'ըլլան. ինչպէս. Օգոստոս, Օգոստոսի, Օգոստոսիւ. Յուլիոս, Յուլիոսի, Յուլիոսիւ. Դիոս, Դիոսի, Դիոսիւ:

Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոհնակի.
Ո.	Եկեղեցի.	Եկեղեցի-տ.
Ս.	Եկեղեց-այ.	Եկեղեց-եայ.
Տ.	Եկեղեց-այ, -ով.	Եկեղեց-եայ.
Հ.	չԵկեղեցի.	չԵկեղեցի-տ.
Բ.	* Եկեղեց-այ.	Եկեղեց-եայ.
Գ.	Եկեղեց-եաւ.	Եկեղեց-եօտ.

\* Չայնաւորով սկսող անուններու քով 'ի նախդրի տեղ յ կը դրուի:



Կղզի, գւոյ, գեաւ. Գօտի, տւոյ, տեաւ.  
Տեղի, տեղւոյ, տեղեաւ. Գինի, նւոյ, նեաւ:

Աս հոլովման տակ կ'երթան ամեն ի վերջաւորած բաղմամբանկ անուններ, ի վերջաւորած միավանկները Չորրորդ հոլովման, այսինքն Գեփ, գեփոյին պէս կ'ըլլան. ինչպէս, Չի, ձիոյ, ձիով. Դի, դիոյ, դիով:

Աս հոլովման տակ դացող անուններէն ումանց եզակի դործիականը -ւ, իսկ յոքնակի սեռականը, տրականը, բացառականը -ոյ, ու դործիականը -ւք կ'ըլլան. ինչպէս, Հոգի, հոգւոյ, հոգւով. Հոգիք, հոգւոց, հոգւովք. Որդի, որդւոյ, որդւով. Որդիք, որդւոց, որդւովք: Ասանկ կ'ըլլան ամեն ի վերջաւորած անուններ. ինչպէս, Իսրայելացի, Իսրայելացւոյ, Իսրայելացւով. Իսրայելացիք, Իսրայելացւոց, Իսրայելացւովք:

Աս հոլովման տակ դացող բառերէն ումանց բացառականն ալ -ւք կ'ըլլայ. ինչպէս, Տեղի, տեղւոյ, 'ի տեղւոջէ:

Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եզակի.	Յոմնակի.
Ո.	Փոքր.	Փոքր-ուսէ.
Ս.	Փոքր-ու.	Փոքր-ուանց.
Տ.	Փոքր-ու.	Փոքր-ուանց.
Հ.	Չփոքր.	Չփոքր-ուան.
Բ.	'ի փոքր-ուէ.	'ի փոքր-ուանց.
Գ.	Փոքր-ուսէք, փոքր-ու.	Փոքր-ուսէք.



Մանր, նու, նու.	Մանունք, նունց, նումբք.
Ծանր, նու, նու.	Ծանունք, նունց, նումբք.
Թանձր, ձու, ձու.	Թանձունք, ձունց, ձումբք.
Քաղցր, ցու, ցու.	Քաղցունք, ցունց, ցումբք.

Աս հոլովման տակ գացող անուններէն Բարձր, յոքնակիին մէջ այսպէս կ'ըլլայ. Բարձունք, բարձանց, բարձածքք. փոխանակ՝ Բարձունց, բարձանցքք. ըլլալու :

Աս հոլովման տակ գացող ածականները յոքնակի ալ ունին : Բայց կան աս հոլովման տակ գացող քանի մը գոյականներ որոնք յոքնակի չեն գործածուիր. զոր օրինակ. Ասր, ասու, յասուէ, ասու : Մեղր, մեղու, 'ի մեղուէ, մեղու :

Թ. ՀՈՒՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոփնակի.
Ո.	Հիմն.	Հիմն-ունք.
Ս.	Հիմն-ան.	Հիմն-անց.
Տ.	Հիմն-ան.	Հիմն-անց.
Հ.	չ Հիմն.	չ Հիմն-ունք.
Բ.	'ի Հիմն-անէ	'ի Հիմն-անց.
Գ.	Հիմն-ածքք.	Հիմն-ածքքք.

Արեգակն, կան, կամբ. Ծուրթն, չրթան, չրթամբ.  
Խոստումն, տման, տմամբ. Գուռն, դրան, դրամբ.

Աս հոլովման տակ գացող անուններէն ումանց յոքն. ուղղ. ու հայցականը անք, անս կ'ըլլան. ինչպէս, Սերմն, սերմանք, սերմանս. կողմն, կողմանք, կողմանս. Անուն, անունք, անունս :



Ը. վերջաւորուած բառերուն մեծ մասն աս  
 հոլովման տակ կ'երթան. ինչպէս են վերի բա  
 ռերը եւ հետեւեալները, Ատամն, ատաման,  
 ատամամբ. Ատամունք, ատամանց, ատա  
 մամբք. Ուսումն, ուսման, ուսմամբ. Ուս  
 մունք, ուսմանց, ուսմամբք. Սկիզբն, սկզ  
 բան, սկզբամբ. Սկզբունք, սկզբանց, սկզ  
 բամբք: Քիրան, քրտան, քրտամբ. Քրտունք,  
 քրտանց, քրտամբք, եւ այլն:

Կան ուրիշ այլ եւ այլ վերջաւորութիւն ու  
 նեցող բառեր ալ որոնք աս հոլովման պէս  
 կ'ըլլան. զոր օրինակ.

- Աղջիկ, ջկան, ջկանէ, ջկամբ. ջկունք, ջկանց, մբք.
- Անուն, ուան, ուանէ, ուամբ. ուանք, ուանց, մբք.
- Աշուն, շնան, շնանէ, շնամբ. շունք, շնանց, շնամբք.
- Գարուն, րնան, րնանէ, րնամբ. րունք, րնանց, մբք.
- Կորեակ, բեկան, բեկանէ, բեկամբ. բեկունք, բեկանց.
- Չեղուն, ուան, ուանէ, ուամբ. ունք, ուանց, ուամբք.
- Մանուկ, նկան, նկանէ, նկամբ. նկունք, նկանց, մբք.
- Մարդիկ, դկան, դկանէ, դկամբ.
- Շուն, շան, շանէ, շամբ. շունք, շանց, շամբք.
- Պաշտօն, տաման, տամանէ, տամամբ. տամունք,  
 տամանց, տամամբք.
- Տնիկ, տնկան, տնկանէ, տնկամբ. տնկունք, տնկանց,  
 տնկամբք.
- Տուն, տան, տանէ, տամբ. տունք, տանց, տամբք.
- Տտուն, տտան, տտանէ, տտամբ. տտունք, տտանց,  
 տտամբք.
- Փոքրիկ, բկան, բկանէ, բկամբ. բկունք, բկանց, մբք.



Ժ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Գառն.	Գառ-ին+
Ս.	Գառ-ին.	Գառ-անց.
Տ.	Գառ-ին.	Գառ-անց.
Հ.	չ Գառն.	չ Գառ-ինա.
Բ.	'ի Գառ-անէ.	'ի Գառ-անց.
Գ.	Գառ-ամբ.	Գառ-ամբ+

Ձեռն, ոխն, ոամբ.      Եղն, եղին, եղամբ.  
 Լեռան, լերին, լերամբ.      Խաչն, խաչին, խաչամբ.

Սա հոլովման տակ դացող բառերէն ոմանք ,  
 ինչպէս՝ Սնձն, Սղն, Գիւցաղն, Հարսն, Մասն,  
 բացառականին մէջ յՍնձնէ, յՍղնէ, 'ի Գիւ-  
 ցաղնէ, 'ի Հարսնէ, 'ի Մասնէ, կ'ըլլան . փո-  
 խանակ յՍնձանէ, յՍղանէ, 'ի Հարսանէ, 'ի Մա-  
 սանէ ըլլալու :

Գարձեալ՝ ոմանց յոքն . ուղղ . ու հայցա-  
 կանը ոան+, ոանա, կ'ըլլան . ինչպէս . Գիւցաղան+,  
 դիւցաղանա . Հարսան+, հարսանա . Մաստան+,  
 մաստանա . Մաստան+, մաստանա . Թուռան+, [Թու-  
 ռանա . Ողան+, ողանա . փոխանակ, Հարսին+,  
 հարսինա . Մասին+, մասինա, եւ այլն ըլլալու :

ԺԱ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Նեղութիւն.	Նեղութիւն-+
Ս.	Նեղութ-եան.	Նեղութ-եանց.
Տ.	Նեղութ-եան.	Նեղութ-եանց.
Հ.	չ Նեղութիւն.	չ Նեղութիւն-ա.
Բ.	'ի Նեղութ-եանէ.	'ի Նեղութ-եանց.
Գ.	Նեղութ-եամբ.	Նեղութ-եամբ+



Այսպէս կը հոլովին ամեն «-ի-ն» վերջաւորուած բառեր, եւ ի-ն վերջաւորուածներէն շատերը, որոնց ոմանց բացառականը է-նէ կ'ըլլայ, փոխանակ է-նէ ըլլալու. զոր օրինակ.

Արիւն, արեան, յարենէ, արեամբ. արիւնք, արեանց.

Անկիւն, անկեան, յանկենէ, անկեամբ. անկիւնք, անկեանց.

Կորիւն, կորեան, 'ի կորեանէ, կորեամբ. կորիւնք, կորեանց.

Ձիւն, ձեան, 'ի ձեանէ, ձեամբ. ձիւնք, ձեանց.

Սիւն, սեան, 'ի սեանէ, սեամբ. սիւնք, սեանց:

Բայց ան ի-ն վերջաւորած բառերը որոնք «-ն» վերջաւորածներուն զօրութիւնն ունին, բնաւ չեն հոլովիր. ասոնք հոլովել պէտք եղած ատեն «-ն» վերջաւորուածները գործածել հարկ կ'ըլլայ. զոր օրինակ, հնչի-ն կամ հնչ-ումն, հնչման, հնչմամբ. Գոչի-ն կամ գոչ-ումն, գոչման, գոչմամբ: Միայն ֆրիթմնջի-ն բառը հոլոված կայ, ֆրիթմնջիւն, քրիթմնջեան, 'ի քրիթմնջենէ:

Կան ուրիշ այլ եւ այլ վերջաւորութիւն ունեցող բառեր ալ որոնք աս հոլովման պէս կ'ըլլան. զոր օրինակ.

Տեսիլ, սլեան, սլենէ, սլեամբ. սիլք, սլեանց սլեամբք.

Հանգիստ, գստեան, գստենէ, գստեամբ.

Կորուստ, բստեան, բստենէ, բստեամբ.

Գալուստ, լստեան, լստենէ, լստեամբ.

Փախուստ, խստեան, խստենէ, խստեամբ.

Ստին, ստեան, ստենէ, ստեամբ. ստինք, ստեանց,

ստեամբք:



ԺԲ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Ոսկր.	Ոսկ-եր+
Ս.	Ոսկ-եր.	Ոսկ-երաց.
Տ.	Ոսկ-եր.	Ոսկ-երաց.
Հ.	չՈսկր.	չՈսկ-երս.
Բ.	յՈսկ-երէ.	յՈսկ-երաց.
Գ.	Ոսկ-երք.	Ոսկ-երօ+.

Կայսր, սեր, սերք.	Ուսար, տեր, տերք.
Գուսար, դատեր, դատերք.	Աստղ, տեղ, տեղք.
Այլուր, ալեր, ալերք.	Աղբուր, բեր, բերք.

Համբար բառը յոթնակիին մէջ կ'ըլլայ Համերք, Համերց, այսպէս կրնան ըլլալ նաեւ աս հոլովման տակ վացող ուրիշ բառեր ալ. զոր օրինակ. Ոսկերք, ոսկերց, ոսկերք+, Աստեղք, աստեղց, աստեղք+, Աղբերք, աղբերց, աղբերք+, եւ այլն. բայց Երկրորդ հոլովման յոթնակիին պէս՝ ոսկերաց, ոսկերօ+, աստեղաց, աստեղօ+, աղբերաց, աղբերօ+, ըսել աւելի սովորական է:

ԶԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆԻՔ

Ա. ՀՈԼՈՎՈՒՄ		Բ. ՀՈԼՈՎՈՒՄ		
	Եղ.	Յո+	Եղ.	Յո+
Ո.	Այր.	Արք.	Հայր.	Հարք.
Ս.	Առն.	Արանց.	Հօր.	Հարց.
Տ.	Առն.	Արանց.	Հօր.	Հարց.
Հ.	չԱյր.	չԱրս.	չՀայր.	չՀարս.
Բ.	յԱռնէ.	յԱրանց.	'ի Հօրէ.	'ի Հարց.
Գ.	Արամբ.	Արամբք.	Հարբ.	Հարբք.



Տէր, տեառն, 'ի տեառնէ,  
տերամբ. Տեարք, տե-  
րանց, տերամբք.

Մայր, մօր, 'ի մօրէ, մարբ.  
Մարք, մարց, մարբք.  
Եղբայր, եղբօր, յեղբօրէ,  
եղբարբ. Եղբարք, եղ-  
բարց, եղբարբք.

Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղ.	Յո+
Ո.	Քոյր.	Քորք.
Ս.	Քեռ.	Քերց.
Տ.	Քեռ.	Քերց.
Հ.	չ Քոյր.	չ Քորա.
Բ.	'ի Քեռէ.	'ի Քերց.
Գ.	Քերբ.	Քերբք.

Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղ.	Յո+
	Կին.	Կանայք.
	Կնոջ.	Կանանց.
	Կնոջ.	Կանանց.
	չ Կին.	չ Կանայս.
	'ի Կնոջէ.	'ի Կանանց.
	Կանամբ.	Կանամբք.

Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղ.	Յո+
Ո.	Գիւղ.	Գիւղք.
Ս.	Գեղջ.	Գիւղից.
Տ.	Գեղջ.	Գիւղից.
Հ.	չ Գիւղ.	չ Գիւղս.
Բ.	'ի Գեղջէ.	'ի Գիւղից.
Գ.	Գիւղիւ.	Գիւղիւք.

Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղ.	Յո+
	Օր.	Աւուրք.
	Աւուր.	Աւուրց.
	Աւուր.	Աւուրց.
	չ Օր.	չ Աւուրս.
	յՕրէ.	յԱւուրց.
	Աւուրբ.	Աւուրբք.

Է. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղ.	Յո+
Ո.	Տիւ.	Տիւք.
Ս.	Տուրնջեան.	
Տ.	Տուրնջեան.	
Հ.	չ Տիւ.	չ Տիւս.
Բ.	'ի Տուրնջեանէ, 'ի տուէ.	
Գ.	Տուրնջեամբ.	

Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

	Եղ.	Յո+
	Արեւելեաց.	Արեւելեայք.
	Արեւելւոյ.	Արեւելեացց.
	Արեւելւոյ.	Արեւելեացց.
	չ Արեւելեաց.	չ Արեւելեայս.
	յԱրեւելւոյ.	յԱրեւելեացց.
	Արեւելեաւ.	Արեւելեօք.



ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ  
ԳԻՏԵԼԻՔ

22. (41) վեց հոլովներէն երկուքը, այսինքն  
Ուղղականն ու Հայցականը, «-դիդ հոլով, իսկ միւս  
չորսը, Սեռականը, Տրականը, Բացառականն  
ու Գործիականը խոսորձակ հոլով կը կոչուին:

23. (42) Բաղաձայնով վերջաւորուած անուն  
ներուն վերջին վանկին է եւ «-ձայնաւորները՝  
խոսորձակ հոլովներուն մէջ բնական\* ըի կը  
փոխուին. զոր օրինակ, գիծ, գծի, խոնկ,  
խնկոյ:

Իսկ եւ՝ էի, է՝ էի, ոյ՝ ուի կը փոխուին, ինչ  
պէս. Ատեան, ատենի. Մեզ, մեզի. Ողջոյն,  
ողջոնի:

24. Քանի մը բառերու մէջ է գիրն ալ բնա  
կան ըի կը փոխուի, զոր օրինակ. Ասեղն, աս  
ղան. Թիթեղն, թիթղան:

Գէ- բառին է գիրը էի կը փոխուի, զոր օ  
րինակ. Գեւ, գիւի. Գեւք, գիւաց, գիւօք:

25. Ի- վերջաւորուած բառերուն մէջ ի-ը  
ուի կը փոխուի, զոր օրինակ. Թի-, թոոյ,  
թոով. Պատի-, պատոոյ, պատոով. Անի-,  
անոոյ, անով. Հովի-, հովուի, հովուաւ.  
Վաղի-, վաղուի:

---

\* Բնական ը կ'ըսուի ը հնչումը որ չի գրուիր, բայց եր  
կու բաղաձայնի մէջտեղը հարկաւ գրալի է. զոր օրինակ  
քննել, որ կը կարգացուի քննել. թէպէտ ը գիրը չի գրուիր:



26. Արժուի բառը եղակի խտտորնակ հոլով ներուն մէջ է գիրը չի պահեր, զոր օրինակ. Արժուի, արժուոյ, արժուով:

27. Փոփոխելի ձայնաւորով սկսած միալանկ բառերէն ոմանք, վերի կանոնին համեմատ կը փոխուին խտտորնակ հոլովներուն մէջ, ոմանք ալ չեն փոխուիր. զոր օրինակ.

- Ինչ կ'ըլլայ, ընչի, ընչիւ. ինչք, ընչից, ընչիւք.
- Իղծ » ըղձի, ըղձիւ. իղծք, ըղձից, ըղձիւք.
- Ունչ » ընչոյ, ընչով. ունչք, ընչաց, ընչօք.
- Ունդ » ընդոյ, ընդով. ունդք, ընդոց, ընդովք:

Բայց

- Իժ կ'ըլլայ, իժի, իժիւ. իժք, իժից, իժիւք.
- Իբ » իբի, իբք, իբաց, իբօք.
- Ուս » ուսոյ, ուսով. ուսք, ուսոց, ուսովք.
- Ուխտ » ուխտի, ուխտիւ. ուխտք, ուխտից, տիւք:

28. Եւ վերջաւորուած հասարակ անունները Ա. հոլովման պէս կը հոլովին, զոր օրինակ.

- Աշտեայ, տէի, տէիւ. տեայք, տէից, տէիւք.
- Գուղնաքեայ, քէի, քէիւ, եւ այլն.
- Կաթողիկեայ, կէի, կէիւ, եւ այլն.
- Փախատեայ, տէի, տէիւ, եւ այլն.
- Քրիստոնեայ, նէի, նէիւ, եւ այլն:

Անդեայ բառը կը հոլովի այսպէս, Անդեայ, անդէոյ, անդէով. Անդեայք, անդէոց, անդէովք:

Իսկ եւ վերջաւորած տեղոյ կամ բնակչաց անուններ, Արեւելեայ բառին պէս կը հոլովին, զոր օրինակ.



Ասորեստանեայ, նւոյ, նւով. նեայք, նեայց, նեօք.  
 Հայաստանեայ, նւոյ, նւով. նեայք, նեայց, նեօք.  
 Վանեայ, նւոյ, նւով. նեայք, նեայց, նեօք.  
 Ծովեզերեայ, բւոյ, եւ այլն.  
 Միջերկրեայ, բւոյ, եւ այլն.  
 Սասորերկրեայ, սասորերկրւոյ. եւ այլն:

29. Եւ վերջաւորուած բառեր այսպէս կը հոլովին .

Մամիկոնեան, նենի, նենիւ. նեանք, նեանց, նեամքք.  
 Յաւիտեան, տենի, տենիւ. տեանք, տեանց, տեամքք.  
 Յորելեան, ելենի, ելենիւ. ելեանք. եւ այլն:

30. Աւ վերջաւորուած ածականներ որոնք յատուկ անուններէ շինուած են, եւ մէկու մը վերաբերեալները կը ցուցնեն, հետեւեալ կերպով կը հոլովին .

Աղամանք, մանց, մամքք կամ մամք.  
 Շամիրամանք, միրամանց, միրամամքք կամ մամք:

31. Կան հասարակ անուններ որոնց ամեն կամ քանի մը հոլովները քանի մը կերպ կ'ըլլան . կամ եղակին տարբեր, յօքնակին տարբեր կերպով կը հոլովին . զոր օրինակ .

Աղախին, աղախնոյ, աղախնով. Աղախինք կամ աղախնեայք, աղախնայց կամ աղախնեայց, աղախնեօք.

Աղուէս, աղուխու. Աղուէսք կամ աղուխուէք, աղուխուց, աղուխուք.

Ամիս, ամսոյ կամ ամսեան, ամսով. Ամիսք, ամսոց, ամսովք.

Անդրանիկ, անդրանիան, յանդրանիանէ, անդրան-







Ճրագ, ճրագի, ճրագաւ. ճրագք կամ ճրագունք,  
ճրագաց, ճրագօք.

Մահ, մահուան կամ մահու, 'ի մահուանէ, մահուամբ  
կամ մահու. Մահք կամ մահուանք, մահուանց,  
մահուամբք.

Մեղր, մեղու կամ մեղեր.

Մկան, մկանի, մկանաւ. Մկանք կամ մկանունք,  
մկանանց, մկանամբք.

Մսան, մսանի, մսանաւ. Մսանք կամ մսանունք,  
մսանանց, մսանամբք.

Նարդոս, նարդոսի կամ նարդեան, նարդոսիւ.

Ոտն, ոտին, յոտանէ, ոտամբ. Ոտք, ոտից, ոտիւք.

Որմ, որմոյ, որմով. Որմք կամ որմունք, որմոց, որմովք.

Պառաւ, պառաւոյ, պառաւով. Պառաւք կամ պա-  
ռաւունք, պառաւանց, պառաւամբք.

Պատերազմ, պատերազմի, պատերազմաւ. Պատե-  
րազմք կամ պատերազմունք, պատերազմաց,  
պատերազմօք.

Ջուր, ջրոյ, ջրով կամ ջուրբ. Ջուրք, ջրոց կամ  
ջուրց, ջրովք կամ ջուրբք.

Սարկաւազ, սարկաւազի, սարկաւազաւ. Սարկա-  
ւազք կամ սարկաւազունք, սարկաւազաց,  
սարկաւազօք.

Յից, ցցի, ցցիւ. Յիցք կամ ցցունք, ցցից, ցցիւք.

Փախուստ, փախստեան կամ փախստի, փախստեամբ  
կամ փախստիւ.

Քար, քարի, քարիւ. Քարինք, քարանց, քարամբք.

32. Դ. Հոլովման, այսինքն Գեոր, գեորյին պէս  
հոլովող բառերէն ոմանց եզակի տրականը է  
ալ կրնայ վերջաւորիլ, է նախադրութեան հետ,  
զոր օրինակ .



Աթոռ.	Տրա.	աթոռոյ	կամ	յաթոռի.
Անկողին.	»	անկողնոյ	»	յանկողնի.
Բերան.	»	բերանոյ	»	'ի բերանի.
Գիշեր.	»	գիշերոյ	»	'ի գիշերի.
Գիր.	»	գրոյ	»	'ի գրի.
Գուր.	»	գրոյ	»	'ի գրի.
Երազ.	»	երազոյ	»	յերազի.
Թուղթ.	»	թղթոյ	»	'ի թղթի.
Ծոյ.	»	ծոյոյ	»	'ի ծոյի.
Մարմին.	»	մարմնոյ	»	'ի մարմնի.
Պատիժ.	»	պատժոյ	»	'ի պատժի.
Պատիւ.	»	պատուոյ	»	'ի պատուի.
Տղամ.	»	տղամոյ	»	'ի տղամի.
Փոր.	»	փորոյ	»	'ի փորի.

Բայց չըսուիր, 'ի մարդի, 'ի լուսի, 'ի ծերի, եւ այլն :

33. Կան անուններ ալ որոնք տարբեր կերպով հոլովելով ուրիշ նշանակութիւն կ'ունենան.

Այր, այրի, այրիւ.	այր, ճաղարա.
Այր, առն, արամբ.	երեկ ճարդ.
Գայլ, գայլի, գայլիւ.	գայլ, բերանակապ.
Գայլ, գայլոյ, գայլով.	գայլ, (գաղանը).
Գեղ, գեղոյ, գեղով.	գեղեցիկ-լիւն.
Գեղ, գեղջ, գիւղիւ.	գեղ.
Դի, դիոյ, դիով.	դի, (լէշ).
Դիք, դից, դիօք.	չասորոսած.
Կոյս, կուսի, կուսից.	կոյս, (աղջիկ).
Կոյս, կուսի, կուսաց.	կողմ.
Մայր, մօր, մարբ.	ճայր.
Մայր, մայրի, մայրիւ.	ճայր, (ծառ).
Որթ, որթոյ, որթով.	որթ, (ասմա).



Որթ, որթու, որթու.	հորթ, (տանա).
Սան, սանի, սանիւ.	հախապ.
Սան, սանու, սանուց.	սան, ինանասան.
Փող, փողոց, փողով.	փող (պօղու).
Փող, փողի, փողիւ.	փող, պօղաղ.
Օղ, օղոց, օղով.	օղ, (հաղա).
Օղ. օղի, օղիւ.	օղ, (տարի տան).

34. Հասարակ անուններէն ոմանք բարդու թեան կամ ածանցման մէջ իրենց առջի հոլովման ձեւը կը պահեն ոմանք ալ կը փոխեն, զոր օրինակ.

Փոխողներ.

Աստուած, աստուծոց, ծով.	Անաստուած, ծի, ծից.
Գլուխ, գլխոց, գլխով.	Զօրագլուխ, գլխի, գլխաց.
Գործ, ծոց, ծով.	Այդեգործ, ծի, ծաց.
Ձէն, գինու, գինու.	Սպասողէն, գինի, գինաց.
Խրատ, ատ, ատ.	Անխրատ, տի, տից.
Խօսք, սից, սիւք.	Բարեխօս, սի, սաւ, սաց.
Սէր, սիրոց, սիրով.	Աստուածասէր, սիրի, բաւ.
Սիրտ, սրտի, սրտիւ.	Խաստախր <sup>ւտ</sup> , խստախրտ

Պահողներ.

Գին, գնոց, գնով.	Մեծագին, գնոց, գնով.
Մարմին, մարմնոց, մնով.	Անմարմին, մնոց, մնով.
Շունչ, շնչոց, շնչով.	Անշունչ, շնչոց, շնչով.

ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԹՈՒՈՅՆ ՎՐԱՅ

ԳԻՏԵԼԻՔ

35. Կան անուններ որոնք յօքնակի չեն կըրնար ունենալ, զոր օրինակ. Ժապ, Ժարտ, Ժեւ, Ժեւիւն, Կւ այլն.



Ասոր հակառակ կան անուններ որոնք եղակի չունին, ինչպէս • Աղօթ, Դժոխ, Կամ, Մեղ, Միտ, Պարտ • եւ այլն : Չըսուիր Աղօթ, Դժոխ, Կամ, եւ այլն : Աս տեսակ անուններ Անեղական կը կոչուին :


Անեղական անուններ բարդութեան կամ ածանցման մէջ, եւ կամ ուրիշ բառերու հետ իբրեւ ասութեան կերպ գործածուած ատեն եղակի կ'ըլլան, զոր օրինակ •

Աղօթասէր, դժոխական, կամաւոր, ճշաւոր, ճարտորհ, պարտաւոր, եւ կամ, ճշ դնել, ճշ ինչ ոչ գոյր նոցա, ճիշ դնել, 'ի ճոխ ունել, զճրտա ածել, ընդ ճիշ տանել, կամ եղեւ ինձ :

36. կան այնպիսի բառեր ալ որոնց հոլովման ձեւը եղակի է, բայց նշանակութիւնը յոքնակի ըլլալուն համար, յոքնակիի ձեւով չեն հոլովիր, զոր օրինակ •

- Մարդիկ, մարդկան, 'ի մարդկանէ, մարդկամբ •
- Մանկտի, մանկաւոյ, մանկաւով •
- Գրեան, գրենոյ, գրենով •
- Որեար, որերոյ, որերով •
- Ոսկրտի, ոսկրտաւոյ, ոսկրտաւով •
- Աւագանի, աւագանւոյ, աւագանւով •

Այսպէս են նաեւ խուժան, իշխան, Չիան, խողեան : Ուստի եւ չըսուիր Մարդիկք, մարդկանց • Մանկտիք, մանկտեաց • Գրեանք, գրեանց • Որեարք, որերոց • եւ այլն :





ԳԼՈՒԽ Բ.

ԱԾԱԿԱՆ

37. Ածական կ'ըսուին ան տեսակ բառեր՝ որոնք գոյականին որպէս-էնը, այսինքն ինքուր լալը, եւ կամ փանակո-ւնը, այսինքն՝ թիւը, փանկ հասր լալը կը ցուցնեն : Չոր օրինակ, կարծի հանդերձ, երկու հանդերձ • կարծի՝ հանդերձին որ պիտութիւնը, երկու՝ քանակութիւնը կը ցուցնեն, ուստի եւ ածական են :

38. Գոյականն ու ածականը իրարմէ որոշելու դիւրին կերպն է՝ բառին քով քան (չէյ բառը դնել • եթէ կը յարմարի՝ ան բառն ածական է, եթէ չի յարմարիր՝ բառը գոյական է • զոր օրինակ, չըսուիր՝ մարդ քան, քաղաք քան, տուն քան • ապա ճարդ, փաղակ, սոսն, գոյական են • բայց կ'ըսուի, բարի քան, չար քան, մեծ քան • ապա բարի, լար, ճշ ածական են :

39. Ածականները սովորաբար գոյականէն ետքը կը դրուին, ու անոր հետ մէկ տեղ կը հոլովին, զոր օրինակ • այս իմաստուն • իմաստուն մարդ :

Եզակի.

Յոփնակի.

Ո.	Այր իմաստուն.	Արք իմաստունք.
Ս.	Առն իմաստնոյ.	Արանց իմաստնոյ.
Տ.	Առն իմաստնոյ.	Արանց իմաստնոյ.
Հ.	ՉԱյր իմաստուն.	ՉԱրս իմաստունա.
Բ.	ՉԱռնէ իմաստնոյ.	ՉԱրանց իմաստնոյ.
Գ.	Արամբ իմաստնով.	Արամբք իմաստնովք.



40. Բայց հարկ կ'ըլլայ շատ անգամ ածականը գոյականէն առաջ դնել, ան առեւն ածականն անսխալօք կը մնայ, զոր օրինակ.

Հասարակ ըարեկամ.            Հասարակ ըարեկամք.  
 Հասարակ ըարեկամի.           Հասարակ ըարեկամաց.  
 'ի Հասարակ ըարեկամէ.        Հասարակ ըարեկամօք.  
 Հասարակ ըարեկամաւ.

41. Մինակ ձեռքով ածականները գոյականէն առաջ ալ դրուելու ըլլան, անոր հետ մէկ տեղ կը հօլովին. զոր օրինակ. Մեք տուն, Ձեռք տան, Ձեռք տամք. Նոյ օրէնք, Նոյն օրինաց. Քաջ այր, Կաշի առն, Կաշաց արանց. Սուրբ քաղաք, սուրբ քաղաքի, եւ այլն :

42. Գոյականին քանակութիւնը ցուցնող ածականները թոսական կը կոչուին, եւ երեք տեսակ են. Բացարձակ, Դասական եւ Անշնեւական :

43. Ա. Բացարձակները գոյականին թիւը կամ քանի հատ ըլլալը կը ցուցնեն, եւ գրված խաւորները հետեւեալներն են :

	Մի	Երկու.	Երեք.	Չորք.
	Եւ	Յո+	Յո+	Յո+
Ո.	Մի.	Երկու.	Երեք.	Չորք.
Ս.	Միոյ, միով.	Երկուց.	Երից.	Չորից.
Տ.	Միոյ, միում.	Երկուց.	Երից.	Չորից.
Հ.	ՉՄի.	ՉԵրկուս.	ՉԵրիս.	ՉՉորս.
Բ.	'ի Միովէ.	յԵրկուց.	յԵրից.	'ի Չորից.
Գ.	Միով.	Երկուք.	Երիւք.	Չորիւք.



**Հինգ.**

**Վեց.**

	Եղ.	Յո+	Եղ.	Յո+
Ո.	Հինգ.	Հինգ.ք.	Վեց.	Վեց.ք.
Ս.	Հնգի.	Հնգից.	Վեցի.	Վեցից.
Տ.	Հնգի.	Հնգից.	Վեցի.	Վեցից.
Հ.	չ Հինգ.	չ Հինգս.	չ Վեց.	չ Վեցս.
Բ.	'ի Հնգէ.	'ի Հնգից.	'ի Վեցէ.	'ի Վեցից.
Գ.	Հնգիւ.	Հնգօք.	Վեցիւ.	Վեցիւ.ք.

**Եօթն.**

**Ութ.**

	Եղ.	Յո+	Եղ.	Յո+
Ո.	Եօթն.	Եօթանք.	Ութ.	Ութ.ք.
Ս.	Եօթան.	Եօթանց.	Ութի.	Ութից.
Տ.	Եօթան.	Եօթանց.	Ութի.	Ութից.
Հ.	չ Եօթն.	չ Եօթանս.	չ Ութ.	չ Ութս.
Բ.	յ Եօթանէ.	յ Եօթանց.	յ Ութէ.	յ Ութից.
Գ.	Եօթամք.	Եօթամք.ք.	Ութիւ.	Ութիւ.ք.

**Ինն.**

**Տասն.**

	Եղ.	Յո+	Եղ.	Յո+
Ո.	Ինն.	Ինուհք.	Տասն.	Տասուհք.
Ս.	Ըննի.	Ըննից.	Տասին.	Տասանց.
Տ.	Ըննի.	Ըննից.	Տասին.	Տասանց.
Հ.	չ Ինն.	չ Ինուհս.	չ Տասն.	չ Տասուհս.
Բ.	յ Ըննէ.	յ Ըննից.	'ի Տասնէ.	'ի Տասանց.
Գ.	Ըննիւ.	Ըննիւ.ք.	Տասամք.	Տասամք.ք.

**Մետասան, Տասնչորսի.**

**Եղակի.**

**Յո+նակի.**

Ո.	Մետասան.	Մետասան.ք.
Ս.	Մետասանի.	Մետասանից.



S.	Մետասանի.	Մետասանից.
Հ.	չ Մետասան.	չ Մետասանա.
Բ.	'ի Մետասանէ.	'ի Մետասանից.
Գ.	Մետասանիւ.	Մետասանիւք.

Մետասանին պէս կը հոլովին.

Երկտասան.	դասուելիս.
Երեքտասան.	դասուելիք.
Չորեքտասան.	դասնըչորս.
Հնգտասան.	դասնըհինգ.
Վեցտասան.	դասնըվեց:

Եօթներևտասան, դասուելիք.

Եղակի. Յոթնակի.

Ո.	Եօթներևտասան.	Եօթներևտասանք.
Ս.	Եօթներևտասանի.	Եօթներևտասանից.
Տ.	Եօթներևտասանին.	Եօթներևտասանից.
Հ.	չ Եօթներևտասան.	չ Եօթներևտասանա.
Բ.	յ Եօթներևտասանէ.	յ Եօթներևտասանից.
Գ.	Եօթներևտասանիւք.	Եօթներևտասանիւք.

Այսպէս կը հոլովին.

Ութներևտասան.	դասնութիւք.
Իններևտասան.	դասնեփնիւք.

Քասան.

	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Քասան.	Քասանք.
Ս.	Քասանի.	Քասանից.
Տ.	Քասանին.	Քասանից.
Հ.	չ Քասան.	չ Քասանա.
Բ.	'ի Քասանէ.	'ի Քասանից.
Գ.	Քասանիւք.	Քասանիւք.



Ա. յապէս կը հօլովին .

Երեսուն, երեսնի, երեսնիւ . երսուն .  
 Քառասուն, քառանի, քառանիւ . քառասուն .  
 Յիսուն, յիանի, յիանիւ . յիսուն .  
 Վաթսուն, վաթանի, վաթանիւ . վաթսուն .  
 Եօթանասուն, եօթանասնի, եօթանասնիւ . եօթանասուն .  
 Ութսուն, ութանի, ութանիւ . ութսուն .  
 Իննասուն, իննանի, իննանիւ . իննասուն .

Հարիւր .

Եզակի .

Յոթնակի .

Ո .	Հարիւր .	Հարիւրք .
Ս .	Հարիւրոց .	Հարիւրոց .
Տ .	Հարիւրոց .	Հարիւրոց .
Հ .	շ Հարիւր .	շ Հարիւրս .
Բ .	'ի Հարիւրոց .	'ի Հարիւրոց .
Գ .	Հարիւրով .	Հարիւրովք .

Ա. յապէս կը հօլովին .

Երկերիւր .	Երկուհարեւր .	Վեցհարիւր .	Վեցհարեւր .
Երեքհարիւր .	Երեքհարեւր .	Եօթնհարիւր .	Եօթնհարեւր .
Չորեքհարիւր .	Չորեքհարեւր .	Ութհարիւր .	Ութհարեւր .
Հինգհարիւր .	Հինգհարեւր .	Իննհարիւր .	Իննհարեւր .

Հազար .

Բիւր, ասոր հազար .

	Եզ .	Յոթ .	Եզ .	Յոթ .
Ո .	Հազար .	Հազարք .	Բիւր .	Բիւրք .
Ս .	Հազարի .	Հազարաց .	Բիւրու .	Բիւրուց .
Տ .	Հազարի .	Հազարաց .	Բիւրու .	Բիւրուց .
Հ .	շ Հազար .	շ Հազարս .	շ Բիւր .	շ Բիւրս .
Բ .	'ի Հազարէ .	'ի Հազարաց .	'ի Բիւրէ .	'ի Բիւրուց .
Գ .	Հազարաւ .	Հազարօք .	Բիւրու .	Բիւրուք .



44. Բ. Գասական թուականները գոյականին կարգը կամ ամերորդ ըլլալը կը ցուցնեն, եւ հետեւեալներն են.

**Առաջին.**

	Եղակի.	Յոհնակի.
Ո.	Առաջին.	Առաջինք.
Ս.	Առաջնոյ.	Առաջնոց.
Տ.	Առաջնոյ, ջնում.	Առաջնոց.
Հ.	չ Առաջին.	չ Առաջինս.
Բ.	յԱռաջնմէ, յԱռաջնոյ,	յԱռաջնոց.
Գ.	Առաջնով.	Առաջնովք.

**Առաջներորդ.**

	Եղակի.	Յոհնակի.
Ո.	Առաջներորդ.	Առաջներորդք.
Ս.	Առաջներորդի.	Առաջներորդաց.
Տ.	Առաջներորդի, դում.	Առաջներորդաց.
Հ.	չ Առաջներորդ.	չ Առաջներորդս.
Բ.	յԱռաջներորդէ.	յԱռաջներորդաց.
Գ.	Առաջներորդաւ.	Առաջներորդօք.

Առաջն բառին պէս կը հոլովի.

Վերջին, ջնոյ, ջնում, ջնով. ջինք, ջնոց, ջնովք:

Առաջներորդին պէս կը հոլովին ուրիշ մնացեալ գասական թուականները, զոր օրինակ.

Երկրորդ.	$\left. \begin{array}{l} \text{դի.} \\ \text{դաւ.} \\ \text{դք.} \\ \text{դաց.} \end{array} \right\}$	Ութերորդ.	$\left. \begin{array}{l} \text{դի.} \\ \text{դաւ.} \\ \text{դք.} \\ \text{դաց.} \end{array} \right\}$
Երրորդ.		Իններորդ.	
Չորրորդ.		Տասներորդ.	
Հինգերորդ.		Մետասաներորդ.	
Վեցերորդ.		Երկոտասաներորդ.	
Եօթներորդ.		Երեքտասաներորդ.	







ճակներուն վրայ եւին\* կամ եւեան մասնիկն աւել  
ցրներով կը շինուին, եւ իրենց ցոլցած թուոյն  
առինն ալ կը նշանակեն. զոր օրինակ, երկուքն  
երկուքն ալ ըսել է. երեւին՝ երեքն ալ, շրեւին՝  
չորսն ալ, ասանեւին՝ տասն ալ, եւայլն :

Անձներական թուականները միայն յոքնակի  
են, եւ հետեւեալ կերպով կը հոլովին .

Յոթնակի .

Ո.	երկուքին, երկուքեան.	երեքին, երեքեան.
Ս.	երկոցունց, ցուն.	երեցունց.
Տ.	երկոցունց.	երեցունց.
Հ.	չերկոսին, չերկոսեան.	չերեսին, չերեսեան.
Բ.	յերկոցունց.	յերեցունց.
Գ.	երկուքումք.	երեքումք.

46. Առնեւին, առնեւեան կը նշանակէ առնն ալ,  
եւ գոյականաբար միայն կը գործածուի\*\* :

\* Երկու թուականը մինակ «ին» մասնիկով անձներական  
կ'ըլլայ, ուստի երկուքն ըսուած է ոչ թէ երկեւին :

\*\* Ուրիշ երկու տեսակ թուականներ ալ կան, այսինքն  
ին կամ պարի: եւ ետի վերջաւորուածները :

Կին կամ պարի վերջաւորուածները կրկնական կը կոչուին .  
քանզի քանակութիւն մը թուական անունին ցոլցուցած թը-  
ւոյն չափ կրկնուած կը նշանակեն. զոր օրինակ, երկն կամ  
երկուքն, քանակութիւն մը երկու անգամ նոյնչափ կրկնուած  
կը նշանակէ. երեւին կամ երեւուքն, քանակութիւն մը երեք  
անգամ կրկնուած. շրեւին կամ շրեւուքն, քանակութիւն  
մը չորս անգամ կրկնուած կը նշանակեն :

Այսպէս կ'ըսուի, հնգեւին, վեցեւին, եօնեւին, եօնասն-  
եւին, եւ այլն :

Եւ վերջաւորուածները՝ բան մը այսչափ թուէ կամ հասէ



47. Թուականն ածականներն ալ սովորաբար գոյականէն ետքը գրուելով մէկտեղ կը հօլովին:

Մէ՛ եղակի գոյական կ'ուզէ, մնացած թըւականները սովորաբար յոքնակի գոյական կ'ուզեն, զոր օրինակ.

Եղակի.	Յոքնակի.
Ո. Այր մի.	Արք երկու.
Ս. Առն միոջ.	Արանց երկուց.
Տ. Առն միուս.	Արանց երկուց.
Հ. շ Այր մի.	շ Արս երկուս.
Բ. յ Առնէ միոջէ.	յ Արանց երկուց.
Գ. Արամբ միով.	Արամբք երկուք.
Յոքնակի.	Յոքնակի.
Ո. Արք վեց.	Արք քսան.
Ս. Արանց վեցից.	Արանց քսանից.
Տ. Արանց վեցից.	Արանց քսանից.
Հ. շ Արս վեց.	շ Արս քսան.
Բ. յ Արանց վեցից.	յ Արանց քսանից.
Գ. Արամբք վեցիւք.	Արամբք քսանիւք.

48. Թուականները, եթէ գոյականէն առաջ գրուին, կրնան մէկտեղ հօլովիլ եւ չը հօլովիլ:

բաղկացած կը նշանակեն. ուստի, եւեթմի՛ բան մը երկու թիւէ կամ հասէ բաղկացած. երբեմի՛ բան մը երեք թիւէ կամ հասէ. շրեմի՛ չորս թիւէ կամ հասէ բաղկացած կը նշանակէ:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ հնգեմի, վեցեմի, եօնեմի, հնգեդասանեմի, եւ այլն:

Կէն վերջաւորուած թուականները սովորաբար չեն հօլովիլ, իսկ պարբի՛ եւ եմի՛ վերջաւորուածները Բ. Հօլովման պէս կը հօլովին, այսպէս. Եօնպարբի, եօնպարբի, եօնպարբիս. Եօնշեմի, եօնեմի, եօնեմիս. եւ այլն:



զոր օրինակ , հօլովելով՝ Երևարք . Երևոց ա-  
րանց . շրեց զինուորաց . Եօնեանց սարկաւազաց .  
Երևոսասանից առաքելոց : Չհօլովելով հինգ հացիւ ,  
սասն արանց , Երևոսասան առաքելոց , եւ այլն :

Մէ՛ առաջ ալ դրուի , կը հօլովի . Մէ՛ այր ,  
Տոյ առն , Տով արամբ :

49. Գասականներն ալ գոյականէն ետքը ,  
երբեմն ալ առաջ դրուելով , միշտ եղակի գո-  
յական կ'ուղեն , ու մէկտեղ կը հօլովին , զոր  
օրինակ . Օր երբորդ , աւուր երբորդե , յօրէ երե-  
րորդե կամ երբորդո՛ճ աւուր . 'ի հինգերորդո՛ճ ամ-  
սեան , եւ այլն :

Անձներականները գոյականէն ետքը , եր-  
բեմն ալ առաջ դրուելով , միշտ յօքնակի գո-  
յական կ'ուղեն ու մէկտեղ կը հօլովին , զոր  
օրինակ . Որդիք երկո՛ւն , որդւոց երկոցո՛ւն , որդ-  
ւովք երկո՛ւմք . կամ , Երկո՛ւն որդիք , երկոցո՛ւն  
որդւոց , երկո՛ւմք որդւովք :

50. Տեսակ մը ածականներ ալ կան որոնք անորոշ  
կամ թշուկ կը կոչուին , եւ հետեւեալներն են .

Ամենայն .

Ա.ՅԼ .

	Եզ	Եզ	Յո՛ւ
Ո .	Ամենայն .	Ա.ՅԼ .	Ա.ՅԼք .
Ս .	Ամենայնի .	Ա.ՅԼոյ .	Ա.ՅԼոց .
Տ .	Ամենայնի .	Ա.ՅԼում .	Ա.ՅԼոց .
Հ .	ՉԱմենայն .	ՉԱ.ՅԼ .	ՉԱ.ՅԼս .
Բ .	ՅԱմենայնէ .	ՅԱ.ՅԼմէ .	ՅԱ.ՅԼոց .
Գ .	Ամենայնիւ .	Ա.ՅԼով .	Ա.ՅԼովք .



Այլ բառին պէս կը հոլովին հետեւեալ ան-  
րոշ ածականները .

Իւրաքանչիւր, բոյ, բոււմ, բմէ, բով. բք, բոց.  
Միւս, սոյ, սոււմ, սմէ, սով. սք, սոց:

Ոմն .

Ոք .

	Եղ.	Յո+	Եղ.	Յո+
Ո.	Ոմն.	Ոմանք.	Ոք.	Ոմանք.
Ս.	Ուրումն.	Ոմանց.	Ուրուք.	Ոմանց.
Տ.	Ումեմն.	Ոմանց.	Ումեք.	Ոմանց.
Հ.	չՈմն.	չՈմանս.	չՈք.	չՈմանս.
Բ.	յՈւմեմնէ.	յՈմանց.	յՈւմեքէ.	յՈմանց.
Գ.	Ոմամբ.	Ոմամբք.	Ոմամք.	Ոմամբք.

Իմն, ինչ.

Նոյն.

	Եղ. Ե- Յո+	Եղ.	Յո+
Ո.	Իմն, ինչ.	Նոյն.	Նոքին.
Ս.	Իրիք.	Նորին.	Նոցին, նոցունց.
Տ.	Իմիք.	Նմին.	Նոցին, նոցունց.
Հ.	չԻմն, չԻնչ.	չՆոյն.	չՆոսին.
Բ.	յԻմեքէ.	յՆմին.	յՆոցունց.
Գ.	Իւիք.	Նովին, նովիմբ.	Նովիմք, Նոքիմբք.

Նոյն բառին պէս կը հոլովին , սոյն , դոյն :

Ո՞վ, Ո՞ .

Որ .

Չինչ.

	Եղ.	Յո+	Եղ.	Յո+	Եղ.
Ո.	Ո՞վ, ո՞ .	Ո՞ք.	Որ.	Որք.	Չինչ.
Ս.	Ո՞յր.	Ո՞ց.	Որոյ.	Որոց.	Է՞ր.
Տ.	Ո՞ւմ.	Ո՞ց.	Որոււմ.	Որոց.	Ի՞մ.
Հ.	չՈ՞վ, զո՞ .	չՈ՞ս.	չՈր.	չՈրս.	Չի՞նչ.
Բ.	յՈւմէ.	յՈ՞ց.	յՈրմէ.	յՈրոց.	Ս.ս իմէ.
Գ.	Որո՞վ.	Որո՞վք.	Որով.	Որովք.	Ի՞ւ.



Միմեանց .

Իրերաց .

- Յոփնակի .
- Ո . Չոանի .
- Ս . Միմեանց .
- Տ . Միմեանց .
- Հ . շ Միմեանս .
- Բ . 'ի Միմեանց .
- Գ . Միմեամբք .

- Յոփնակի .
- Չոանի .
- Իրերաց .
- Իրերաց .
- շ Իրերացս .
- յ Իրերաց .
- Իրերօք .

Յ1. Ասոնք ալ գոյականներու հետ , առաջ կամ վերջը գրուելով կը հոլովին , զոր օրինակ .

Այր այլ , առն այլոյ , առն այլո՞ւմ , եւ այլն :

Այր ո՞ն , առն ուրո՞ւմ , առն ու՞մն , յառնէ ու՞մնէ , արամբ ո՞մմք . կամ , Այր ո՞ր , առն ուրուր , առն ու՞ր , յառնէ ու՞րէ . Արք ո՞մանր , արանց ո՞մանց , արամբք ո՞մմքր , զարս ո՞մանս .

Գործ ինչ , գործոյ իրէր , գործոյ ի՞րէր , 'ի գործոյ ի՞րէրէ , գործով ի՞րէր .

Նոյն բան , նորին բանի , ն՞րն բանի , 'ի ն՞րն բանէ , նո՞վին բանիւ . Նոյն բանք , նոցին բանից , նո՞վին բանիւք .

Որ տուն , որոյ տան , որո՞ւմ տան , յոր՞ե տանէ , որո՞վ տամբ . Որ տունք , որոյ տանց , որո՞վ տամբք :

Ո՞վ կամ ո՞ր , գոյականաբար կը վարուի . մինակ ո՞ր բառին հետ իբր ածական կը հոլովի այսպէս .

Ո՞վ կամ ո՞ր ո՞ր , ո՞յր ուրուք , ո՞ւմ ումեք , յո՞ւմ ումեքէ :

Չինչ ալ մինակ ինչ բառին հետ իբր ածական կը գործածուի այսպէս .

Չի՞նչ ինչ , է՞ր իրիք , է՞՞ իմիք , է՞ - իւիք :

Յ2. Միմեանց , իրերաց , բառերը գոյականաբար կը գործածուին .



Գ Լ Ո Ւ Խ Գ .

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

53. Դերանունն կ'ըսուին ան բառերը որոնք խօսքին մէջ առաջուց յիշուած բառի մը տեղ կը դրուին, նոյն բառը չկրկնելու համար. զոր օրինակ. Աստուած արդար է. անիկա յանցաւորները կը պատժէ. Տեսայ ան ճարտը՝ որ քեզի հետ էր. Աս խօսքերուն մէջ անիկա, որ, դերանունն են. քանզի առջինը (անիկա) Աստուած բառին տեղ դրուած է. իսկ երկրորդը (որ) ճարտ բառին տեղ.

54. Դերանունները դէժտ ալ կը ցուցնեն. եւ դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ. Առաջին դէմքն է խօսողը. երկրորդն է ան՝ որուն կը խօսուի. երրորդն է ան՝ որուն վրայով կը խօսուի.

55. Դերանունները շքտ տեսակ են. Էական, կամ Անձնական, Յոցական, Ստացական եւ Յարաբերական.

56. Ա. Էական դերանուններն են. Ես, դու, սա, դա, նա, ինքն, իւր.

Ե՞ն՝ առաջին դէմքի դերանունն է. դու՞ երկրորդ դէմքի. սա, դա, նա, ինքն, իւր՝ երրորդ դէմքի.

Էական դերանունները հետեւեալ կերպով կը հոլովին.



Ա. ԴԷՄՔ		Բ. ԴԷՄՔ		Գ. ԴԷՄՔ	
Եզ.	Յո+	Եզ.	Յո+	Եզ.	Յո+
Ո. Ես.	Մեք.	Դու.	Դուք.	Նա.	Նոքա.
Ս. Իմ.	Մեր.	Քո.	Ձեր.	Նորա.	Նոցա.
Տ. Ինձ.	Մեզ.	Քեզ.	Ձեզ.	Նմա.	Նոցա.
Հ. շիս.	շՄեզ.	շՔեզ.	շՁեզ.	շՆա	շՆոսա.
Բ. յիսէն.	'ի Մէնջ.'	'ի Քէն.	'ի Ձէնջ.'	'ի Նմանէ.	'ի Նոցանէ.
Գ. Ինեւ.	Մեօք.	Քեւ.	Ձեօք.	Նովաւ.	Նոքօք.

Գ. ԴԷՄՔ			
Եզ.	Յո+	Եզ.	Յո+
Ո. Ինքն.	Ինքեանք.	իւրնի.	Իւրեանք.
Ս. Ինքեան.	Ինքեանց.	Իւր, իւրեան.	Իւրեանց.
Տ. Ինքեան.	Ինքեանց.	Իւր, իւրեան.	Իւրեանց.
Հ. շինքն.	շինքեանս.	շիւրնի.	շիւրեանս.
Բ. յինքենէ.	յինքեանց.	յիւրմէ.	յիւրեանց.
Գ. Ինքեամք.	Ինքեամքք.	Իւրեւ, իւրեւ եաւ, իւրեամք.	Իւրեամքք.

Սա, որս դերանունները նա ին պէս կը հոլովին.  
 57. Բ. Յուցական դերանունն է՝ Այս, այդ,  
 այն որոնք հետեւեալ կերպով կը հոլովին.

	Եզակի.	Յոթնակի.
Ո.	Այս.	Այս, այսոքիկ.
Ս.	Այսր, այսորիկ.	Այսց, այսոցիկ.
Տ.	Այսմ, այսմիկ.	Այսց, այսոցիկ.
Հ.	շԱյս.	շԱյս, շայսոսիկ.
Բ.	յԱյսմ, յայսմանէ.	յԱյսց, յայսցանէ.
Գ.	Այսու, այսուիկ.	Այսու, այսոքիւք.



Եղակի.

- Ո. Այդ.
- Ս. Այդր, այդորիկ.
- Տ. Այդմ, այդմիկ.
- Հ. շԱյդ.
- Բ. յԱյդմ, յայդմանէ.
- Գ. Այդու, այդուիկ.

Յոփնակի.

- Այդք, այդքիկ.
- Այդց, այդցիկ.
- Այդց, այդցիկ.
- շԱյդ, շայդասիկ.
- յԱյդց, յայդցանէ.
- Այդու, այդքիւք.

Եղակի.

- Ո. Այն.
- Ս. Այնր, այնորիկ.
- Տ. Այնմ, այնմիկ.
- Հ. շԱյն.
- Բ. յԱյնմ, յայնմանէ.
- Գ. Այնու, այնուիկ.

Յոփնակի.

- Այնք, այնքիկ.
- Այնց, այնցիկ.
- Այնց, այնցիկ.
- շԱյնս, շայնսսիկ.
- յԱյնց, յայնցանէ.
- Այնու, այնքիւք.

Յուղականներն, իբրեւ ածական, գոյականներու հետ ալ մէկտեղ հոլովելով կը գործածուին, եւ թէ առաջ թէ ետքը կրնան դրուիլ: Եթէ առաջ դրուին՝ կարճ հոլովները կը գործածուին. եթէ ետքը դրուին՝ երկայնները. եւ ան ատեն գոյականին վրայ «, դ, ն» գիրերը կ'աւելնան. զոր օրինակ.

ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

Եղակի.

- Ո. Այս տուն.
- Ս. Այսր տան.
- Տ. Այսմ տան.
- Հ. շԱյս տուն.
- Բ. յԱյսմ տանէ.
- Գ. Այսու տամք.

Յոփնակի.

- Այսք տունք.
- Այսց տանց.
- Այսց տանց.
- շԱյս տունս.
- յԱյսց տանց.
- Այսու տամքք.



Եղակի.

- Ո. Այդ տուն.
- Ս. Այդր տան.
- Տ. Այդմ տան.
- Հ. շԱյդ տուն.
- Բ. յԱյդմ տանէ.
- Գ. Այդու տամբ.

Յոփնակի.

- Այդ տունք.
- Այդց տանց.
- Այդց տանց.
- շԱյդ տունս.
- յԱյդց տանց.
- Այդու տամբք.

Եղակի.

- Ո. Այն տուն.
- Ս. Այնր տան.
- Տ. Այնմ տան.
- Հ. շԱյն տուն.
- Բ. յԱյնմ տանէ.
- Գ. Այնու տամբ.

Յոփնակի.

- Այն տունք.
- Այնց տանց.
- Այնց տանց.
- շԱյն տունս.
- յԱյնց տանց.
- Այնու տամբք.

ՎԵՐՁԸ ԴՐՈՒԱԾ

Եղակի.

- Ո. Տունս այս.
- Ս. Տանս այսորիկ.
- Տ. Տանս այսմիկ.
- Հ. շՏունս շայս.
- Բ. 'ի Տանէս յայսմանէ.
- Գ. Տամբս այսուիկ.

Յոփնակի.

- Տունքս այսորիկ.
- Տանցս այսոցիկ.
- Տանցս այսոցիկ.
- շՏունս շայսոսիկ.
- 'ի Տանցս յայսցանէ.
- Տամբքս այսորիւք.

Եղակի.

- Ո. Տունդ այդ.
- Ս. Տանդ այդորիկ.
- Տ. Տանդ այդմիկ.
- Հ. շՏունդ շայդ.
- Բ. 'ի Տանէդ յայդմանէ.
- Գ. Տամբդ այդուիկ.

Յոփնակի.

- Տունքդ այդորիկ.
- Տանցդ այդոցիկ.
- Տանցդ այդոցիկ.
- շՏունսդ շայդոսիկ.
- 'ի Տանցդ յայդցանէ.
- Տամբքդ այդորիւք.



	Եղակի.	Յոթնակի.
Ո.	Տուճնն այն.	Տուճքն այնոքիկ.
Ս.	Տանն այնորիկ.	Տանցն այնոցիկ.
Տ.	Տանն այնմիկ.	Տանցն այնոցիկ.
Հ.	շ Տուճնն շայն.	շ Տուճանն շայնոսիկ.
Բ.	'ի Տանէն յայնմանէ.	'ի Տանցն յայնցանէ.
Գ.	Տամբն այնուիկ.	Տամբքն այնոքիւք.

58. Գ. Ստացական կամ յարկացոցիչ կոչուած դերանուններն են՝ իմ, քո, յեր, յեր, իւր, Ասոնք հետեւեալ կերպով կը հոլովին .

	Եղակի.				
Ո.	իմ.	քո.	Մեր.	Ձեր.	Իւր.
Ս.	իմոյ.	քոյ.	Մերոյ.	Ձերոյ.	Իւրոյ.
Տ.	իմում.	քում.	Մերում.	Ձերում.	Իւրում.
Հ.	շ իմ.	շ քո.	շ Մեր.	շ Ձեր.	շ Իւր.
Բ.	յիմմէ.	'ի քումմէ.	'ի Մերմէ.	'ի Ձերմէ.	յիւրմէ.
Գ.	իմով.	քով.	Մերով.	Ձերով.	Իւրով.

	Յոթնակի.				
Ո.	իմք.	քոյք.	Մերք.	Ձերք.	Իւրք.
Ս.	իմոց.	քոց.	Մերոց.	Ձերոց.	Իւրոց.
Տ.	իմոց.	քոց.	Մերոց.	Ձերոց.	Իւրոց.
Հ.	շ իմս.	շ քոյս.	շ Մերս.	շ Ձերս.	շ Իւրս.
Բ.	յիմոց.	'ի քոց.	'ի Մերոց.	'ի Ձերոց.	յիւրոց.
Գ.	իմովք.	քովք.	Մերովք.	Ձերովք.	Իւրովք.

Ստացականներն ալ, իբր ածական, դոյալկաններէն առաջ կամ ետքը դրուելով, մէկ տեղ կը հոլովին, այսպէս .



ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

Եղակի.	Յոփնակի.
Ո. Իմ տուն.	Իմ տունք.
Ս. Իմոյ տան.	Իմոց տանց.
Տ. Իմում տան.	Իմոց տանց.
Հ. շ Իմ տուն.	շ Իմ տունս.
Բ. յ Իմէ տանէ.	յ Իմոց տանց.
Գ. Իմով տամք.	Իմովք տամքք.

ԵՏՔԸ ԴՐՈՒԱԾ

Եղակի.	Յոփնակի.
Ո. Տուն իմ.	Տունք իմ.
Ս. Տան իմոյ.	Տանց իմոց.
Տ. Տան իմում.	Տանց իմոց.
Հ. շ Տուն իմ.	շ Տունս իմ.
Բ. 'ի Տանէ իմէ.	'ի Տանց իմոց.
Գ. Տամք իմով.	Տամքք իմովք.

Այսպէս կ'ըլլան միւս ստացականներն ալ :  
 59. Դ. Յարաբերական դերանունն է ոչ կամ  
 „ , եւ հետեւեալ կերպով կը հոլովի .

Եղակի.	Յոփնակի.
Ո. Որ, ո.	Որ, որք, ոյք.
Ս. Որոյ, ոյր.	Որոց, ոյց.
Տ. Որում, ում.	Որոց, ոյց.
Հ. շ Որ, շո.	շ Որ, շորս, շոյս.
Բ. յ Որմէ, յումմէ.	յ Որոց, յոյց.
Գ. Որով.	Որովք.



ԳԼՈՒԽ Դ.

ՆԱԽԳԻԻՒՄ ԿԱՍ ՆԱԽԱԳԻՐՈՒԹԻՒՆ

60. Նախորդի կամ Նախադրութիւնն կ'ըսուին անբառերը որոնք գործողութեան մը պարագաները, զոր օրինակ տեղը, ժամանակը, եղանակը, պատճառը, կը ցուցնեն :

61. Նախադրութիւնները մինակ չեն գործածուիր, այլ իրենցմէ ետքը բառ մը կ'ուղեն, ապա թէ ոչ իմաստ մը չեն տար. զոր օրինակ, Վասն, համար, նախադրութիւն է. եւ առանձին իմաստ մը չի տար. բայց երբ կ'ըսեմ, վասն Աստուծոյ, Աստուծոյ համար, վասն «իւրոյ», սիրոյ համար, իմաստ մը կ'իմանամ :

62. Նախադրութեան ուղած բառը նախադրութեան ինքեւ կը կոչուի, ուստի վերի օրինակներուն մէջ, Աստուծոյ, «իւրոյ», բառերը վասն նախադրութեան խնդիրն են :

63. Գլխաւոր նախադրութիւնները հետեւեալներն են .

Ի, յ, ց, դ, առ, ընդ, ըստ

Դարձեալ,

Առաջի. առջեւը.

Զինի } ետեւէն.

Ի վերայ. վրան.

Ի մէջ } ձեւ.

Ի միջի }



Ի ներքոյ արեւ  
 Սրտաքոյ արեւ  
 Յանդիսան արեւ  
 Փոխանակ արեւ  
 Յետոյ Երեւ  
 Յառաջ քան զ } (քանէ մը) արեւ  
 Նախ քան զ }  
 Մինչեւ 'ի } թիւն, ինչուան  
 Մինչեւ ց }  
 Ի վեր, 'ի վերոյ քան զ (քանէ մը) վեր  
 Յետ Երեւ  
 Ի ձեռն յետոյ  
 Գաղտ Գաղտ  
 Հակառակ } արեւ  
 Ընդդէմ }  
 Հանդերձ Թիւրեղ  
 Շուրջ զ Բարբեւեւ  
 Վասն }  
 Յարազս } Կամար  
 Սակս }

Ի 26  
 Ի 27  
 Ի 28

ԳԼՈՒԽ Ե.

Բ Ա Յ

64. Բայ կ'ըսուին ան բառերը որոնք լինել կամ լուր կը ցուցնեն . զոր օրինակ , Սերէճ , կը սիրեմ . Շրճճ , կը սրտտիմ , բան մը լինել կը ցուցնեն . Եճ , եմ . Հիւանդանոց , կը հիւրնդնամ , բան մը ըլլալ կը ցուցնեն . ուստի բայ են .

65. Բայերը երեք տեսակ են . Էական բայ , Ներգործական բայ , եւ Չեղոյ բայ .  
 Էական բայն է Եճ :



Ներգործական բայերը շատ են , եւ ամեն ներգործական բայ կրաւորական կ'ունենայ :

Ներգործականը գործողութիւնն ընել կը ցուցնէ . կրաւորականը գործողութիւնը կը ել ( ըլլալի ) կը ցուցնէ . զոր օրինակ , Սերե՛մ , կը սիրեմ , Ներգործական է . Սերե՛մ , կը սիրուիմ , կրաւորական է :

Չեղո՛ք բայերէն ոմանք ընել կը ցուցնեն . ինչպէս՝ Շրջե՛մ , մտնե՛մ , երթա՛մ . ոմանք ալ ըստ կը ցուցնեն , զոր օրինակ , Հիւանդանա՛մ , Ռուանի՛մ , «եանա՛մ» : Բայց Չէզոք բայերը կրաւորական չեն կրնար ունենալ :

66. Բայերն ունին թիւ , Դե՛մ , Ժամանակ եւ Եղանակ :

67. Թիւը՝ եղակին եւ յոքնակին է . զոր օրինակ , Սերե՛մ , «երե՛ս» , «երե՛ք» , կը սիրեմ , կը սիրես , կը սիրէ , եղակի են . Սերե՛մք , «երե՛քք» , «երե՛ն» , կը սիրենք , կը սիրէք , կը սիրեն , յոքնակի են :

68. Դե՛մք երեք է , առաջին , երկրորդ , երրորդ . զոր օրինակ , «երե՛մ» , կը սիրեմ , առաջին դէմք է «երե՛ս» , կը սիրես , երկրորդ դէմք է «երե՛ք» , կը սիրէ , երրորդ դէմք է : Այսպէս ալ յոքնակիին մէջ :

69. Ժամանակը բուն երեք է . Ներկայ , Անցեալ , Ապառնի : Ներկան՝ հիմակուանը կը ցուցնէ , զոր օրինակ , «երե՛մ» , կը սիրեմ , ներկայ է : Անցեալն՝ անցածը կը ցուցնէ , զոր օրինակ , «երեցի՛ք» , սիրեցի , անցեալ է : Ապառնին՝ գալիքը կը ցուցնէ , զոր օրինակ , «երեցեցի՛ք» , պիտի սիրեմ , ապառնի է :



Անցեալք երկու է • Անկարար անցեալ որ է սիրէի ,  
 կը սիրէի • եւ Կարարեալ անցեալ որ է սիրեցի , սիրեցի •  
 70 • Եղանակը չորս է • Սահմանական , Հրամայական ,  
 Սորադասական եւ Դերբայ :

Սահմանականը , Հրամայականը եւ Սորադասականը  
 դէմք ունին , եւ դիմատոր բայ կը կոչուին • իսկ  
 Դերբայը դէմք չունի , ուստի եւ անդէ՛մ բայ կը  
 կոչուի :

Դերբայը երեք է • Անորէ՛ւ դերբայ , Անցեալ  
 դերբայ եւ Սպառնի դերբայ • զոր օրինակ , Սե-  
 ռէ՛ւ անորի՛շ դերբայ է • Սերեալ՛ անցեալ դեր-  
 բայ է • Սերեալ՝ ապառնի դերբայ :

71 • Բայի մը ինչ ընէ , ինչ դէ՛մ , ինչ ժամանակ  
 եւ ինչ եղանակ ըլլալը՝ բային վերջաւորութեանը  
 փոխուելէն կը ճանչցուի :

Թիւ , դէմք , ժամանակ եւ եղանակ ցուց-  
 նելու համար բային վերջաւորութեանը փոխ-  
 ուելուն՝ Էորդոտ-Նիւն կ'ըսուի :

72 • Էորդոտ-Նիւնը , այսինքն՝ բայերուն վեր-  
 ջաւորութեան կերպը , ըստ է : Բայերէն ու  
 մանք ՚՛՛ կը վերջաւորին , զոր օրինակ , սիրե՛մ ,  
 հատանե՛մ • ոմանք ՚՛՛ կը վերջաւորին , զոր օրի-  
 նակ , խօսե՛մ , ուսանե՛մ • ոմանք ա՛մ կը վերջաւո-  
 րին , զոր օրինակ , աղա՛մ , խոստանա՛մ • ոմանք  
 ալ ա՛մ կը վերջաւորին , զոր օրինակ , թողա՛մ ,  
 ընթեռնա՛մ :

73 • Բայերուն մեծ մասը կանոնաւոր է , ոմանք  
 ալ անկանոն են :



74. ԷՍԿԱՆ ԲԱՅ

ԵՄ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

Կատարելաւ անցեալ:

Դէ՛՛՛.  
 Ա. եմ.  
 Եղ. Բ. ես.  
 Գ. է.  
 Ա. եմք.  
 Յ+. Բ. էք.  
 Գ. են.

Դէ՛՛՛.  
 Ա. եղէ.  
 Եղ. Բ. եղեր.  
 Գ. եղեւ.  
 Ա. եղաք.  
 Յ+. Բ. եղէք.  
 Գ. եղեն.

Անկատար անցեալ:

Ապագանի.

Ա. էի.  
 Եղ. Բ. էիր.  
 Գ. էր.  
 Ա. էաք.  
 Յ+. Բ. էիք.  
 Գ. էին.

Ա. եղէց.  
 Եղ. Բ. եղիցիս.  
 Գ. եղիցի.  
 Ա. եղիցուք.  
 Յ+. Բ. եղիջիք.  
 Գ. եղիցին.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Դէ՛՛՛.  
 Եղ. Բ. Լեր, եղիջիր, լիջիր\*  
 Մի լինիր.

Դէ՛՛՛.  
 Յ+. Բ. Լերուք, եղերուք,  
 լիջիք. Մի լինիք.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա. իցեմ.  
 Եղ. Բ. իցես.  
 Գ. իցէ.

Ա. իցեմք.  
 Յ+. Բ. իցէք.  
 Գ. իցեն.

\* Ե՛՛ քային բուն հրամայականն է եր, երուք, եք. բայց ասոնք ոչնչ քառին հետ գործածուած են. Ողջ եր, ողջ եք, ողջ երուք:



ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ.	Անդէ՛՛. Լինել.
ԱՆՅԵԱԼ ԴԵՐԲԱՅ.	Անդէ՛՛. Լեալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ	Անդէ՛՛. Լինելոց.

ԿԱՆՈՆԱԻՈՐ ԲԱՅԵՐ

ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

75. Առաջին լծորդու թեան այսինքն՝ է՛՛ վերջ  
 շաւորած բայերը երկու ձեւ ունին . է՛՛ եւ ա  
 ղէ՛՛ . զոր օրինակ . սիրէ՛՛ , հատա՛նէ՛՛ :

Ա. Ձեի

Բ. Ձեի

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Դէ՛՛.

Ներկայ.

Ա. Սիր-եմ.	Հատ-անեմ.
Եզ. Բ. Սիր-ես.	Հատ-անես.
Գ. Սիր-է.	Հատ-անէ.
Ա. Սիր-եմք.	Հատ-անեմք.
Յ+. Բ. Սիր-էք.	Հատ-անէք.
Գ. Սիր-են.	Հատ-անեն.

Դէ՛՛.

Անկատար անցեալ.

Ա. Սիր-էի.	Հատ-անէի.
Եզ. Բ. Սիր-էիր.	Հատ-անէիր.
Գ. Սիր-էր.	Հատ-անէր.
Ա. Սիր-էաք.	Հատ-անէաք.
Յ+. Բ. Սիր-էիք.	Հատ-անէիք.
Գ. Սիր-էին.	Հատ-անէին.

Կատարեալ անցեալ.

Ա. Սիր-եցի.	Հատ-ի.
Եզ. Բ. Սիր-եցիր.	Հատ-եր.
Գ. Սիր-եաց.	Հատ կամ եհատ.



Դե՛՛՛.

Ա.	Սիր-եցաք.	Հատ-աք.
Յ՜.	Բ. Սիր-եցէք.	Հատ-էք.
	Գ. Սիր-եցին.	Հատ-ին.

Ապարանի.

Ա.	Սիր-եցից.	Հատ-ից.
Ե՞.	Բ. Սիր-եսցես.	Հատ-ցես.
	Գ. Սիր-եսցէ.	Հատ-ցէ.
Ա.	Սիր-եսցուք.	Հատ-ցուք.
Յ՜.	Բ. Սիր-եսցիք*.	Հատ-ցիք.
	Գ. Սիր-եսցեն.	Հատ-ցեն.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ե՞.	Բ. Սիր-եա,	Հատ,
	մի Սիր-եր.	մի Հատ-աներ.
Յ՜.	Բ. Սիր-եցէք,	Հատ-էք,
	մի Սիր-էք.	մի Հատ-անէք.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ա.	Սիր-իցեմ.	Հատ-անիցեմ.
Ե՞.	Բ. Սիր-իցես.	Հատ-անիցես.
	Գ. Սիր-իցէ.	Հատ-անիցէ.
Ա.	Սիր-իցեմք.	Հատ-անիցեմք.
Յ՜.	Բ. Սիր-իցէք.	Հատ-անիցէք.
	Գ. Սիր-իցեն.	Հատ-անիցեն.

\* Բոլոր բայերուն ապառնի յոքնակի երկրորդ գէմքը մի-անգամայն հրամայական է. ուստի «եբ-ձե՛, հարձե՛, խօ-ե-» ձե՛, «-ձե՛, եւ այլն, սիրեցէք, կտրեցէք, խօսեցէք ալ կը նշանակեն. Նոյնպէս վերջի + գերը ըի փոխուելով հրամայա-կանին եղակին կ'ըլլայ. ուստի կ'ըսուի. «եբ-ձեբ, հարձեբ, խօ-ե-ձեբ, «-ձեբ, եւ այլն. եւ՝ սիրեա, հատ, խօսեաց, ուսիր, կը նշանակեն:



ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ.	Սիր-ել.	Հատ-անել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ.	Սիր-եալ*.	Հատ-եալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ.	Սիր-ելոց.	Հատ-անելոց.

Ասոնց պէս կը հոլովին հետեւեալ կանոնաւոր բայերը :

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

Աղատ-եմ.	Տես-անեմ.
Բժշկ-եմ.	Բեկ-անեմ.
Գան-եմ.	Արկ-անեմ.

ԶԻՋՈՔ

Ամաչ-եմ.	Անց-անեմ.
Գոչ-եմ.	Հաս-անեմ.
Ննջ-եմ.	Ել-անեմ.

կուն կամ բանի մը զբայով կը նշանակէ. զոր օ-  
րինակ.

Զինչ է այս զոր լսեմս զքե՛ն. աս քու վրայովդ  
լսածս ինչ է. Տրանջէին զճամէ. անոր վրայով կը  
տրանջէին. Բերէին համբաւ չար զՅովսէփայ. Ել համ-  
բաւ զճամէ. Սպասէին որսալ բանս ինչ 'ի բե-  
րանոյ նորա զի չարախօսեացեն զճամէ. անոր բեր-  
նէն խօսք մը որսալու կը սպասէին, որ անոր զբայով  
չարախօսութիւն ընեն:

Գ. Զ նախադրութիւնը գործիականով կը  
նշանակէ. 1<sup>o</sup>. Անորոշ ժամանակ մը. զոր օրի-  
նակ.

Յարուցեալ զՔչ գիշերաւ. կէս գիշերուան ատեն-  
ները. Զձլառարք ծագեաց լոյս. կէսօրուան ատենները  
լոյս ծագեց:

Այսպէս կ'ըսուի.

Զհասարակ աւուրք. Զմիջօրէիւ. Զհասարակ գի-  
շերաւ. Զմիջոցաւ ճանապարհին. Զայնու ժամանա-  
կաւ, կը նշանակեն. կէս օրուան, կէս գիշերուան  
ատենները. ճամբուն կէս եղած ատենները. Ան ա-  
տենները:



2. Բողոքաբեր , զոր օրինակ .

Ի խոնել շնորհաւ ժողովրդեանն՝ ինքն կայր առ  
ժողովին . ժողովուրդին անոր Բողոքիւրդ զիգուած  
ատենը : Առ զիւրեւ յորոյ վերայ անկեալն դնէր .  
Պատեաց շնորհք ահ . Անկաւ զպարանոցաւ նորա :

Ա.Ռ.

Ա. Ա.Ռ. նախադրութիւնը է կամ , նախադ-  
րութեան տեղ կը դործածուի երբ խօսքն ան-  
ձանց վրայ է :

Երբ բայր շարժում մը կը նշանակէ , առ նա-  
խադրութիւնը թէ եղակիի և թէ յոքնակիի  
մէջ անորոշ հայցական կ'ուղէ , զոր օրինակ .

Բարեկամ իմ եկն առ իս յուզուոյ . Բարեկամս դըր-  
ակն ինձի կամ քոսնս եկաւ : Յորժամ երթիցես առ  
իշխանն . Երբ իշխանին կ'երթաս : Առջեաց առ ինքն զմի  
'ի ծառայիցն : Յղեցին առ նոսա արա : Մատեան առ  
ժարիսեցիս : Ընթացան առ ուղիկեցան :

Բ. Ա. նախադրութիւնը եղակիի մէջ տրա-  
կան , յոքնակիի մէջ անորոշ հայցական խնդրով  
ուղի կը նշանակէ , զոր օրինակ .

Նկաց առ նճա աւուրս երկուս . Երկու օր անոր քով  
կեցաւ : Առ առն մեղաւորի եւնուա լուծանել . Մեղա-  
ւոր մարդու քով կամ քոսնս օթեւան ընելու մտաւ :  
Բնակեցաւ առ Եղբօր իւրոսմ . Եղբօրը քով բնակեցաւ :  
Ծառայեցի առ Էղ : Բոս քով ծառայութիւն ըրի Ե-  
կաց առ նոսա : Նստէր առ դրամն . Իրանը քով կեցաւ :  
Կայր առ ժողովին , առ խաչին : Սպասէին առ դոստա :

Գ. Ա. սեռականով՝ համար կամ պարմարեալ կը  
նշանակէ . զոր օրինակ .



Աւ ամօթոյ փախչին 'ի նմանէ. Խիպերնէն կը փախչին: Աւ նախանձու մատնեցին զնա. Նախանձու համար մատնեցին: Աւ իմոյ յիշատակի. Իմ յիշատակիս համար:

Աս մտքով երբեմն առանց շի հայցական ալ կ'առնէ, մանաւանդ աներեւոյթները, զոր օրինակ .

Աւ սէր քո արարի զայդ. Քու սիրոյդ համար ըրի: Աւ գութ Փիլիպեան աղգին՝ Փիլիպպոս անուանեցին. Փիլիպեան ցեղին սիրոյն համար: Ոչ թէ աւ ատել ասեմ. Ոչ թէ ատելուս համար կ'ըսեմ: Ուլ 'ի ձէնջ աւ հողալ իւրում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի. Ո՞վ հողալովը իր հասակին (պոյին) վրայ կրնայ կանգուն մը աւելցնել: Աւ չժուժել ծախուցն եղեւ փախստական. Ծախքին չղիմանալէն՝ առաւ քալեց: Աւ չղիտանա եկեր: Աւ ցաւս իւր ճչել: Ոչ աւ ցասունն ինչ, քաւ լիցի:

Բ. Աւ կամ աւ 'ի բացառականով 1<sup>o</sup>. Համար կը նշանակէ, զոր օրինակ .

Նդովեաց ղթղենին աւ օրինակէ. Թղենին օրինակ ըլլալու համար անիծեց: Աւ աւակէ շրջեցուցանէին. Խայտառակութեան համար կը պատեցնէին: Աւ եղեռանէ նորա եղեւ. Անոր մնասուն համար եղաւ: Աւ ականէ ծառայել. Երեսպաշտութեան (միւտահանէ) համար ծառայել: Աւ 'ի չղոյէ հիւթոյ. Հիւթ չունենալուն համար:

2<sup>o</sup>. Դարձեալ աւ 'ի բացառականով կողմէն կը նշանակէ .

Անհնարինքն աւ 'ի մարդկանէ. Մարդոց կողմանէ անկարելիները: Ոչ տկարացի աւ յԱստուծոյ ամե-



նայն բան. Աստուծոյ կողմանէ բան մը անկարելի չէ:

Ե. Ա. զործիականով կը նշանակէ . 1<sup>o</sup> Մէկուն կամ բանի մը **աբեղը**, զոր օրինակ .

Ա. Աբիադարաւ քահանայապետիւ. Ա. նովաւ լինէր Գեւղալիոնեան ջրհեղեղն. Հեթանոսութեան սկիզբն **ա** Թարայիւ, հարբ Աբրահամու եղեւ: Ա. կենդանութեամբ առն իւրոյ:

2<sup>o</sup> Ք. Ք. 'ի վեր, կամ երեան 'ի վեր (մակերեւոյթի ն վրայէն), զոր օրինակ .

Անց **ա** նովաւ. Անոր քովէն անցաւ:

Ա. յապէս կ'ըսուի .

Քերել **ա** ափամբք. Եղերքն 'ի վեր (գըյը սըրա) երթալ. Նաւել **ա** եղերք. Գնային **ա** որմովն. Նրատէր **ա** ճանապարհաւն:

3<sup>o</sup> Հաճեապոստիւն, զոր օրինակ .

Զինչ է յարդ **ա** ցորենով. Յարդը ցորենին քով ինչ պիտի ըլլայ: Արդարացաւ ապատամբութիւնն Իսրայելի **ա** ապատամբութեամբն Յուդայ. Իսրայէլին ապատամբութիւնը՝ Յուդայի ապատամբութեան նայելով արդարացաւ: Ա. յա փոքր ինչ է **ա** նովաւ. Անոր նայելով ափկայ փոքր բան է:

### ԸՆԴ

Ա. Ընդ սեռական խնդրով **ի** փանակ, **ա** բեղը կը նշանակէ, զոր օրինակ .

Թագաւորեաց որդի նորա ընդ նորա. Արդին ա նոր **ա** բեղը թագաւորեց: Ա. կն ընդ ական եւ ատամն ընդ ատաման. Աչքի **ա** բեղ աչք եւ ակռայի **ա** բեղ ակռայ: Զայն առեալ տայես ընդ իմ եւ ընդ քո: Առ



զմի 'ի կողից նորա եւ ելից ընդ այնր մարմինս. Այն նոցա ընդ հասուցման բարեաց գործոց լինիցի. Ընդ ամենայն դատարկ բանի համարա տացեն. Եւ մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս:

Բ. Ընդ եղակիի մէջ տրականով, յոքնակիի մէջ հայցականով հետք կը նշանակէ, զոր օրինակ.

Հանին ընդ նմա 'ի խաչ երկուս աւագակա. Անոր հետ երկու աւագակ խաչը հանեցին: Եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւնս գորաց երկնաւորաց. Բազում մաքսաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի եւ ընդ աշակերտս նորա. Ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէ եւ ըմպէ. Ես ընդ ձեզ եմ դամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի:

Գ. Ընդ անորոշ հայցականով կը նշանակէ. 1<sup>o</sup>. Բանի մը մէջէն կամ մէջ տեղէն, եւ աշխարհաբար բացառականով կը թարգմանուի, զոր օրինակ.

Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. Քու հողիէդ ալ սուր պիտի անցնի: Չանացարուք մտանել ընդ նեզ գունն. Նեզ գունէն: Գնաց ընդ արտորայան 'ի շարաթու. Սրտերուն ճղէն: Եմուտ ընդ պատուհանն 'ի ներքս. Պատուհանէն ներս: Ընդ եղեգան փող բոց ելանէր. Եղեգին ճղէն: Ընդ մէջ կարել. Ընդ երկուս կարել, բաժանել:

2<sup>o</sup>. Ընդ արձակութիւն կամ տարածութիւն, զոր օրինակ.

Ել հրամանս յԱւգոստոս կայսերէ աշխարհագիրս առնել ընդ ամենայն տիեզերս. Օգոստոսէն հրաման ելաւ որ բոլոր աշխարհի վրայ աշխարհագիրս ըլլայ:



Ել համբաւ դնմանէ ընդ ամենայն կողմանս գաւա-  
ռին. Անոր լուրը գաւառին ամեն կողմը տարածուե-  
ցաւ: Քստմունքս գնան ընդ անդաման. Բոլոր ան-  
դամներուն ձրայ գող մը կու գայ:

Այսպէս կ'ըսուի .

Շրջել ընդ քաղաքս, ընդ դեօղս, ընդ երկայնու-  
թիւն գաշտին, ընդ եղբ ծովուն. Գնալ ընդ ցածադ,  
ընդ ծով, ընդ ճանապարհ, ընդ երեսս գաշտին:

3<sup>o</sup>. Անորոչ ժամանակ մը, կամ դէպ այս ինչ  
ատեն կամ ժամանակ, զոր օրինակ .

Ընդ այն ժամանակս, ընդ առաւրտն ընդ այնուտի, ընդ ե-  
րեկս, ընդ այգն, ընդ առաւօտն, ընդ ծախել արեղականն,  
ընդ երեկս, ընդ առաւօտս:

4<sup>o</sup>. Շարունակութիւն ժամանակի, զոր օրի-  
նակ .

Ընդ աճս որսան, ընդ աճս Բաղտ-ճս, ընդ Բեշերն ողջոյն:

5<sup>o</sup>. Կողմէն, դիւէն, զոր օրինակ .

Ընդ հեռիս, ընդ հարաս, ընդ արեւելս:

6<sup>o</sup>. Երկու բան իրարու կցել, զոր օրինակ .

Կարել ընդ ճորթ. Կապել ընդ նաան. Տուն ընդ որսան  
կցել. Անկցի ժողովուրդն այր ընդ այր. որոնք կը նը-  
շանակեն, Մորթին հեռ կարել. Նաւին հեռ կապել.  
Տուն տունի հեռ կցել, եւ այլն:

7<sup>o</sup>. Միանգամայն, ամենը մէկէն, զոր օրինակ .

Ընդ այր եւ ընդ կին եւ ընդ ճանկորի. Երիկմարդ, կը-  
նիկմարդ ու տղայք միանգամայն: Ընդ հեթեալ եւ  
ընդ հեթեալ. Ընդ մեծնայն՝ հարիւր կանգուն. Ընդ ա-  
մենը՝ հարիւր կանգուն: Ընդ բնաս՝ չորեքհարիւր այր.  
Բոլորը՝ չորս հարիւր մարդ:



Տ՞. Երկու բանի մէջ տեղը , զոր օրինակ .

Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ +եղ: Ընդ հոգիսս իմ եւ ընդ հոգիսս քո. իմ եւ քու, իմ հովիւներուս եւ քու հովիւներուդ Տեղաբեղը կռիւ չըլլայ: Է այն ընդ կարէս եւ ընդ Բարադ. կադէսի եւ Բարադի Տեղաբեղն է: կախեցաւ ընդ երկինս եւ ընդ երկեր. Երկնից ու երկրի Տեղաբեղը: Ոչինչ է խախտ ընդ Բազումս եւ ընդ սահասս. Շատի եւ քչի Տեղաբեղը տարբերութիւն չկայ. Լեառն որ բաժանէ ընդ Աղձնիս եւ ընդ Տարծն. Ընդ ճշմարտութիւն եւ ընդ ստութիւն:

Դ. Ընդ առանց ի ի բացառականով , կողմն , դիմն կը նշանակէ , զոր օրինակ .

Սեմէի երթայր մօտ առ նա ընդ կողաց լերինն. Սեմէի անոր մօտ լերանը դիմն կ'երթար: Ընդ արեւելից կողմնէ. Արեւելքի դիմն: Ընդ արեւմտեւոր. Աջ դիմն, ձախ դիմն:

Ե. Ընդ գործիականով քակը կը նշանակէ , զոր օրինակ .

Հանդչել ընդ հոգանեաւ. Շուքին քակը հանդչիլ. Բնակել ընդ որնով եւ ընդ թղենեաւ. Հաւ ժողովէ ըզ ձագս իւր ընդ թեւով. Ունիմ ընդ իշխանութեամբ իմով դիմուորս. Զովասլիք ընդ ծառով. Ընդ ստորսով լերանց. Պատի ընդ հիւսիսիւ:

Ընդ անորիչ դերբայի հետ գործածուելով , բան մը բաւան պէս կը նշանակէ , զոր օրինակ .

Ընդ բասանելն չորացաւ. Բասանելան պէս չորացաւ:

ԸՍՏ

Ս. Ըստ տրական խնդրով հասեմար (կէօրէ) կը նշանակէ , զոր օրինակ .



Արասցուք մարդ ըստ պատկերի Ռերուճ. Մեր պատկերին հասե՛ճաք մարդ ստեղծենք: Եղիցի ինձ ըստ Բանի + ուճ. Թող + ու խօսիք հասե՛ճաք ըլլայ:

Բ. Ըստ անորիչ դերբային տրականովը կամ հայցականովը, աստիճանաբար, շափո՛ղը կը նշանակէ, զոր օրինակ .

Ըստ պակասելոյ ամացն. Տարիներուն պակսելուն շափո՛ղը: Ըստ յաճախելոյ արմատեացն. Արմատեաց շատնալուն շափո՛ղը: Տեղիք ինչ են ծովու, որոց ջուրն ըստ աճել լուսնոյ աճէ, եւ ըստ պակասելն՝ պակասէ:

Գ. Ըստ անորոշ հայցականով կը նշանակէ .

1<sup>o</sup>. Տեղւոյ կամ իրի մը սահմանէն անդին, զոր օրինակ .

Անցանել ըստ Բլուրս եւ ըստ արձանս ըստ այս. Աս բլուրէն եւ աս արձանէն անդին. Ելին ըստ + աղափն. Քաղաքէն անդին ելան: Ըստ երկեր անդր ոչինչ է. Երկրէն անդին ոչինչ է: Ելեալ արտաքս ըստ սահմանս երկիւղին Աստուծոյ. Աստուծոյ երկիւղին սահմանէն անդին ելլելով:

Այսպէս կ'ըսուի .

Ելանել ըստ դռան, ըստ հրաման, ըստ Յեան ուրուք, ըստ շափ. Ըստ ակն անկանել. Աչքի տեսութենէ անդին իյնալ, այսինքն՝ ալ չերեւնալ:

2<sup>o</sup>. Ա՛ն Ռէի, ճարդ Բլուի, զոր օրինակ .

Տալ ցորեան ըստ Բերան. Բերան, այսինքն՝ ճարդ Բլուի ցորեն տալ: Ըստ դռանս աղղացն՝ ոչխար ըստ երդ. Ա՛ն Ռէի ցեղի՝ դռան Բլուի ոչխար մը:

Այսպէս կ'ըսուի .

Ըստ այր, ըստ Բլուի, ըստ վրանս:



Ի. Ըստ ասանց ՚ի բացառականով յաջորդութեան նշանակութիւն ունի, զոր օրինակ.

Զթագաւորան որ ըստ նճանէ էին. Անկէ ետքը եղող, կամ անոր յաջորդող թագաւորները: Նհաս վրճիոն Աստուծոյ ՚ի վերայ Աղամայ եւ որոց ըստ նճանէ էին. Աղամի եւ անկէ ետքը եղողներուն վրայ Աստուծոյ վճիոն հասաւ:

Այսպէս կ'ըսուի.

Ամ ըստ առ. Մի ըստ Նովէ. Այլ ըստ առնէ:

Յ

Յ նախադրութիւնը միշտ հայցական խնդիր կ'ուզէ, եւ կը նշանակէ. 1<sup>o</sup> Մէկուն, եւ քանի մը բայերու հետ կը գործածուի, զոր օրինակ՝ ասեմ, հարցանեմ, տամ, ինչպէս.

Ասէ ցնոսա. Ասէ ցորդի իւր. Ասէ ցծառայս իւր. Հարցին ցնա. Հանեալ ետ ցպանդոսկապեան երկուս դասեկանա. Խփեալ զգիրան ետ ցպաշարժնայն եւ նստաւ:

2<sup>o</sup> կը նշանակէ Նուէ. Երթիցուք ցֆեթղահէմ.

123. Ուրիշ նախադրութիւններէն ոմանք սեռական հոլով խնդիր կ'ուզեն, ինչպէս շատ մը արեւոյ պարագաներ ցուցնող նախադրութիւններ, զոր օրինակ. առաջի, զինի, յետ, ՚ի վերայ, յանդիման, ՚ի ներքոյ, արտատոյ, ՚ի մէջ, յայնկայս, յայսկայս. նոյնպէս փոխանակ եւ վան նախադրութիւնները:

Ոմանք տրական կ'ուզեն, ինչպէս, ընդդէմ, դէպ, համդէպ, եւ ուրիշ տրական խնդիր պա-



հանջող ամականներ, երբ մակբայօրէն կը գործածուին :

Ոմանք բացառական կ'ուղեն, ինչպէս, հեւի, քաղր, բայ, եւ բացառական խնդիր պահանջող ամականներ, երբ մակբայօրէն կը վարուին :

Ոմանք գործիական, ինչպէս, հանդերձ, շուրջ և

Դ. ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

124. Բայերը Հայցական, Տրական, Բացառական եւ Գործիական հոլով խնդիր կ'առնեն :

Ա. Հայցական հոլով : Հայցական հոլովը խնդիր սեռի է, երբ ներգործական բայի մը Տէր բայիին ըրածը կը ցուցնէ, զոր օրինակ .

Սիրեացես զնմիք քո. Եհար զժառանգ քահանայապետին, եւ եհատ զաննի նորա. Յղեաց զնա յազարակիւր :

Սեռի խնդիր հայցականը շնչ, է՞նչ բանը հարցման պատասխան է, զոր օրինակ. Սիրեացես. —

Չնչ. — Չնմիք քո. Ընկերոյ : Եհար. — Չնչ. — Չժառանգ քահանայապետին. Քահանայապետին ծառան : Եհատ (կտրեց). — Ի՞նչ բանը. — Չաննի.

Ականջը :

125. Հայցական հոլովը սեռի խնդիր չէ,

1<sup>o</sup>. Երբ ժամանակի տեւողութիւն կը ցուցնէ, զոր օրինակ .

Չժառանգան եւ զնչ ամ շինեցաւ տաճարս, եւ դու զերիս աստորս կանգնես զդա : Չնչ օր գործեացես. Չաննայն գիշերս ոչխատ եղեար եւ կայար ոչինչ.



Պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր ապա  
 քաղցեալ. Զի կայք զքս ցերեկ դատարկ. Մառայ-  
 եաց աճա էօնն. Զվէց օր դործեացես, զի զվէց օր արար  
 Աստուած զերկինս եւ զերկիր. Զվէց աճ սերմանեա-  
 ցես զերկիր քո. Երես խամանակս 'ի տարւոջ արասջիր  
 ինձ տօնս. Շինեաց զնա զէօնն աճ, եւ զիւր տունն  
 շինեաց Սողոմոն զերեքսասուն աճ. Թագաւորեաց աճս  
 քսան. Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ ըզ  
 գիշերն լայն. Սու դ առի զառարս. Արկայ հանդերձ գե-  
 րութեան զառարս. (օրերով). Զվաղուի օրն պատրաս-  
 տեսջիր 'ի նմին դազանութեան զիկողան. Առ նմա  
 ազան այն օր. կայր թժ խամս յանհնարին պրկոցս.  
 Լուսին երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղա-  
 տունան՝ հասանէ 'ի նոյն տեղի. եւ երկինք զի տի-  
 եւ գիշեր առածեալ զինքեամբք չրջին 'ի նոյն տեղի.  
 Այսուհետեւ զածնայն առարս երկրի՝ սերմն եւ հունձք,  
 ցուրտ եւ տօթ, ամառն եւ դարուն, զտիւ եւ զգիշեր  
 մի դադարեացին:

Ժամանակի տեւողութիւն ցուցնող հայցա-  
 կանը որչափ ասեն հարցման պատասխան է, զոր  
 օրինակ. Ենեցաւ քսարս. Աս տաճարը շինուեցաւ.  
 Ո՞րչափ ասենուան թէ՛ — Զքառասուն եւ զվէց աճ. Քա-  
 ռասուն եւ վեց տարուան մէջ: Աշխար եղեալ.  
 Աշխատեցանք. Ո՞րչափ ասեն. — Զածնայն գիշերս.  
 Բոլոր աս գիշերը: Մառայեաց. Մառայեց. Ո՞րչափ  
 ասեն. — Աճա էօնն, Եօթը տարի:

2<sup>o</sup>. Երբ յեւ, կերպ կամ եղանակ կը ցուցնէ, զոր  
 օրինակ.

ԶՏարսոն զյեւ եւ զօրինակ Բարիլոնի շինէր. Խօսե-  
 ցաւ լայն օրինակ. կարգեցից պէս լայն օրինակ. Զբացա-



կան տեսիլն զնոյն օրինակ քանդակեցին. Սասնաձառակերպ  
օրինակ բարձրանալ. Մերուժան զիւր զգէնն եւ ըզ  
զարդ եւ զնշան սաղաւարտին բազմաց եղեալ էր  
զնոյն օրինակ. Յիշէ զայս յեւ օրինակի:

Չեւ, կերպ կամ եղանակ ցուցնող հայցականը է՞նչ  
յեւո՞վ, է՞նչ կերպով, է՞նչ եղանակով հարցմանց պա-  
տասխան է, զոր օրինակ. Շինեաց զՏարսոն. Տար-  
սոն քաղաքը շինեց. է՞նչ յեւո՞վ. — Չյեւ եւ զե-  
րինակ Բաբելոնի. Բաբելոնին ձեւովը: Խօսեցաւ.  
Խօսեցաւ. է՞նչ կերպով. — Չայս օրինակ. Սա կերպով:  
3<sup>0</sup>. Երբ չա՞փ կը ցուցնէ, զոր օրինակ.

Որ տարապարհակ վարիցէ զքեզ ճշուն թի, երթ ընդ  
նմա եւ երկուս. Բարձին զնշխարս կոտորոցն երկուսա-  
սան սակաւի. Սրար զծովն ձուլածոյ ասան կանգուն.  
Հատանել փայտ մի յեւոն կանգուն. Պատրաստեցի ոս-  
կի՞ ասղանդս հարեւր հազար, եւ արծաթ՝ ասղանդս հա-  
զար հազար. Տային զարի ասան հազար + ուս. Ետու ձէթ  
+ սան հազար չա՞փ. Սնկաւ լորամարդին զքանակաւն  
ասոր քնաց ասալի, եւ ասոր քնաց անալի. Մեկնեցաւ  
'ի նոցանէ իբրեւ + արքնիկեց թի. Որ ոք արբուացէ մի-  
ում 'ի փոքրկանցս յայցանէ Բաժակ թի ջուր. Չախ-  
եաց զսրահն զրանէ 'ի դուռն հարեւր կանգուն. Չկշե-  
մարմնոց նոցա ոսկի առնուին. Հեռացաւ թագաւորն  
զերկուց աւուրց ճանապարհ:

Չա՞փ ցուցնող հայցական հոլովը, Ո՞րչա՞փ կամ  
ո՞րչա՞փ րեղ հարցման պատասխան է, զոր օրի-  
նակ. Տարապարհակ վարիցէ. Սնկարիայի տանի. Ո՞ր-  
չա՞փ կամ ո՞րչա՞փ րեղ. — Մըն թի. մղոն մը: Մեկնե-  
ցաւ 'ի նոցանէ. Սնոնցմէ հեռացաւ. Ո՞րչա՞փ. —



Քարքնիկեց յի • Քար մը նեռերու չափ տեղ : Բարձին  
 զնշխարս կոտորոցն • կտորուանքը վերցուցին • Ո՞րչափ •  
 — Երկոտասան սակառի • Տասուերկու սակառի (զէճ-  
 պիւ) : Անկաւ լորամարդին ինկաւ • Ո՞ր-  
 չափ արեղ • — Ասոր քնաց աստի և ասոր քնաց անտի •  
 Օրուան մը ճամայ մէկ դիէն , օրուան մը ճամ-  
 բայ միւս դիէն :

4<sup>o</sup>. Երբ ճամբայ կը ցուցնէ , զոր օրինակ •

Թաքիջիք անդ գերիս աւուրս , եւ ապա երթիջիք  
 զճանապարհ յեր • Երթեալ էր նորա զէրկայն ճանապարհն  
 յաշխարհն Յունաց • Գնացեալ է ճանապարհ հեռի • Մի  
 երթար ճանապարհ ընդ նոսա • Գնալ զճանապարհս լիւրս •  
 Տաղտապէին երթալ զհեռի ճանապարհն • Պնդեցան արքն  
 զկնի նոցա զճանապարհն Յորդանանու • Տրամուծեամբ  
 երթային զէրկայնոս լիւն ճանապարհին • Զլեառն լեռնայն  
 գնասջիք • Առաքէր զնա զէրկայն ճանապարհն • Երթիցուք  
 զբարբառն • կարգեալ տողեալ երթան զէրկայնայնիք ճա-  
 նապարհն • Երթայր զայս կողմն լերինն • Սկին իբրեւ ա-  
 ւուր միոյ ճանապարհ :

Ճամբայ ցուցնող հայցականը , ի՞նչ կամ Ո՞ր  
 ճամբայ հարցման պատասխան է , զոր օր • Երթիւք •  
 Գացէք • Ո՞ր ճամբայ • — Զճանապարհ յեր • Զեր ճամ-  
 բան : Երթիցո՞ւք • Երթանք • Ո՞ր ճամբան • — Զաւու-  
 զբարբառն • Շիտակ ճամբան : Գնասջիք • Գացէք • ի՞նչ  
 ճամբայ • — Զլեառն լեռնայն • Լեռնէ լեռ :

5<sup>o</sup>. Բայի մը արձապը եղող կամ բային հետ յի  
 եւ նոյն նշանակութիւնն ունեցող բառեր գործիա-  
 կանի տեղ հայցական կը դրուին , զոր օրինակ •

Եւ երկեան երկիւղ ճեծ • Սէր յաւիտենական սիրե-



Եթէ զքեզ. Անէծ զիս անէծս ցաւագինս. Աստուծոյ ըն-  
 նա կ'ընէ. Եւ այլ լաւիւնն ընէ. Եհար զժողովուրդն  
 հարստացն ընէ. Եւ զաղքատացն յոյժ. Զժողովուրդն իշոյ թաղեացի.  
 Եւ զարայել փրկելոյ է զփրկութիւնն յաւիտենից. Ողբաս-  
 ցենս ողբս. Զարմացարուք զարմանս. Աստուծոյ կարգաւել.  
 Եկաց յաղօթս առ Տէր զաստուծոյն զաղբն զայս եւ ըն-  
 թնդրոտացն. Եւ նորա զնոյն Կոտն ննջեցին. Խնդացին  
 յոյժ ուրախութիւնն մեծ. Երկուս ճանս սպանանեն.  
 Զախոս մահու ջերանէր. Զճան աղուխու սպանից  
 զքեզ. Զայդ զա՛յ ժողովուրդն պահոյ տակացեր. Զա-  
 ռաւջին բարբառն, զնամանն ամենեցուն, նոյնպէսակ  
 լացեալ:

Ասանկ բառեր յարարերող յարարերական  
 դերանունը կամ անոնց վերաբերութիւնն ու  
 նեցող ածականն մը նոյնպէս կրնայ գործիական  
 նի տեղ հայցական դրուիլ, զոր օրինակ.

Մեծ էր «երն» զոր սիրեաց զնա. Ասան յանցանացն  
 զոր յանցեալ. Ի թող իւր զոր մեղաւ. Բժշկել է զերացն  
 զոր խոցեցին զնա. Ոչ թողից քեզ զանարթմանս զիցն  
 զոր անարգեցեր զնոսա: Զկէս յանցանաց քոյ ոչ  
 յանցեալ. Ոչ զնոյնս պարտ էր հարչարել Քրիստոսի:

Այս հայցականները գործիականի տեղ են.  
 փոխանակ ըսելու, Երկեան երկիւղն ընէ. Խորն  
 դացին ուրախութեամբ ընէ. Յաւիտենական «ի-  
 ղ» սիրեցի զքեզ. Մերն «իւր» սիրեաց զնա. եւ  
 այլն:

126. կան ներգործական բայեր որոնք եր-  
 կու հայցական կրնան առնել, որոց մէկը ան-  
 ձի անուն է, միւսը իրի, զոր օրինակ.



Որ զգեցուցանէր զձեզ կարօժրս. Զգեցուցի զձեզ  
պեսպէսս. Ազուցի զձեզ հեր եւ կարօժր. Հարցից եւ ես  
զձեզ բան թ. Հարցից ինչ զձեզ. Զիս ինչ այդպիսի ինքերս  
բանից մի հարցանէք. Ուսուցանէր զնոսս առակօք  
Բաղուժ ինչ. Զինչ խրատեցին զնա ծերքն, եւ զինչ  
մանկտին. Զի՞նչ զրկեցի զձեզ. եւ այլն:

127. Երբեմն չէզոք բայեր ալ վայելչու  
թեամբ իրենց բնութեան խնդիրը հայցական  
հոլով կ'առնեն, զոր օրինակ .

Ամենայն որ բնակեալ իցէ զլեռնակողմն. Որ զտեղին  
բնակեալ նստէին. Բնակեալ նստէին զափն թովուն.  
Որ զլեռնակողմն ափն գետոյն կարգեալ նստէին. Զվե-  
րին կողմն նստէին. Զամենայն՝ որ ինչ ալն ունիցիս  
յինէն արարից քեզ. Եսթեր՝ զոր ամուսնացաւ թա-  
ղաւորն. Ոչ հաճեցան զհօրն հրաձան. Խնդացին զժեր  
'ի նոսա հասանել. Զլանամ (այսինքն զրկեմ) զանձն.  
Իմ 'ի բարութենէ. Ի բամբասանաց խնայել (պահել)  
զլեզու. Երկչոտն միշտ կանխէ (խորհի) զանհնարինս.  
Այլքն զայլ հասարսս շրջէին. Անխայեցեր (պահեցեր)  
զնոսս 'ի մեղաց. Ի մի վայր ժողովեալ զսորա զքր տօ-  
նին, զչիշարակ քաջութեանն ցնծան. Խանդացաւ  
զտիկնոսն ինչ + ո. Զղջացաւ զամուսնանալն. Ըղձանային  
զպարտաւորմն երկրին. Ոչ խուսեցից զթնօրս իմ. Յետու  
յաջորդեալ 'ի Մովսիսէ զզօրավարութիւնն. Տիւ եւ զիւ-  
շեր փոփոխին զժեմամբք. Կեղծաւորի զարողութիւնն.  
Եղբայրն յանցեաւ զամանն. Զգուշանալ զո՛ր (պահել).  
Ապաշաւել զհորթ ինչ. Համբերել զայս ինչ. եւ այլն:

Բ. Տրական հոլով խնդիր :

Թող թեզ զպարտիս մեր. Եղբարքն Յովսէփու վա-  
ճառեցին զնա Իսմայելացոց:



Մեզ եւ իսմայելացոց տրական խնդիր են ըստ  
եւ զանաւեցին բայերուն :

Տրական հոլովը Որո՞ն, (քիմէ՞), հարցման  
պատասխան է . թող . Որո՞ն . — Մեզ : վաճա  
ռեցին . Որո՞ն . — իսմայելացոց :

Գ. Բացարահան հոլով խնդիր .

Փրկեա զմեզ 'ի շարէ . Յօրանջեղն եւ ձգտել ոչ 'ի  
դէ-է լինի, այլ 'ի ձեղի-թեճէ եւ 'ի ըս-լ-թեճէ մարմնոց :

Բացառական հոլովը Որ՞ձ, Ո-սպի՞ հարցման  
պատասխան է, զոր օրինակ . Փրկեա . Որ՞ձ . —  
Ի շարէ . Չարէն : Յօրանջեղն լինի . Ո-սպի՞ . — Ի  
դէ-է . Դեւէն . Ի ձեղի-թեճէ մարմնոյն . Մարմնոյն  
թուլութենէն :

Գ. Գործիական հոլով խնդիր .

Բերէին զհիւանդս ճահճօ . Ամենայն ինչ նոճա- եղեւ :

Գործիական հոլովը Որո՞ճ, Ի՞նչ բանով հարց-  
ման պատասխան է, զոր օրինակ . Բերէին ըզ  
հիւանդս . Ինչով . — Մահճօ . Մահիճներով : Ա-  
մենայն ինչ եղեւ . Որո՞ճ . — Նոճա . Անով :

ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԽՆԴԻՐՆԵՐ

128. Խօսքի մը մէջ Տրական, Բացառական,  
Գործիական խնդիրներէն զատ, որոնք բնութեան  
խնդիր կը կոչուին, Նախադրութեամբ խնդիրներ  
ալ կրնան դանուիլ, զոր օրինակ .

Ածին զՅիսուս առ Պիղատոս . Ընկեցին զԴանիէլ 'ի  
գո-բն առիւծուց . Կացոյց զնա 'ի վերայ աշտարակի տա-  
ճարին :



Աս օրինակներուն մէջ, առ Պիղատոս, 'ի գուբն, 'ի Քերայ աշտարակի՝ նախադրութեամբ խնդիրներ են՝ Աճին, Ընկեցին, Կացոց բայերուն :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

129. Բայերուն Տէր բայի եւ խնդիր կ'ըլլան, Գոյականէ, Գերանունէ, գոյականաբար առ նըւած Ածականէ կամ Անցեալ դերբայէ եւ Անորիշ դերբայէ զատ, երբեմն նաեւ Մակբայ մը, Հոլոված բառ մը, Գիմաւոր բայ մը եւ ամբողջ խօսք մը, զոր օրինակ .

Եղիցի ձեր այն՝ այս, եւ ոչն՝ ոչ. Զինչ իցէ այն փոքր իսկ եւսն. Զայս՝ արդեօքն յայտ առնէ. Արագընթացն եւ փախիւն՝ զմի միտս ունին. Սրբեացն՝ փառաւորեացի է. Նոճամն՝ 'ի ձեռն նորա յայտ առնէ. Սարբն եղիցի անունն քնաւին իակ առաքինութեան է հաստատութիւն. Զի ներող եւ արժանաբող է արարելն՝ այն ամենեցուն իակ յայտնի է:

Պատուոյ սակս սասայ զոչն. ԶՔնչն եղ 'ի միջի. Երբէ երբն քան զվաղվաղակին եւս հեղգագոյն է 'ի փոյթինչ գործոյ. Զայսուհետեւն ոչ վայրապար ինչ յաւել. Զեդ խարոց եղ 'ի միջի. Յաճախաբար դնէ զեդուրն ինձ. Յիշեցէք եւ զոչ ոք է արդարն եւ ոչ թ. Իսկ որ զօրհնեալ քեր որ բնակեալն ասեն՝ անմիտք են. Սմե նայն օրէնք 'ի մի բան կատարին. Ի սիրեացեան զընկեր քն իբրեւ զաննն քն. Ի սկզբանեիւն զոր եղ. Ոչ եկին 'ի Բղայն. Զինի համբարչոյն սարկաւազն քարողէ. Զառ 'ի յեդոյան մտացեալ եմ. Եւ զի բարեաց կաժեցող է Աստուած՝ աւսուցանէ մեզ Տէր մեր յասելն:



ԳԼՈՒԽ Գ.

ՈՒՂՂԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՍՏՈՐՈՒԵԼԻ

130. (232) Ուղղական խնդիր կամ Ստորագրել կ'ըսուի ան բառը որ սովորաբար էական բայէն ետքը կու գայ, եւ էական բային Տէր բային ի՞նչ, Ո՞վ ըլլալը կը ցուցնէ, զոր օրինակ.

Գու ճշ ես. Ես եմ որդին +. Ս, յին այն էր իշխան. Գուք էք ալ երկրի. Նոքա եղիցին ձեր դասասորտ:

131. Երբ էական բային Տէր բային յոքնակի է, Ուղղական հոլովն ալ սովորաբար յոքնակի կը դրուի, զոր օրինակ.

Ամենեքին մեք որդի+ եմք առն միոյ. Ար+ խաղաղութեան եմք, եւ չեն ծառայք քո լրտես+. Կամակից+ էք գործոց նորա. Երաճան+ են ոտք նոցա. Թուղթքս շանոան+ են եւ սաստիկ+. Եին արդար+ երկոքին. Եղեն նմա հարկատու+. Լերուք ար+. Եղէց նոցա Աստուած եւ նոքա եղիցին իմ ժողովուրդ+:

132. Երբեմն Ուղղական խնդիրը եղակի ալ կը դրուի, մանաւանդ երբ ածական է, կամ հաւաքական անուն կամ եղակին չգործած, լող բառ, եւ կամ այնպիսի բառ մը որ բայի հետ կը գործածուի, զոր օրինակ.

Գործակից եմք ձեր. Երանելի են կանայք քո. Երազ են ոտք նոցա. Գեռ մարմնաւոր էք. Ուղիղ են ձանապարհք նորա. Հունձք բաղում են եւ մշակք սակաւ. Երկոտասան եղբայր եմք ծառայք քո. Ընդունայն են կեանք իմ. Սակաւ եւ ցաւազին են



կեանք մեր. Գուք էք աղ երկրի. Գուք էք լոյս աշխարհի. Գուք ազգ էք ընտիր. Ողջ լերուք, եւ մեք մեզէն ողջ եմք. Զգոյշ լերուք. Կուռ եղեն. Հնազանդ լերուք. Ուրախ եղաք:

133. (234) Էական բայէն զատ ուրիշ քանի մը Ներգործական բայերու Տէր բային ու Սեռի խնդիրն ալ Ուղղական խնդիր կամ Ստորոգելի մը կրնայ ունենալ. ինչպէս են Անուանեմ, Կոչեմ, Աւանեմ, Դնեմ, Կարգեմ, Կացուցանեմ բայերը եւ ուրիշ շատեր:

134. Երբ Ուղղական խնդիրն առ բայերուն Տէր բային կը վերաբերի, Ուղղական կը դըրուուի. իսկ երբ Սեռի խնդրոյն կը վերաբերի, Անորոշ հայցական կը դըրուի, զոր օրինակ.

Գու կոչեացիս Կեփաս. Յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս. Որդի՛ Աստուծոյ կոչեացին. Լէ չոքայ եւ սանայն դարձայ. Կացի Քափասոր. Զի անվարժ ելանէ լիտի. Գնացին յամենայն պատուիրանս Տեառն անարար. Ընդէր կայք դարարի. Բարարիանչունք ուսանին. Երջողք սանէ 'ի տուն. Զանապարհք անմտաց ուղիղ թուին. Խիսան եւ յանդուգն եւ հպարտն խանդ կոչին:

Աս օրինակներուն մէջ Ստորոգելին Ուղղական է, քանզի Տէր բայիններուն կը վերաբերի:

Կոչեցի զձեզ Քարեկամ. Արար զիս հայր Փարաւոնի. Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ. Ոյք ասիցեն զչարն Քարի. Գիտէր զնա այր արդար եւ սորք. Եթէ որ խոստովանիցէ զնա Քրիստոս. Զանձն իւր մատոյց պարարաք. Պարիեր կոփեաց զնա հիւսն. Կացոյց զնու-



սա իշխանս. Անդրանիս արար զմեզ. Եզ զձեզ պետուչս.  
 Տեսանէր զնոսա ջերմագոյնս. Արիւնախանչս ուսուցին  
 զնոսա. Ետես քացեալ զդրունս բանափն. Գափն շու-  
 ղովեալ զմետասանն. Անճառ զբանան համարի. Ուղեզ  
 արարէք զչաւիղս նորա. Հնազանդ արար զժողովուրդս.  
 Արար զմեզ սորքս. Արար զմեզ պաշտօնեայս. Կացոյց  
 զիս դատարար. Կացուցես զնոսա իշխանս. Եթէ կո-  
 չիցէ ոք զնոսա զայն ինչ որ եմն, ամաչեն. Տարա-  
 կուսէր թէ զ<sup>ո</sup> ո՛ր կոչեսցէ զՀերմոս. Զամուր ամուր  
 տեղիս Հայոց շինէր Քերդս:

Աս օրինակներուն մէջ ալ Ստորագրելիները  
 Հայցական են, քանզի բայերուն Սեռի խնդիր-  
 ներուն կը վերաբերին:

135. Նոյնպէս էական բային անորիչ դեր-  
 բային, այսինքն վնելին ուղղական խնդիրը  
 շատ անգամ անորոշ հայցական կը դրուի,  
 զոր օրինակ.

Պարտ էր ձեզ լինել Վարդապետս. Պատուէր տա-  
 ցես ոմանց չլինել օրարոտածանս. Կամիմ զմանկա-  
 մարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, փնարարս լի-  
 նել. Մեծատանց պատուէր տալիր՝ արտաս, սիրտանս,  
 հաղորդս լինել. Ծերոց զգասարս լինել, պարկեշտս, ցա-  
 ծոանս, ողջածիտս ՚ի հաւատար: Զգաստացուցանիցեն ըզ  
 մանկամարդսն այրատերս լինել, որդեւերս, ցածոանս,  
 սորքս, փնարարս, Բարեհործս, հնազանդոս իւրեանց ա-  
 բանց. ծառայից իւրեանց տէրանց հնազանդ լինել  
 եւ հանչս յամենայնի. մի հակառակողս, մի հապոտս.  
 Յուչ արասլիս նոցա իշխանութեանց եւ պետու-  
 թեանց հնազանդ լինել եւ հպատակ կալ. անկոխս  
 լինել, հեղս. Ետ նոցա իշխանութիւն որդեւ Աստու-  
 ծոց լինել:



136. Ուղղական խնդիրը դոյական եղած ա-  
տեն, կրնայ ի նախադրութեամբ անորոշ հայ-  
ցական դրուել, զոր օրինակ .

Եղէց 'ի հայր. Եղէց յԱստուած ազգիդ Իսրայելի.  
Եղիջիք դուք մեզ 'ի ծառայս. Եղէց ձեզ 'ի հայր,  
եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ դստերս. Եղի-  
ցին երկոքեան 'ի մարմին մի. Եղիցին դժուարինքն  
'ի դիւրինս եւ առապարքն 'ի դաշտս. Ոստս արձա-  
կեսցէ եւ եղիցի ամենայն երկիրդ յանապատ 'ի  
բնակչաց. Քոյր մեր, եղիցիս 'ի հազարս եւ 'ի բիւրս.  
Եւ եղեւ նոցա 'ի կերակուր. Եղեն նոցա 'ի հարկա-  
տուս. Մեծութիւնդ ձեր յոչինչ է. Քակտեցան եւ  
եղեն յոչինչ. Լերուք յորդիս զօրութեան. Լեր դու  
ինձ յորդի զօրութեան:

Շինեաց տէր Աստուած զկողն զոր առ յԱղաճաց  
'ի կն. Արարից զքեզ յազգ մեծ. Օծանել զքեզ 'ի Ռա-  
ֆայս. Տայ քեզ զհեթանոսս 'ի Ժառանգութիւն. Յոչինչ  
համարել:

137. Տէր բային եղակի եղած ատեն ալ բայը  
յոքնակի կը դրուի, երբ ուղղական խնդիրը  
յոքնակի է .

Կռնոսն դի+ են. Հերս երկայնս ունել կնոջ մար-  
դոյ փառ+ են. Յայտ է թէ Բազաղան+ են աղանդն:

Ուղղական խնդիրը ի՞նչ հարցման պատաս-  
խան է, զոր օրինակ . Դու ես. — ի՞նչ. — Մե՞՞  
Ես եմ. — ի՞նչ. — Որդի՞ն + : Ս.յրն այն էր . —  
Ի՞նչ. — Իշխան : Դու կոչեսցիս . — ի՞նչ. — Կեփաս :  
Մնուանեցաւ . — ի՞նչ. — Քրիստոս : Կոչեցի ըզ  
ձեզ . — ի՞նչ. — Բարեկամ :



ԳԼՈՒԽ Գ.

ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ

138. (240) Բացայայտել կը կոչուին ան բառերը որոնք խօսքի մէջ ուրիշ բառի մը քով կը դըրուին, եւ անոր հետ մի եւ նոյն բանը կը նշանակեն. բայց նոյնը աւելի բացայայտ ընելու կը ծառայեն, զոր օրինակ.

Յովսէփ, այն Մարեմայ. Յովսէփ, Մարիամին այրը:

Հոս՝ այն Մարեմայ բառերը Յովսէփին հետ մի եւ նոյն են, բայց ո՞ր Յովսէփին ըլլայն աւելի յայտնի կ'իմացնեն:

Փախուստն Անակայ, հօր «բ՞ոյն Գրեգորի. Սուրբ Գրիգորին հօրը, Անակայ փախուստը.

Հոս ալ հօր «բ՞ոյն Գրեգորի բառերն՝ Անակին հետ մի եւ նոյն են, քանզի հայր «բ՞ոյն Գրեգորի եւ Անակ մի եւ նոյն անձն են. միայն երկրորդը առջինին բացայայտիչն է:

Զմայրն ամենայն առաքինութեանց, զխոնարհութիւնն չունէր յանձին. Ամեն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը, չունէր:

Հոս ալ խոնարհութիւնն բառը՝ ճայր ամենայն առաքինութեանցին բացայայտիչ է. Առաքինութեանց ճայր եւ խոնարհութիւնն մի եւ նոյն բաներն են:

Կոոց եւ դրօշկոց հանգամանք առ Թարայիւ, հարբ Աբրահամոս, եղեն. Քարէ եւ փայտէ արձաններ (կուռքեր) շինելը՝ Արրահամին հօրը, Թարային, ատենը սկսաւ:



Հոս ակ հարբ Սբրահամոս բառերը՝ թարս ին բա-  
ցայայտիչ են . Սբրահամոս հայրը եւ թարս մի եւ  
նոյն անձն են :

139. Բացայայտչին բացայայտած կամ յայտ-  
նի ըրած բառը Բացայայտեալ կը կոչուի . վերի  
օրինակներուն մէջ՝ Յովէֆ, Անահ, Տայրն ասենայն ա-  
ռաքինութեանց, թարս բացայայտեալ են :

140. Բացայայտիչը բացայայտելոյն հետ թը-  
ւով եւ հոլովով կը համաձայնի . եւ բացայայ-  
տելոյն շ, ի, ց, ընդ, ըստ նախադրութիւնները,  
եթէ ունի, բացայայտչին վրայ ակ կը կրկնուին,  
զոր օրինակ .

Նա զկղէոպատրա շղուտոր իւր . Զմեղան ձեր զոր  
արարէք, շորթն, առի եւ այրեցի զնա հրով . Զար-  
թուցանեմ զՔաղղէացիս . Զազգ դառն եւ զերազ .  
Եզ զմեզ 'ի բանտի 'ի տան դահճապետին, զիս եւ  
զմատակարարն . Ունիմք այսուհետեւ քահանայա-  
պետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս, շորդի Աս-  
տուծոյ . Շրջել զեղբարքք իւրովք, շորդւովքն Իս-  
րայելի :

Զխմրդ յինէն ըմպել խնդրես, 'ի կնոջէ Սամարա-  
ցւոյ . Ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, յերուսաղէմ  
յերկինս . Ամենայն օրէնք 'ի մի բան կատարին, 'ի  
սիրեացեան զընկեր քո իբրեւ զանձն քո . Ասէ Յու-  
դա՝ ցԻսրայել, 'ցհայր իւր . Ասէ ցպատանին ցկապար-  
ճակիրն իւր . Ընդ եղբարս ձեր ընդ որդիան Իսրա-  
յելի . Անց նա ըստ զեան մեծ ըստ Եփրատ . Նայե-  
ցարուք ընդ առաքեալն եւ ընդ քահանայապետ  
խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիստոս :



141. Աստուծոյ նախադրութիւնն ու ուրիշ նախադրութիւններ սովորաբար չեն կրկնուիր, զոր օրինակ .

Առ Թարայիւ հարբ Աբրահամու. Առ Աբիադարաւ քահանայապետիւ. Իսահակաւ եւ Յակոբաւ հանդերձ, ժառանգակցօք նոցին աւետեաց. Վասն որդւոյ իւրոյ Յիսուսի

ԳԼՈՒԽ Ե.

ԿՈՉԱԿԱՆ

142. (307) Կոչական կ'ըսուի ան բառը որ կը ցուցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը, առ որ խօսք մը ուղղուած է, զոր օրինակ .

Արտ, ընդ մեզ զի էք պշուցեալ. Սէճն, ունիմ ինչ ասել քեզ. Որդեակ, զինչ գործ գործեցեր դու ընդ մեզ. Լուր, որդեակ, խրատու հօր քո. Բարեկամ, 'ի վեր մատիր. Բժիշի, բժշկեա զանձն քո. Արտ Արեւոցիտ, պաշտօնասէրս տեսանեմ զձեզ:

143. (308) Կոչականը Հայերէնի մէջ շատ անգամ ո՛վ եւ որո՞ւ բառերուն հետ կը գործածուի, զոր օրինակ .

Ո՛վ բանաքաղ Մարկիոն. Ո՛վ անմիտք եւ հեղգասիրտք 'ի հաւատալ. Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ յերբ իցեմ ընդ ձեզ:

Այլ որո՞ւ, ով կացոյց զիս դատաւոր 'ի վերայ ձեր. Արի կաց, մանուկ որո՞ւ:

144. (309) Երբ կոչականն իրմէ առաջ ա



Ժական մը ունի , շատ անդամ ածականին վրայ  
ք դիմորոշը կ'աւելցուի , զոր օրինակ .

Կամ եղեւ եւ ինձ գրել քեզ , +աջք Թէոփիլէ . Ոչ  
մոլիմ , +աջք Փետտոս :

145. (310) Իսկ եթէ կոչականն իրմէ ետքը  
յատկացուցիչ մը ունենայ , ք գիրը կոչականին  
վրայ կը դրուի , զոր օրինակ .

Աստուածորդիք Պարսից , ընդէր զանգիտես . Իբաց  
կացէք յինէն , մշակքք անիրաւութեան . Գիտեմ  
գքեզ ով ես , սուրբք Աստուծոյ . Արքայք Իսրայելի :

---

ՈՒԹՂ ՄԱՍԱՆՅ ԲԱՆԻ ՎՐԱՅ ՄԱՍՆԱԻՈՐ ԳԻՏԵԼԻՔ

---

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Յօդի գործածութիւնը .

146. Հայերէն յօդը ք գիրն է :

147. Յօդի գործածութեան համար չորս  
կանոն կայ :

Ա. Յատուկ անուններ , եւ այնպիսի իրաց  
անուններ որոնք իրենց սեռին մէջ մէկ հա-  
տիկ են , յօք շեն առներ , զոր օրինակ .

Նկն Յիսուս . Ասէ Պետրոս . Աստուած արար զեր-  
կինս եւ զերկիր . Արարածք Աստուծոյ . Արեգակն  
խաւարեացի . Լուսին ոչ տացէ զլոյս իւր . Ծով մեծ  
է եւ անդորր . Նկեացեն յարեւելից եւ յարեւմտից .  
ԶՀիւսիս եւ զՀարաւ դու արարեր , եւ այլն :



Բ. Հասարակ անուններ յօդ կ'առնեն՝ երբ որոշեալ անհատ կը ցուցնեն . եւ , եթէ հայցյալան են , շ նախդիրն ալ կ'առնեն , զոր օրինակ .

Հացն զոր ետու քեզ իմ է . Քեզի տուած հացս իմս է .

Հոս հաց՝ այս ինչ որոշեալ հացը (իմ տուած հացս) կը ցուցնէ , անոր համար յօդ առած է :

Կերանք զհացն զոր ետու քեզ . Քեզի տուած հացս կերանք .

Հոս ալ հաց՝ այս ինչ որոշեալ հացը (քեզի տուածս) կը ցուցնէ . անոր համար յօդ առած է . եւ որովհետեւ հայցյալան է , շ նախդիրն ալ առած է :

Գ. Հասարակ անուն մը յօդ չառնեն՝ երբ մեկ կը ցուցնէ , այսինքն՝ երբ «մէն բառը քովը կրնայ դրուիլ . բայց , եթէ հայցյալան է , շ նախդիր կ'առնէ , զոր օրինակ .

Մարդիկ եւ անասունք շարժին եւ զգան .

Հոս մարդիկ եւ անասունք սեռ կը ցուցնեն , այսինքն «մէն մարդ , «մէն անասուն կը նշանակեն , անոր համար յօդ առած չեն :

Արար Աստուած զմարդիկ եւ զանասունս .

Հոս ալ մարդիկ եւ անասունք սեռ կը ցուցնեն , ուստի եւ յօդ առած չեն . բայց , որովհետեւ հայցյալան են , շ նախդիրն առած են :

Այսպէս կ'ըսուի .

Գեորտ 'ի ծով գնան , ծով ոչ լնու . Կերինք ապաւէն



են Էղջերուաց, վէմք ապաւէն նապաստակաց. Հողմք  
չնչեն. Աստեղք լուսատու են, եւայլն.

Գ. Հասարակ անուն մը բնաւ յօդ չառներ .  
եւ , եթէ հայցական է , շնախդիրն ալ չառ-  
ներ , երբ անորոշ կերպով ամէն ճշ կամ ճաս ճշ կը  
ցուցնէ , զոր օրինակ .

Են գաղանք յանտառի աստ. Աս անտառին մէջ  
գաղաններ կան:

Հոս գաղանք քանի մը գաղան , կամ գաղան-  
ներէն մաս մը կը նշանակէ , անոր համար յօդ  
առած չէ :

Եղբարք իմ սպանին գաղանս. Եղբայրներս գա-  
ղաններ սպաննեցին:

Հոս ալ գաղան նոյնպէս անորոշ կերպով մաս  
մը կամ քանի մը գաղան կը նշանակէ , անոր  
համար յօդ առած չէ . եւ , թէպէտ հայցա-  
կան է , շնախդիրն ալ առած չէ :

Առանց շի հայցականին՝ անորոշ հայցական  
կ'ըսուի :

148. ՅՕԴ ԱՌՆՈՂ ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ  
ՄԱՍՆԱԻՈՐ ԳԻՏԵԼԻՔ

1<sup>o</sup>. Երբ յօդ առնող բառը յատկացուցիչ ու-  
նի , յօդը յատկացեալին վրայ կը դրուի , օրի-  
նակի համար .

Տուն թագաւորին, կ'ըսուի, ոչ թէ Տունն թա-  
գաւորի:



Բայց երբ յատկացուցիչը յատուկ անուն է ,  
յօդը յատկացեալին վրայ կը դրուի , զոր օրի .

Մայրն Յիսուսի, կ'ըսուի, եւ ոչ Մայր Յիսուսին:

2<sup>o</sup>. Երբ յօդ առնող բառը ածական ունի ,  
ածականը թէ նախադաս ըլլայ եւ թէ յետա-  
դաս , յօդը գոյականին վրայ կը դրուի , զոր  
օրինակ .

Այրն քաջ. Երկիրն ընդարձակ. Մանուկն ստա-  
հակ. նոյնպէս Քաջ զինուորն. Բարեպաշտօն մայրն:

Եթէ ածական ունեցող գոյականը յատուկ  
անուն է , ոչ գոյականին եւ ոչ ածականին վրայ  
յօդ կը դրուի , եթէ ածականը յետադաս է ,  
զոր օրինակ .

Աղեքսանդր մեծ. Ղեւոնդ երանելի. Տրդատայ  
քաջի. եւ այլն:

Իսկ եթէ ածականը նախադաս է , ածակա-  
նը կ'առնէ յօդը եւ ոչ յատուկ անունը , զոր  
օրինակ .

Մեծն Աղեքսանդր. Երանելին Ղեւոնդ. Քաջն  
Տրդատ:

3<sup>o</sup>. Երբ յօդ առնող գոյականը իճ , ին , ձեր ,  
յեր , իւր Ստացական ածականներէն մէկը , կամ  
նորա , նոցա , իւրեանց յատկացուցիչները , եւ կամ  
ստացական ածականով յատկացուցիչ մը ունի ,  
յօդը զանց կ'առնուի սովորաբար , զոր օրինակ  
կ'ըսուի .

Տուն իմ. Հայր քո. Եղբայր նորա. Բանք իւրեանց.



փոխանակ՝ Տունն իմ. Հայրն քո. Եղբայրն նորա.  
Բանքն իւրեանց: Նոյնպէս կ'ըսուի. Տունն հօր իմոյ.  
Դրունք քաղաքի ձերոյ. Արդիք բարեկամաց նոցա.  
փոխանակ՝ Տունն հօր իմոյ. Դրունքն քաղաքին ձե-  
րոյ, եւ այլն:

4<sup>o</sup>. Երբ գոյականաբար առնուած ածական մը  
ընդհանուր մտքով առնուած է, սովորաբար  
եթէ եղակի է՝ յօդ կ'առնէ, եթէ յոքնակի է՝  
յօդ չ'առներ, զոր օրինակ .

Արդարն 'ի հաւատոյ կեցցէ. Անդգամն անգոսնէ  
զխրատ հօր. Ամենքն հաւատայ ամենայն բանի, իսկ  
խորագէտն գայ 'ի զղջումն. Ասան վաստու շրթանց  
անկանի յորոգայթ մեղաւորն, եւ արդարն դերձանի  
'ի նմանէ. Քաղցրահայեացն զթութիւն գտցէ. Ար-  
դարք ժառանգեացեն դերկիր. Անդգամք զխրատ  
անգոսնեն. Երանի ողորմածաց. Երանի հեզոց:

5<sup>o</sup>. Երբ յօդ առնելու անունները երկու են,  
էւ շաղկապով կապուած, սովորաբար առջի  
բառը յօդ կ'առնէ. զոր օրինակ .

Աղքատն եւ տնանկ. Դպիրքն եւ Փարիսեցիք. Ազ-  
պատուղ ցորենոյն եւ գինւոյ եւ ձիթոյ. Զխուլն եւ  
զհամր. Զազգս մեր եւ զտեղի. Նկացն եւ պանդըխ-  
տաց. Դպրացն եւ Փարիսեցւոց:

6<sup>o</sup>. Յօդ կը դրուի ածականի մը կամ յատ-  
կացուցչի մը վրայ, երբ գոյականը կամ յատ-  
կացեալը լռելեայն կ'իմացուի. նոյնպէս որ եւ  
իցէ բառի վրայ որուն հետ մէկ կամ քանի մը  
լռելեայն բառեր կ'իմացուին, զոր օրինակ .

Եթէ ընդ փայտ դալար գայս առնեն, ընդ չորն



զինչ լինիցի այսինքն՝ ընդ չոր փայտ: Աշակերտքն  
 Յովհաննու պահեն ստէպ եւ քոյքո ոչ պահեն.  
 այսինքն՝ քո աշակերտ: Նա է քաւութիւն մեղաց  
 մերոց, եւ ոչ եթէ մերոցն միայն. այսինքն՝ ոչ եթէ  
 ճշաց մերոց միայն: Է բարկութիւն որ գովելի է,  
 որպէս Մովսէսին. այսինքն՝ Մովսէսի Բարկութիւնն:  
 Արիւնն Յիսուսի առաւել խօսի քան զՀարելին. այս  
 քննքն՝ քան զԷրիւնն Հարելի: Մաքսաւորն եւ ձկնորսն  
 եւ առանց դպրութեանն այնպէս ճարտար խօսէր.  
 այսինքն՝ եւ այն որ առանց դպրութեան էր: Սպան-  
 ցեն զվասն մեղացն. այսինքն՝ զանասունն որ է վասն  
 մեղաց: Զուխտն եւ զկամաւն. այսինքն՝ զնուէրն որ է  
 կամաւ. Ընկալաց զառ 'ի ձէնջն. այսինքն՝ զայն որ էր  
 առ 'ի ձէնջ: Պահանջէի զիմն. այսինքն՝ զայն որ իմ է:  
 Ճանաչեմ զիմն. այսինքն՝ զայնոսիկ որ էն իմ:

7<sup>o</sup>. Յօդ կը դրուի անոսանէ՛ժ, կոչէ՛ժ, բայերուն  
 հետ գործածուած ուղղական խնդրոյն վրայ,  
 թէ եւ ուղղական խնդիրը յատուկ անուն ըլլայ,  
 զոր օրինակ .

Պետրոս որ կեփամն կոչեցաւ. Յակոբոս զոր ար-  
 դարն կոչէին. Վասն Անտիոքայ Երեւեալն անուա-  
 նելոյ:

8<sup>o</sup>. Յօդ կը դրուի ածականաբար գործած-  
 ուած գոյականներու կամ յատուկ անուանց  
 վրայ, զոր օրինակ .

Եպիսկոպոսն անուն 'ի Հելլենացի լեզուէ է. Հայրոք  
 անուն մի է հոգեւորաց եւ մարմնաւորաց. Լուեալ  
 զՅիսուսն անուն. Զկուաշն աւան. Ի Թիլն աւան. Ի  
 Սինն անապատէ. Դկղաղն գետոյ:

9<sup>o</sup>. Յատուկ անուններ ալ յօդ կ'առնեն այս .



այդ , այն ցուցականներով , կամ աս ածական  
ներուն զօրութիւն տալու համար , զոր օրինակ .

Մովսէսն այն որ եհան դմեզ . Գո՛ւ իցես Սիրայն  
այսինքն՝ Սիրայն այն . Զիրան զոր արար Ասթիւնէն .  
Այլ Անտիոքոսն ութ հարիւր քանքար բերեալ էր .  
Ո՞վ է Պաւղոսն կամ Ապողոսն . Ո՞ւր է այն ձեր  
Աղեքսանդրոսն . Եթէ գիտասցեն զքէն եթէ դու  
ես Աղեքսանդրոսն . Երուսաղէմն վերին . Փախո ըզ  
Քրիզորոս . այսինքն , զՔրիզորոս շայն . Մեզ զՔրիզորոս  
Տեսուչ կացուսջիք . Հարցանէր 'ի նոցանէ թէ ուր  
ծնանիցի Քրիստոսն : Քրիստոսն յորժամ գայցէ , մի  
թէ աւելի ինչ նշանս առնիցէ :

10<sup>o</sup> . Երբեմն լոկ զարդու համար նախադաս  
ածականի մը վրայ յօդ կը դրուի , զոր օրինակ .

Պերճն գնացիւք . Բարձրաբերճն լերամք . Ուղ  
ղորդն գնացիւք . Մանուածապատն շրջանօք . Յորդն  
անձրեւօք . Աներկեւանն ցնծութեամբ . Ի մնասա  
կարն բանից . ուր ն երբ կրնան զանց առնուիլ :

Բ. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

149 . Երբ ածականը բաղդատութիւն կը  
ցուցնէ , +ան նախադրութեամբ խնդիր կ'առնէ  
բաղդատուելու բառը , զոր օրինակ .

Հասն մանանխոյ որ քոք է +ան զաօճնայն սերմանիս ,  
բուսանի եւ լինի Ռժ +ան զաօճնայն բանջար . Կորիւն  
առիւծու հզօր է քան զանասունս . Թեթեւ քան  
զօդ . Բնութիւն նոցա (հրեշտակաց) 'ի վեր է քան  
զհողմ եւ քան զհուր , նուրբ եւ արագ քան զմիտս .  
Յառաջ քան զարեւ . Առաւել քան զամենայն . Կրր  
կին քան զայն . Սակաւ քան զնոսա . Փոքր մի խո



նարհ քան զհրեշտակս. Կաւ է մեռանել քան զայս  
կեանս. Նոքա բազում վիշտս կրեցին քան զմեզ.  
Էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա:

150. Բաղդատական ածականին վերջը երբ  
բեմն գոյն մասնիկը կ'աւելնայ, զոր օրինակ .

Որ զկնի իմ զայ հզօրագոյն է քան զիս. Եւ էր օճն  
իմաստնագոյն քան զամենայն զազանս. Զուր քան  
զճանունան նրբագոյն է, եւ քան զթեթեւան թանձ-  
րագոյն. Զեմ անմտագոյն քան զձեզ. Երկցագոյն քան  
զհայր քո աւուրբք. Ոչ տեսի յամենայն երկրիս Ե-  
զիպտացւոց զազրագոյնս քան զնոսա:

151. Երբեմն գոյն մասնական տեղ էս բառն  
ածականէն առաջ կամ ետքը կը դրուի, բաղ-  
դատութեան համար, զոր օրինակ .

Քակեցից զշտեմարանս իմ, եւ էս ճշմօճճս շի-  
նեցից. Մեծ էս քան զայս սէր ոչ ոք ունի, զի  
զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց. Ոչ  
ոք արկանէ կապերտ նոր 'ի վերայ հնացեալ ձորձոց,  
ապա թէ ոչ առնու նորն լրութեամբն 'ի հնոց ան-  
տի, եւ շար էս պատառումն լինի:

152. Ածական մը բանի մը որպիսութիւնը  
Քերջին աստիճանի ցուցնելու համար,

1<sup>o</sup>. Ածականին քով յոյժ, կարէ, անհնարին եւ ու-  
րիշ ասոնց նման բառեր կ'աւելնան, զոր օրի .

Մեծ յոյժ. կարէ երկայն. Անհնարին բարձր:

2<sup>o</sup>. Ածականին բացառական կամ ի նախդի-  
րով հայցական (նախդրիւ տրական) խնդիր կը  
տրուի, զոր օրինակ .



Անմեղն 'ի յեղ արկցէ քար. Ձենէ առնեն անօղջ  
քար նետէ:

Այսպէս կ'ըսուի նաեւ .

Ձրնտիրս 'ի հեծեաց. Մեծն 'ի Ռաֆաւորս. Որ փոք-  
րիկն է յառնեօին 'ի յեղ: Որոնք կը նշանակեն, Առ-  
նէն ընտիր հեծեալները. Առնէն Ռժ թագաւորը. Ձեր  
մէջէն առնէն պարիկը:

3. Ածականը կրկնելով յոքնակի գոյականի  
հետ, զոր օրինակ .

Ժողովեցին դքարի բարին. Առնէն աղէկները ժողովե-  
ցին: Ձընտիր ընտիր մայրիան. Առնէն աղէկ մայր ծա-  
ռերն: Մանր ճանր ինչ ճճիք կամ անասունք կերա-  
կուր լինին օձից. Օձերը խիստ ճանր կամ առնէն ճանր  
գաղաններ կամ անասուններ կ'ուտեն: Թողէք զճանր  
ճանր օրինացն. Օրէնքներուն առնէն ճանրերը թողու-  
ցիք, եւ այլն:

153. Շատ անգամ ածականի մը գոյականը  
զօրութեամբ կամ լուրջայն կիմացուի, եւ ան  
ատեն ածականը գոյականաբար առնուած կ'ըսուի,  
զոր օրինակ .

Անպատճառ անգոսնէ զխրատ հօր. Արդարտ ժառան-  
գեացեն զերկիր. Տեսցես զժամառն Աստուծոյ, 'ի  
ճանապարհս ամբարշտաց մի կրթայցես. Երանի հեղոց.  
Ընտրեցին դքարի բարին. Թողէք զճանր ճանր օրինացն.  
Եթող զճանապարհս այգւոյ իւրոյ, եւ գնաց ընդ  
անջրդին եւ ընդ անապատ. Եղիցին դժոտարին 'ի  
դիւրինս. Կաղտ գնան. Բորոտտ սրբին. Մեծալ յառ-  
նեն. Ձգնասահարան իբրեւ զճարտարս թելադրեալ  
կարծեցուցանիցէ. Անկանիցին 'ի յարձանատն. Ընտրել  
դքարին եւ պար. Տեսաք զճն որ յանուն քո դեւս



հանէր. Գնաց «ճ» յաղարակ իւր եւ «ճ» 'ի վաճառ  
իւր. Եթէ «+ զհանդամանս իրաց ինչ զխափցէ. Ոճան+  
զայս ինչ ասէին, այլ զայլ իմն աղաղակէին:

Աս խօսքերուն մէջ Անդգամ՝ այր անդգամ,  
ըսել է. Արդարք՝ ար+ արդարք. Զմեծամեծան  
Աստուծոյ՝ զհորձս մեծամեծս. Ոմն, ոք, ոմանք,  
այլք՝ այր ոմն, այր ոք, ար+ ոմանք, այլ ար+, ը-  
սելու տեղ են. նոյնպէս միւսները:

Գ. ԴԵՐԱՆՈՒՆ

1. Յուշական դերանուն.

134. Յուշական ածականներուն տեղ շատ  
անգամ մինակ «, դ, ն դրերը գոյականին վրայ  
կը դրուին, զոր օրինակ.

Տեսանեմք զաշխարհս՝ 'ի պէսպէս կերպարանս.  
փոխանակ ըսելու, զաշխարհս զայս. Զարիքս որ լի-  
նին՝ ուստի իցեն. փոխանակ ըսելու, չարիքս այսո-  
+իկ. Քոյրդ իմ միայն եթող զիս՝ 'ի սպասու. այսինքն՝  
քոյրդ իմ այդ. Արի, առ զմանուկդ եւ զմայր նորա.  
այսինքն՝ զմանուկդ զայդ. Այս երեք ամք են յորմէ  
հետէ գամ խնդրել պտուղ 'ի թղենուծդ եւ ոչ գը-  
տանեմ. արդ կտրեա զդա, ընդէր եւ զերկիրդ խա-  
փանէ. փոխանակ ըսելու, 'ի թղենուծդ յայդձի, զեր-  
կիրդ զայդ. Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս. այս  
ինքն՝ մանկուոյդ այդձի. Դուրքդ փակեալ են եւ  
մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. այսինքն՝  
դուրքդ այդո+իկ. մանկունքս այսո+իկ:

Եւ էր օձն իմաստնադոյն քան զամենայն գա-  
ղանս. Եկին լրտեսել զերկիրն. Ելին 'ի քաղաքէն եւ



եկին 'ի շէնան. փոխանակ՝ օձն այն. զերկիրն զայն. 'ի քաղաքէն յայնժամէ. 'ի շէնան յայնօրի:

155. Այս, անոր, այդ, աստ, անոր, աստի, անորի, այտի, մակբայները շատ անգամ այս, այդ, այն, ածականներուն տեղ կը գործածուին:

Այս, անոր, այդ, կը դրուին, երբ գործողութիւնը շարժում կը ցուցնէ. Աստ, անոր կը գործածուին, երբ գործողութիւնը դադարում է. Աստի, անորի, այտի կը դրուին բացառական հոլովներու հետ, զոր օրինակ.

Առաքեցին 'ի քաղաք անոր. փոխանակ՝ 'ի քաղաքն յայն: Բնակեաց յերկրի աստ իմում. փոխանակ՝ յերկրիս յայտի: Ի քաղաքէ անոր. փոխանակ՝ 'ի քաղաքէն յայնժամէ ըսելու:

Մի սատակեսցուք, որպէս եղբարքն մեր յանապատի անոր. Ջնջել 'ի տեղւոջէ անորի զյիշատակ նոցա. Ինքն առ զկէս 'ի դօրաց անորի. Սկսան հուր հարկանել 'ի բանակի անոր. Ոչ ինչ էր 'ի ներքս 'ի տաճարի անոր. Իցեն բազումք 'ի մանկաւոյ այտի որ ընդ ակամբ հայիցին. Քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի. Մի զարհուրիր դու 'ի չարաշուք դանձէ այտի. Կարդացին առ տէր այց առնել հայել 'ի ժողովուրդ անոր որ կոխեալ եղև 'ի հեթանոսաց. Ակն ունիմ ապրել 'ի դժուարին հիւանդութենէ աստի:

2. Ստացական դերանուն.

156. Ստացական դերանունները իճ, +ո, ժեք, յեք, ի-ք, երբ իբր դերանուն, այսինքն՝ մինակ, առանց դոյականի կը գործածուին, ինչպէս



Բնական , Բերեւել , Յերեւել , Իրեւել կը նշանակեն , զոր օրինակ .

Ճանաչեմ դիման եւ ճանաչիմ յիմացն . Իֆննեբա կը ճանչնամ , Իֆննեբեա ալ կը ճանչցուիմ : Յիմե անտի առնուցու . Իֆնեա պիտի առնէ : Առ զքոյր . Բնական առ : Զքոյան 'ի քոյոց քեզ մատուցանեմք . Եթէ 'ի Բնական ինչ երկմտիցես 'ի նորայոցն հաւատասցիր . Յիւրան եկն եւ Իւրան զնա ոչ ընկալան . Այ թէ նա կարօտ Բերեւել իցէ , այլ Բեւ ամենեւին նորայովքն :

Նորա , նոցա յատկացուցիչներն ալ առ կերպով կը գործածուին , զոր օրինակ .

Ազնուականագոյն քան զնորայն . Զամենայն զնորայն . Ընտանիք օտարին նորայոցն ցանկանայցեն . Զինչ նման իցէ սորա մահա նորայոց . Եթէ 'ի քու մէն ինչ երկմտիցես , 'ի նորայոցն հաւատասցիր ուսանել . Այ եթէ նա ինչ կարօտ մերովքս իցէ , այլ մեք ամենեւին նորայովքն . Ի նորայոցն տաս . Եզ նա բանա ինչ 'ի նորայոց անտի . Զինչ հաւասարութիւն իցէ ձերայոցն ընդ նորայոցն . Զհոգայցեմք ինչ ընդ նոցա , այլ նոցայոցն :

5. Յարաբերական դերանուն , եւ ա , դ , ն դիմորոշներուն գործածութիւնը .

157. Ար , ո բառը , իբրեւ անորոշ ածական գոյականի հետ կը գործածուի , զոր օրինակ .

Վասն որոյ գործոյ քարկոծ առնէք զիս . Ար գործի համար զիս քարկոծել կ'ուզէք : Յոր տուն մտանիցէք՝ անդ ազջիք . Ար տուն որ կը մըտնէք , հոն մնացէք : Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ . Ար յոյսին համար կ'ամբաստանուիմ : Վասն որոյ



պատճառանաց մեռանէրն՝ յայտ առնէր. Ի՞նչ կամ  
 ո՞ր պատճառի համար մեռնիլը կ'իմացնէր: Որով  
 լեզուաւ օրհնեմք, նովին եւ անիծանեմք. Ո՞ր լե-  
 զուաւ որ կ'օրհնենք, անով ալ կ'անիծանենք: Յոր-  
 ճէ արարչէ երկիր լեալ է՝ 'ի նմանէ եւ գաղանքն  
 արարեալ են. Ո՞ր արարչէ որ երկիրը ստեղծուած  
 է, գաղաններն ալ անկէ ստեղծուած են: Ո՞րք են  
 զօրքն որ շուրջ զնովաւ կային. Ո՞ր զօրքերն են որ  
 անոր բոլորափքը կեցած էին: Ա ոք եւ երթայր առ  
 նոսա՝ ուսուցանէին. Ազ որ անոնց կ'երթար՝ կը սոր-  
 վեցնէին. Ա ոք յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր  
 արարից. Ազ որ առաջ ինծի կու գայ, անիկայ թա-  
 գաւոր պիտի ընեմ: Որ ոք լուծցէ ինչ 'ի պատուի-  
 րանացս յայսցանէ. Ազ որ աս պատուիրանքներէս  
 մէկը կը լուծէ: Յամսեանն հինգերորդի, որ օր եօթն  
 էր ամսոյս. Յորմէ՞ քաղաքէ ես դու, եւ այլն:

158. Որ, « իբրեւ յարաբերական դերանուն  
 խօսքին մէջ առաջ յիշուած բառ մը կը յա-  
 րաբերէ .

Հայրն քո երկնաւոր ո՞ր տեսանէ 'ի ծածուկ՝ հա-  
 տուսցէ քեզ յայտնապէս. Յովսէփ այրն Մարեմայ,  
 ո՞րմ խօսեցեալ էր զՄարիամ կոյս յորճէ ծնաւ Յի-  
 սուս ո՞ր անուանեցաւ Քրիստոս. Ետ ժամանակս եւ  
 տեղիս ո՞րով՞ դերձանիցին 'ի մեղաց:

159. Յարաբերական դերանունը ամեն դէմ-  
 քի անուն կամ դերանուն կրնայ յարաբերել,  
 զոր օրինակ .

Ես ո՞ր խօսիմ. Գո՞ւ ո՞ր լսես. Ես+ա ո՞ր լուան. Այրն  
 ո՞ր խօսեցաւ:

160. Յարաբերականին ցցու ցած անունը կամ



դերանուներ յարաբերեալ կ'ըսուի . նախընթաց  
օրինակներուն մէջ էս, դոս, նոտա, այրն բառերը  
յարաբերեալ են :

161. Յարաբերականը կարելի եղածին չափ  
յարաբերելոյն անմիջապէս քովը պիտի դրուի,  
բոլոր իրեն վերաբերեալ բառերովը, զոր  
օրինակ .

Հայրն քո երկնաւոր որ պետանէ 'ի ծածուկ հատուս-  
ցէ քեզ յայտնապէս . Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն  
էին՝ աչք 'ի նա հայէին . Ի կախարդն՝ որ է անջին  
չիարէ օֆնել, ապաւինեցաւ . Զառաւել սիրոյն՝ զոր ընդ  
ճարհոյն ունէր, յայտ առնէր . Ոչինչ աւելի քան ըզ  
Մանի՝ զոր ինտեանտ ճորհեցին, ասեն . Ի ճրագի՝ որ նոսա-  
զաֆոյն լոյս է, երեւի . Բիւրաւ ուսանել եւ զայլան  
եւս՝ որ ասելոց իցեն, կարիցէք . Եւ զայնոսիկ՝ որ Քե-  
նա իսկ անածօնտ իցեն, ըմբերանէր . Ընդ որպիսի մարդ-  
կան՝ որտ արեանց ճարհարեիցն ծարաւ էին, խօսէր . Կու-  
րիւն՝ զորոց ծեփեաց զաչս կառօճն էւ էթաց, յայտ արար .  
Շունս աստ զայնոսիկ՝ որ յանհնարին ամբարշտութեանս  
իցեն, կոչէ . Աւելորդ էր այնուհետեւ վասն նշանացն՝  
որ վաղվաղակին լինելոց էին էւ ալտ ընարելոց, ասել . Եկի  
զանէծս օրինացն՝ որ վասն յանցոսածոցն երան, լու-  
ծանել :

162. Յարաբերականն իրեն վերաբերեալ  
մասերովն ամբողջ խօսք մըն է, որ գլխաւոր խօս-  
քին ձեւանկեալ անդամը կը կոչուի, զոր օրինակ,  
սա խօսքին մէջ .

Հայրն քո երկնաւոր որ պետանէ 'ի ծածուկ՝ հատուս-  
ցէ քեզ յայտնապէս .

Որ պետանէ 'ի ծածուկ՝ միջանկեալ անդամ է .



Էլիսաւոր խօսքն է՝ Հայրն քո երկնաւոր հասուն,  
ցէ քեզ յայտնապէս :

Նա՛ որ ընդ ճառագայլնս արեփական հայել կափցի, պարտի  
զաղտորութիւնն աչացն, զաղտն եւ դրիժն 'ի  
բաց սրբել, զի մի միժարքն՝ որ զԲԲԺն շողայցեն, ար-  
գել հայելոյ 'ի յստակութիւնն լուսոյն լիցին:

Աս խօսքին մէջ, նա եւ ճնարքն յարաբերեալ  
են, եւ ասոնց վերաբերեալ մասերը դրուած  
են միջանկեալ անդամներէն ետքը, որ նօտր  
գրով նշանակուած են: Բայց ասանկ ըլլալն  
էական չէ:

Նախ՝ յարաբերեալին վերաբերութիւնն ու  
նեցող մասերը, կամ ամբողջ գլխաւոր խօսքը՝  
միջանկեալ անդամէն առաջ ալ կրնայ դրուիլ,  
ուստի փոխանակ ըսելու, Ամենեցուն որ 'ի Ժողո-  
քրդեանն էին՝ աչք 'ի նա հայէին. կրնանք ըսել,  
ի նա հայէին աչք առնեցուն որ 'ի Ժողովրդեանն էին:

Երկրորդ՝ կրնայ միջանկեալ անդամը, այս  
ինքն՝ յարաբերականն իր մասերովն առաջ  
դրուիլ, ու գլխաւոր խօսքը կամ յարաբեր-  
եալն իր մասերովը ետքը դրուիլ, զոր օրինակ.

Ար էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում  
դուն վկայեցեր՝ ահաւասիկ նա մկրտէ. փոխանակ  
ըսելու, Ահաւասիկ մկրտէ նա՛ որ էր ընդ քեզ, եւ  
այլն: Արում բազում աւանդեցաւ՝ առաւել եւս  
պահանջեցեն 'ի նմանէ. փոխանակ՝ Պահանջեցեն  
'ի նմանէ՛ որում եւայլն: Եւ որ զաղաւնիսն վաճա-  
ռէին՝ ասէ ցնտա. փոխանակ՝ Ասէ ցնտա որ զա-  
ղաւնիսն վաճառէին: Արոյ ոգիքն 'ի մարմնոյն ելա-



նէին՝ արկանէր զնոսա մի ըստ միտջէ 'ի գեհենա  
փոխանակ՝ Արկանէր 'ի գեհենա զնոսա՝ որոց եւայլն:

Յարաբերականը կրնայ յարաբերեալէն քիչ  
շատ հեռու մնալ, եթէ խօսքին մէջ յարա-  
բերեալը որն ըլլալը, առանց հոմութիւն  
պատճառելու, յայտնի կ'իմացուի. ինչպէս  
հետեւեալ խօսքերուն մէջ.

Աճնէին կորեան որ ընդ նմայն էին. Զտապան  
Յոպպէացւոց ամրացոյց որ 'ի վերայ ծովուն էր:

163. Երբեմն յարաբերականն իր պահան-  
ջուած հոլովը դրուելու տեղ, յարաբերեալին  
հետ մի եւ նոյն հոլովը կը դրուի, զոր օրինակ.

Եւ զիս ջնջեա 'ի դարձ-նէնէն՝ յորժե գրեցերն. փո-  
խանակ՝ յորժե գրեցեր: Յօրե յայնժանէ՝ յորժե գերեաց.  
Յօրե՝ յորժե եհան. Յօրե՝ յորժե լուար. Յօրեն յայնժանէ՝  
յորժե եկի յանապատս. Առ զիս յերկրէն՝ ուստի ծնեալ  
էի. փոխանակ՝ ուր ծնեալ էի: Յազգէ Յուդայ ծագ-  
եաց Տէր մեր, յորժե ազգէ վասն քահանայից Մովսէս  
ինչ ոչ ճառեաց. փոխանակ՝ զորժե ազգէ եւայլն: Լսել  
լաճնայն՝ զոր հրամայեալ է քեզ 'ի տեառնէ. փոխա-  
նակ՝ որ հրամայեալ է եւայլն: Զոր ինչ եւ ձեզ հա-  
ճոյ թուեսցի՝ զայն գործեցէք. փոխանակ՝ որ ինչ եւ  
ձեզ հաճոյ թուեսցի եւայլն: Որոց նստէին յաշխար-  
հին եւ 'ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա. փո-  
խանակ՝ Լոյս ծագեաց նոցա՝ որ նստէին եւայլն:  
Աճնէցան՝ որոց էք 'ի Հոռոմ սիրելեաց Աստուծոյ.  
փոխանակ՝ Ամենեցուն որ էք եւայլն: Ի վերայ միոյ  
'ի լերանց՝ յորոց ասացից քեզ. փոխանակ՝ Զորոց ա-  
սացից քեզ եւայլն:



164. Յարարերականին եղակի ուղղականն ու հայցականը , յոքնակիի տեղ կը գործածուին , այսինքն՝ կրնան յոքնակի բառ մըն ալ յարարերել , զոր օրինակ ,

Երանի այնպէկ որ սուրբ են սրախք. Մե+ որ կենդանուոյն մնացեալ իցեմք. Զգործան զոր ես գործեմ. Ամենայն սողնոց որ սողին 'ի վերայ երկրի. Զչարեան զոր հասոց 'ի վերայ ազգին:

Եթէ յարարերեալն անեղական բառ մըն է , յարարերականն ուրիշ հոլովներու մէջ ալ եղակի կրնայ դրուիլ , զոր օրինակ .

Հասին աւետեացն որո՞՞ճ ցանկային. Ի կարծեացն կասկածանաց յոր՞՞՛ երկնչիմ:

165. Որ յարարերականը դիմաւոր բայով՝ աշխարհաբառին ոչ եւ ա՞՞ վերջաւորած բառերուն զօրութիւնն ունի , զոր օրինակ .

Որ ձեզ լե՛՛ ինձ լսէ. Զեզի ճարի ընողը ինձի մտիկ կ'ընէ: Որ ընձեւանան 'ի միտ առցէ. Կարգացողը թող հասկնայ: Որ ոչն գործեցէ՛ եւ կերիցէ մի. Զաշխարհողը թող չուտէ: Որ ետեան դիա՛՛ ետեա զհայր իմ. Զիս փեանողը հայրս տեսաւ:

Զոր լսատն եւ փեստ՝ պատմեմք ձեզ. Լսածնիս ու փեսածնիս ձեզի կը պատմենք: Զոր ասէն՝ այսպիսի ինչ է. Լսածը սա է: Զոր ժողովեցերն մում լինիցի. Ժողովածոր որմը պիտի ըլլայ:



166. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆԻՆ ԱՍ ԿԵՐՊ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ  
ՎՐԱՅ ՔԱՆԻ ՄԸ ԳԻՏԵԼԻՔ

1<sup>o</sup>. Աս տեսակ խօսքերու մէջ դերանունն յարա-  
բերեալ մը զօրութեամբ կ'իմացուի, զոր օրինակ.

Որ ձեզ լսէ, Նա կամ այն որ ձեզ լսէ, կը նշա-  
նակէ: Որ ընթեռնուէ, Նա որ ընթեռնու, ըսել է:  
Զոր լուաքն եւ տեսաք՝ պատմեմք ձեզ. Զայն զոր  
լուաք եւ տեսաք՝ պատմեմք ձեզ, ըսել է:

2<sup>o</sup>. Աս տեսակ խօսքերու մէջ, եթէ զօրու-  
թեամբ իմացուած դերանունն յարաբերեալը  
հոլոված է, յարաբերականը սովորաբար անոր  
հոլովը կը դրուի, զոր օրինակ.

Որո՞՞ճ խնդրէ 'ի քէն' տուր. Քենէ խնդրողն տուր.  
փոխանակ ըսելու՝ Տուր / այն՞ որ խնդրէ 'ի քէն'  
Դուք երկիր պագանէք որո՞՞ճ ոչն գիտէք, մեք եր-  
կիր պագանեմք որո՞՞ճ գիտեմքն. Դուք շքեպցածնոր  
երկրպագութիւն կ'ընէք, մենք ճեպցածնաա երկր-  
պագութիւն կ'ընենք. փոխանակ ըսելու՝ Դուք եր-  
կիր պագանէք այն՞՞ զոր ոչ գիտէք. մեք երկիր  
պագանեմք այն՞՞ զոր գիտեմք: Քաղցր է տէր սրոց  
սպասեն նմա. Տէրն իրեն սպասողներուն քաղցր է. փո-  
խանակ ըսելու՝ Քաղցր է Տէր այնոցիկ որ սպասեն  
նմա: Դուք ոչ մտանէք, եւ որոց մտանենն՝ չտայք  
թոյլ մտանել. Դուք չէք մտներ, ճանողներուն ալ  
մանելու չէք թողուր. փոխանակ ըսելու՝ Մտանել  
չտայք թոյլ այնոցիկ որ մտանեն: Եւ առ յորոց ածէրն  
ձեռամբ իւրով պատարագս. Եր բերածներէն իր ձեռ-  
քովն ընծայ առաւ. փոխանակ ըսելու՝ Առ պատա-  
րագս յայնցանէ զոր ածէր, եւ այլն:



Օրինակներ .

Երանի ուժ (որում) թողութիւնս եղև մեղաց .  
 Մտցէ 'ի տունս գողոց, եւ ոչոց երդնուցունս սուտ .  
 Վասն ոչոց առաքեցանն 'ի Յովհաննէ . Երևի ոչոց  
 ոչն թերահաւատին 'ի նմանէ . Նախ ոչոց 'ի Դամասկոս  
 եւ յերուսաղէմ էին պատմեցի . Ոչոց սիրենն  
 զԱստուած՝ յամենայնի գործակից լինի 'ի բարիս .  
 Երանի ոչոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն . Մեք  
 արժանի ոչոց գործեցաքն առնումք զհատուցումն .  
 Եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ ոչոց տե-  
 սերն եւ լուար . Արել պատուհաս ընդ ոչոց գործի-  
 ցէ . Արժանի ըստ ոչոց մեղարն անց ընդ քեզ . Ոմանք  
 յոչոց անդն կային ասեն . Ոչ ումեք պատմեցին եւ  
 ոչինչ յոչոց տեսինն . Առնուլ զքեզ 'ի ձեռն պաշ-  
 տօնեայ եւ վկայ ոչոց տեսերդ զիս, եւ ոչոց երե-  
 ւեցայց քեզ . Յանձն առ Յուդա զոր միանգամ Վի-  
 սին աղաչեաց զնա . Աարդացին առ ոչ յամենայն  
 ժամանակի օգնական եւ պաշտպան լինէր ազգին  
 իւրեանց . Խօսել չհամարձակէին զոր ինչ եղեն . Մի  
 ինչ եկեսցէ 'ի վերայ իմ յոչոց գուքդ ասացէք :

Երբեմն կրնայ յարաբերականը զօրութեամբ  
 խմացուած յարաբերելոյն հոլովը չդրուիլ ,  
 զոր օրինակ .

Վասն ոչ հարկանէ զակն . փոխանակ վասն ոչոց :  
 Զինչ բան տաց պատասխանի ոչ առաքեացն զիս .  
 փոխանակ ոչ ուժ առաքեացն զիս . Առաջի թաւա-  
 լէին ոչ 'ի սկզբանէ յաւիտենից հաստատեաց զիւր  
 ժողովուրդ . փոխանակ, թաւալէին առաջի ոչոց, եւ  
 այլն : Որում խնդրէ 'ի քէն տուր, եւ ոչ կամի փոխ  
 առնուլ 'ի քէն՝ մի գարձուցաներ զերեսս . փոխա-



հասկ' եւ յորժէ կամի, եւ այլն: Որ 'ի ներքս անդ էին՝  
ինքնին Յուդա նեա եւ զէն մատուցանէր. փոխա-  
հասկ, որոց 'ի ներքս անդ էին, եւ այլն: Մագեա զո-  
ղորմութիւնս քո ոչ ճանաչեն զքեզ, զարդարու-  
թիւնս քո որ ուղիղ են սրտիւք. փոխանակ, որոց  
ճանաչեն զքեզ, որոց ուղիղ են սրտիւք: Ասել կա-  
պելոց թէ ելէք, եւ որ 'ի խաւարին իցեն՝ թէ յայտ-  
նեցարուք. փոխանակ, որոց 'ի խաւարին իցեն: Այ  
ոչ իջանենն յԵգիպտոս. այսինքն՝ վայ որոց: Երանի  
որքաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան. այս  
ինքն՝ որոց: Երանի որ հալածեալ իցեն վասն ար-  
դարութեան: Զիսորդ դժուարին է որ զինչսդ ունի-  
ցին մտանել յարքայութիւն Աստուծոյ. այսինքն՝  
դժուարին է որոց ունիցին, եւ այլն:

3<sup>o</sup>. Աս տեսակ խօսքերու մէջ որ յարաբերա-  
կանին բայը կրնայ ներկայ, անկատար, կա-  
տարեալ, եւ ուրիշ ժամանակ դրուիլ, երբ  
աշխարհաբարին ոչ կամ ա՞ վերջաւորած բա-  
ուը ներկայի, անկատարի, կատարեալի զօ-  
րութիւն ունի, զոր օրինակ .

Ասիկայ լսողը՝ կը զարմանայ . հոս լսողը ներ-  
կայէ նշանակութիւն ունենալուն համար գրա-  
բար պէտք է ըսել . Որ լէ՞ն զայս զարմանայ :

Ասիկայ լսողը կը զարմանար . հոս լսողը ան-  
կատարի նշանակութեամբ է, ուստի գրաբա-  
րին մէջ որ յարաբերականին բայը անկատար  
դնելու է . Որ լէ՞ն զայս զարմանայր :

Ասիկայ լսողը զարմացաւ . հոս ալ լսողը կա-  
տարեալի նշանակութիւն ունենալուն համար



նոյն բայը կատարեալ պիտի դրուի . Որ ւստի  
զայս զարմացաւ :

Ասիկայ լսողը պիտի զարմանայ . հոս ալ ւստի  
ապառնի նշանակութիւն ունի , ուստի բայն  
ապառնի պիտի ըլլայ . Որ ւստի կամ որ ւստի  
զայս՝ զարմացի :

Նոյնպէս հետեւեալը .

Լսածս կը պատմեմ . ւստի ներկայ ըլլալուն  
համար , դրաբարին բայը պէտք է ներկայ դը-  
նել . Զոր ւստի պատմեմ :

Լսածս կը պատմէի . ւստի անկատար է , ուս-  
տի եւ դրաբար բայն անկատար կը դրուի .  
Զոր ւստի պատմէի .

Լսածս պատմեցի . հոս ւստի կատարեալ է ,  
ուստի եւ դրաբարին մէջ նոյն բայը կատար-  
եալ պիտի ըլլայ . Զոր ւստի պատմեցի :

Լսածս պիտի պատմեմ . ւստի եթէ ապառնի  
նշանակութեամբ է , այսինքն՝ եթէ ասի ետեւ  
լսելիքս կը նշանակէ , դրաբարին բայն ալ ա-  
պառնի պիտի դրուի . Զոր ւստի պատմեցի :

4<sup>o</sup>. Աս տեսակ խօսքերու մէջ , երբ յարա-  
բերեալը լռելեայն կ'իմացուի , կամ յարաբե-  
րականէն վերջը դրուած է , յարաբերակա-  
նէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ սո-  
վորաբար « , » , « դիմորոշ կոչուած գիրերէն  
մէկը կը դրուի :

Եթէ զօրութեամբ իմացուած գերանուն  
յարաբերեալը է , « կամ » է կամ ասոնց



յոքնակիները , յարաբերականէն անմիջապէս  
եւաքը եկող բառին վրայ \* գիրը կը դըրուի ,  
զոր օրինակ .

Որ խօսիմք ընդ քեզ . Որ տրուալս եմ . Որ այժմս  
կեամ . այսինքն Ն\* որ խօսիմ , որ տրուալ եմ , որ  
այժմ կեամ : Որ կարողքս եմք . Որ կենդանիքս եմք .  
Որ արտաքոյս եմք . այսինքն՝ Մէ+ որ կարողք եմք ,  
որ կենդանիք եմք , որ արտաքոյ եմք :

Որ աստս է . այսինքն՝ Ս\* որ աստ է : Որ կանս .  
Որ խօսինս . այսինքն՝ Ս\*+ որ կան , որ խօսին : Զոր  
խորհեցայս առնել . այսինքն՝ Զայս զոր խորհեցայ  
առնել : Մի ոք մեղադիր լիցի եւ աղարտիցէ զոր  
ասեմս . այսինքն՝ Զայս զոր ասեմ : Զոր սայս առնէ .  
այսինքն՝ Ս,յս զոր սա առնէ : Զորոց մեքս խօսիմք .  
այսինքն՝ Ս,յ\*+իչ զորոց մեք խօսիմք :

Եթէ զօրութեամբ իմացուած դերանուն  
յարաբերեալը Դ\* , Դ\* կամ այդ է կամ ասոնց  
յոքնակիները , յարաբերականէն անմիջապէս  
եւաքը եկող բառին վրայ Դ զիմորոշը կը դըր-  
ուի , զոր օրինակ .

Զոր եսդ սիրեմ . Որ ամենեցունդ ես թաղաւոր .  
Որ ձիթենիդ վայրենի էիր . Որ եսդ առանց մեղաց .  
Ընդ որում համարձակեալդ խօսիմ . Որ վաղդ ելեր  
մեկնեցար . Որ ոչդ երկնէիր . այսինքն՝ Դ\* զոր ես  
սիրեմ . Դ\* որ ամենեցունս ես թաղաւոր . Դ\* որ  
վայրենի ձիթենի էիր , եւ այլն :

Որ 'ի Գէթդ էք . Որ արբեալդ էք . Որ չեւդ էք  
սրբեալ . այսինքն՝ Դ\*+ որ 'ի Գէթ էք . Դ\*+ որ  
արբեալ էք , եւ այլն :

Որ 'ի քէնդ առաքեցաւ . Ո՞վ է որ ասէդ ցընդ



այսինքն՝ Գ<sup>ու</sup> որ 'ի քէն առաքեցաւ. Ով է Դ<sup>ու</sup> որ  
 ասէ ցքեզ: Որ շուրջ դմեօքդ բնակեալ են. այսինքն՝  
 Գ<sup>ու</sup> որ բնակեալ են շուրջ դմեօք: Որ իբրեւ ըզ  
 քեզդ իցեն. այսինքն՝ Գ<sup>ու</sup> որ իցեն իբրեւ զքեզ:

Ձոր դուդ առնես. Որում դուքդ երկիր պագա  
 նէք. Ձոր դայդ մարգարէանայ. Առաւել եւս քան  
 զոր ասեմդ. Գիտասցէ զոր գրեցիդ. Հաստատուն  
 կաց յոր ուսարդ. Ձոր յօդեալ եւ ուսեալդ ես. Ձոր  
 ոչդ վայելէ քեզ խօսել. այսինքն՝ Այդ զոր դու  
 առնես. Այդ որում դուք երկիր պագանէք. Այդ  
 զոր դա մարգարէանայ, եւ այլն: Ընդ որս դուքդ  
 զարմանայք. Յանկացան լսել զոր լսէքդ. Գիտիցես  
 արդեօք զոր ընթեռնուցուսդ. այսինքն՝ Այդ<sup>ու</sup> ինչ  
 ընդ որս դուք զարմանայք. Յանկացան լսել շայդ<sup>ու</sup>  
 ինչ զոր դուք լսէք. Գիտիցես արդեօք շայդ<sup>ու</sup> ինչ զոր  
 ընթեռնուս:

Եթէ զօրութեամբ խնացուած դերանուն յա  
 րարերեալը ն<sup>ու</sup> կամ ա<sup>յն</sup> է, կամ ասոնց յօքնա  
 կիները, յարարերականէն անմիջապէս ետքը  
 եկող բառին վրայ ն գիրը կը դրուի, զոր օրի.

Որում դուն վկայեցեր. Որ 'ի նմայն ծնեալ է. Որ  
 զթայն՝ ողորմութիւն գացէ. Որ բժշկէն եւ բժշկին.  
 Որ մեռանին՝ արգարացեալ է. Որ գողանայրն մի  
 եւս գողացի. Ով է որ դատին զքեզ. Ով է որ  
 չարչարիցէն զիս. Որ սիրեացն զիս եւ մատնեաց  
 դանձն իւր վասն իմ. Որ եկնն եհաս. Որ արարիչն  
 եւ տուիչ է. Որ հիւանդն իցէ զբժիշկն խնդրէ. Որ  
 'ի վերն քան զՁրուանն էր. Ձորմէ այսպէսն ասի.  
 Վասն որոյ յառաջ կասկածն իսկ եղեւ. Որ կարին  
 իսկ քաջ գիտիցէ. Որ այնպէսն կարող է. Որ ճրին  
 եզիս. Որ մտադիւրն ծառայեաց. Որ 'ի վերայն էր



հասանելոց. Ար 'ի ծածուկն քեւ պատերազմի. Ար  
ոչն է ձեր թշնամի. Ար ոչն անկեալ երկիր պապա-  
նիցէ. Արոյ եղերուքն դուք որդիք. Արում շեմն ար-  
ժանի թէ լուծից զխրոցս կոշկաց նորա:

Աս օրինակներուն մէջ նա կամ այն յարաբեր-  
եալը զօրութեամբ կ'իմացուի. այսինքն՝ Նա  
որում դու վկայեցեր. Նա կամ այն որ ծնեալ է  
'ի նմա. Նա որ գթաց. նա կամ այն որ բժշկէ,  
եւ այն որ բժշկի, եւ այլն:

Ար զիսն սիրեն. Յորս դուքն պանծացեալ էք. Ար  
զձեզն խառնեցուցանեն. Ար ընդ նմայն հաւանեալ  
էին. Ար զնովաւն էին. Ար ընդ նոսայն նատէին. Ար  
ատեանն զիս. Ար ննջենն՝ գիշերի ննջեն, եւ որ ար-  
բենանն՝ գիշերի արբենան. Ար լայցենն՝ որպէս թէ  
ոչ լայցեն. եւ որ խնդանն՝ որպէս թէ ոչ խնդայ-  
ցեն. Ար քրիստոսեանքն են. Ար բունքն իսկ են. Ա-  
րոց պարան եւ պատշաճ էր խնդալ. Ար ընդ ահե-  
կէն իցեն. Ար յերապողիսն են. Ար երբեմն օտարա-  
ցեալքն էին. Ար շուրջն կային զնովաւ. Ար զհեան  
երթային. Զորս յառաջագոյնն հրաւիրեաց. Արոց  
այսպէսն պարտ եւ պատշաճ էր զպարկեշտան ցու-  
ցանել. Ար հազիւն ապրեցան:

Աս օրինակներուն մէջ ալ զօրութեամբ ի-  
մացուած յարաբերեալը՝ նա կամ այն է. այ-  
սինքն՝ Նա կամ այն որ սիրեն զիս. Նա  
կամ այն յորս դուք պանծացեալ էք, եւ  
այլն:

Զոր յիսն տեսէք. Զոր մեքն քարոզեմք. Զոր դուքն  
ոչ գիտէք. Զոր նոքայն ժողովեցին. Զոր գործեմն



ոչ գիտեմ. Զոր կամքն յաղօթս՝ ոչ գիտեմք. Զոր պարտէաքն առնել՝ արարաք. Մեք արժանի որոյ գործեցաքն առնումք գհատուցումն. Որում չէն մարթ լինել. Զոր Աստուածն կամի. Զոր աստն ետ. Զոր անդն խոստացաւ. Զոր միշտն ասէի. Զարհուրեալ եւ դողացեալ վասն որոյ գաղտն արար. Եւ զոր ոչն եւս խնդրեցեր՝ ետու քեզ. Մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք չխօսել:

Ասոնց մէջ ալ զօրութեամբ խմացուած յարաբերեալներն են՝ այն, այնորեկ, այսինքն, Այն զոր տեսէք յիս. Այն զոր մեք քարոզեմք. Զայն զոր դուք ոչ գիտէք. Այնորեկ զորս նոքա ժողովեցին, եւ այլն:

Յարաբերեալը ներգործութեամբ եղած ատենն ալ՝ երբեմն յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ գիմորոշ Յօդ (ա, դ, ն) կը դրուի, զոր օրինակ.

Այն՝ որ ինձն պատմիցէ. Զայն՝ զորմէ դուքդ տեսէք. Զինչ է այդ զոր դուքդ գործէք. Այս՝ որ ձեզս տուաւ. Կանայքն որ շուրջ գնովաւն կային. Ես եմ որ խօսիմ ընդ ձեզ. Ոչ եթէ զոր կամիմն զայն առնեմ, այլ զոր ասեամն՝ զայն գործեմ. Եթէ զոր քակեցին զնոյն միւսանգամ շինիցեմ. Գարձայց 'ի սոսն իմ ուստի ելին. Զոր ուսարուքն եւ լուայք եւ տեսէք յիս՝ զայն արարէք. Այն որ սրբէն, եւ որ սրբին. Ոչ վասն այնորեկ որ գրկեացն, եւ ոչ վասն այնորեկ որ գրկեցաւն. Յայնորեկ որ ընդ աջմէն իցեն. Ես որ կապեալս եմ. Ոմանք 'ի սոցանէ որ աստս կան. Ոմանք յայնցանէ որ անդն կային:

5. Եթէ աշխարհաբարին մէջ ոչ կամ ա՞ վեր



Չաւորած բառն ածական է եւ գոյական մը  
ունի, ան առեն ալ գրաբարին մէջ յարաբե-  
րականով գիմաւոր բայ կը գրուի, զոր օրինակ.

Եկող մարդը. Տեանող ծառաները. Սպանող զինուորը.

Գրաբարի կը գառնան այսպէս .

Այրն որ էկն. Ծառայքն որ փեւին. Զինուորն որ սպանու  
չոյնպէս .

Տեսած մարդս. Լսած խօսքդ. Կարդացած գիրքը.

Գրաբար կ'ըսուին .

Այրն զոր փեւի. Բանն զոր լսար. Մատեանն զոր ըն-  
թեանս :

Նախ՝ աս տեսակ խօսքերուն մէջ երբեմն որ  
յարաբերականով գիմաւոր բայը գոյականէն  
առաջ կը գրուի, զոր օրինակ .

Որ առաքեացն զիս հայր. փոխանակ՝ Հայրն որ ա-  
ռաքեաց զիս: Որ բարւոք վերակացու լինին երէցանք.  
Փոխանակ՝ Երիցունք որ բարւոք վերակացու լինին:

Այսպէս են հետեւեալները .

Գեմեարիտս եւ որ ընդ նմա ճարտարք. Իբրեւ լը-  
ւան որ յերուսաղէմ՝ առաքեալքն էին. Խղճէին 'ի  
նմանէ որ 'ի թլիատութենէ անախ հաւատացեալք.  
Ողջոյն տան քեզ որ ընդ իս են առնեւին:

Աս խօսքերն աշխարհաբարի կը գառնան  
այսպէս .

Որ առաքեացն զիս հայր. Զիս զրկող հայրը : Որ  
բարւոք վերակացու լինին երիցունք. Աղէկ վերա-  
կացութիւն ընող երէցները: Գեմեարիտս եւ որ ընդ



Նմա ճարտարք. Գեմեարիտան ու անոր հետի վար-  
պեաները: Իբրեւ լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն  
էին. Երուսաղէմ եղող առաքեալները երբ լսեցին:

Այսպէս միւս օրինակներն ալ :

Երկրորդ՝ այսպէս յարաբերեալը յարաբե-  
րականէն ետքը դրուած ատեն՝ երբ երկուքը  
տարբեր տարբեր հօլով են, իրարու հօլով կը  
դրուին. այսինքն՝ յարաբերականը յարաբեր-  
եալին, յարաբերեալն ալ յարաբերականին հօ-  
լովը, զոր օրինակ.

Մարդարէանայ զոր առյապա անց+ ընդ Սաւուղ  
անցանելոց էին. փոխանակ՝ Մարդարէանայ զանցո  
որ, եւայլն: Որոց առ դերութեամբն ճարգարէ+ առա-  
ջին է սա. փոխանակ՝ Առաջին է սա ճարգարէից որ,  
եւայլն: Ապստամբութիւն ուսուցանեա ՚ի Մովսիսէ  
որոց ՚ի հեթանոսս ամենայն Հրեայ+ են. փոխանակ՝  
Ուսուցանեա Հրեից որ են, եւայլն: Մարդարէքն որք  
վասն որոց ՚ի ձեզ լինելոց էին շորհ+ մարդարէա-  
նային. փոխանակ՝ մարդարէանային վասն շորհ+ացն  
որ լինելոց էին եւայլն: Ոչ ելի յԵրուսաղէմ առ որ  
յառաջագոյն քան զիս առաւելան էին. փոխանակ՝  
առ առաւելան որ էին եւայլն: Գարծաւ առ որս նըս-  
տէին Եղբար+ն, եւ ասէ. փոխանակ՝ առ Եղբարան որ  
նստէին:

167. Գիմնորոշ յօդ կը դրուի նաեւ

Ա. Երբեմն որ Ինչ եւ զԻնչ բառերէն ետքը,  
որոնք այն Ինչ որ, կամ աշխարհարար՝ ան որ,  
Ինչ որ կը նշանակեն, ինչպէս.

Զոր ինչ ես դործեմ. Ոչ գիտեմ զինչ դուդ ա-



սես. Գիտէք զինչ արարիք. Զոր ինչ տեսանեմքն՝  
ասեմք. Այր դու, չգիտեմ զինչ ասեսք. փոխանակ  
ըսելու, Զայն ինչ զոր ես գործեմ. Զայն ինչ զոր դու  
ասես. Զայն ինչ զոր արարի, եւ այլն:

Բ. Գիտնորոշ յօղեր կը դրուին շատ անգամ  
ժնչ, յորժամ, ուր, ուստի, որպէս, իբրեւ շաղկապ  
ներէն ետքը, քանզի այնպիսի խօսքերու մէջ  
միշտ զօրութեամբ բառ մը կամ բայ մը կ'ը-  
մացուի, զոր օրինակ.

Աղաչեցի գրեզ կալ յՅփեսոս մինչ երթային. այս  
ինքն յայնժամ՝ յորժամ երթայի: Մինչ էաքն մարմ-  
նով. փոխանակ՝ յայնժամ՝ յորժամ էաք մարմնով:  
Մինչդեռ կայրն կախեալ. այսինքն՝ յայնժամ՝ յոր-  
ժամ կամ 'ի ժամանակին յորում, եւայլն: Մինչդեռ  
ալէկոծն եւ ծովածուի իցէ. այսինքն՝ յայնժամ՝  
յորժամ իցէ, եւայլն: Մինչդեռ այդն կամէր լինել.  
Մինչ ինքնն միայն էր:

Յորժամ զգենուցումքն. Յորժամ յարեաւն 'ի մե-  
ռելոց. Յորժամ եկնն. Յորժամ քաղցեաւն. Յորժամ  
զՅորն կամեցաւ փորձել. Յորժամ սգակեալն տե-  
սանիցեն. Յորժամ ոչն գանդաղեցար 'ի յառնել եւ  
'ի թողուլ զճաշ քո. Յորժամ եմս հեռի. փոխանակ  
յայնժամ՝ յորժամ զգենումք. յայնժամ՝ յորժամ  
յարեաւ, քաղցեաւ, եկն, եւայլն:

Ուր եմն իցեմ. Ուր եմն երթամ՝ դուք ոչ կա-  
րէք գալ. Ուր երթամն գիտիցէք. Ուր էաքն ժողով-  
եալ. Ուր Քրիստոսն նստի. Ուր առաքս հրաման.  
փոխանակ ըսելու՝ Անդ ուր ես եմ. անդ ուր ես եր-  
թամ, ուր էաք ժողովեալ, եւայլն:

Ուստի եմն գիտէք, այսինքն՝ գիտէք զրեղին յոր-  
մէ եմ: Զի մի արտմութիւն ինչ կրիցեմ ուստի ար-



ժանդ իցէ ինձ ուրախ լինել. այսինքն՝ անփ՛ ուս-  
տի արժան իցէ, եւ այլն:

Ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս՝  
տեսանէք զի ունիմ. Որպէս մեք՝ լուաք. Զգործ  
տեսան զործէ որպէս եւ ես. Որպէս սկսաւն յա-  
ռաջագոյն. Որպէս դուք այլ ընդ այլոյ կարծես.  
Որպէս երգուայն. Գուցէ եկեալ ոչ որպիսիս կա-  
միցիմն գտանիցեմ զձեզ. Որպէս եւ Յորն ասէ. Ոչ  
ծանր ինչ եւ տաղտկալի իրս առաջի դնէր որպէս  
Յովհանն. Որպէս եւ Մովսէսն եկաց յաղօթս. Նլից  
եւ արարից որպէս միշտն. Նրդէր ձեռամբ իւրով  
որպէս եւ հանապաղն. Որպէս յառաջագոյնն ասա-  
ցաւ. Որպէս 'ի միասինն արարաք զիս. Որպէս եւ  
կանխաւն ասէի. Փառաւոր լիցի յամենայն տեղիս  
որպէս եւ առ ձեզդ:

Աս խօսքերուն մէջ ալ այնպէս բառը մինակ  
կամ ուրիշ բառերով մէկտեղ զօրութեամբ  
կ'իմացուի, զոր օրինակ.

Որպէս երգուայն. Այնպէս որպէս երգուայ, ըսել  
է: Զգործ տեսան զործէ որպէս եւ ես. Զգործ  
տեսան զործէ այնպէս՝ որպէս եւ ես գործեմ, ըսել  
է: Գուցէ եկեալ ոչ որպիսիս կամիցիմն՝ գտանիցեմ  
զձեզ. կը նշանակէ՝ Գուցէ եկեալ ոչ գտանիցեմ  
զձեզ այնպիսիս՝ որպիսիս կամիցիմ:

Այսպէս պէտք է իմանալ միւսները:

Գ. Մնորիշ դերբայի տեղ շատ անգամ զի  
շաղկապով դիմաւոր բայ կը գործածուի. ան  
ատեն զի շաղկապէն անմիջապէս ետքը եկող  
բառին վրայ դիմորոշ յօդ կը դրուի, զոր օրի-  
նակ.



Ո՞չ շատ իցէ քեզ այն զի աւերեցերն զու զՆ-  
դիպատու. այսինքն՝ Ո՞չ շատ իցէ քեզ աւերելն քո  
զՆդիպատու:

Ոչ այնու միայն զարմանալի է (Սատուած) զի ածն  
'ի չգոյէ 'ի գոյ զչգոյսն, այլ զի եւ անարատ պահէ  
զլեալսն. այսինքն՝ Ոչ միայն զարմանալի է վասն ա-  
ծելոյն 'ի չգոյէ 'ի գոյ, եւայլն:

Ոչ զի մեռաւն, այլ զի խաչեցաւն՝ այն աւերի են  
զարմանք. փոխանակ՝ Ոչ Ռուսելն, այլ խաչելն են  
զարմանք:

Ոչ զի եկինն միայն, այլ առաւել եւս զի համար-  
ձակեցանն. այսինքն՝ Ոչ միայն վասն գալոյ նոցա,  
այլ առաւել եւս վասն համարձակելոյ նոցա:

Վասն զի արարն եւ հաստատեաց զնոսա. այս  
ինքն՝ վասն առնելոյն եւ հաստատելոյն զնոսա:

Մի ընդ այն նայիցիս զի նեղն եւ անձուկ է եւ  
խիստ. այսինքն՝ Մի նայիցիս ընդ լինելն նեղ եւ  
անձուկ, եւայլն:

Նա զի եւ աղքատն իսկ իցեա՝ յայն սակս կա-  
րելոր պէտք են հեզ եւ հանդարտ լինելոյ. այսինքն  
Նա մանաւանդ վասն լինելոյդ աղքատ՝ պարտ է  
քեզ հանդարտ լինել:

Ոչ զի մարմինն առ եւ եղեւ մարդ, այլ զի . . .  
այսինքն՝ Ոչ վասն մարմին առնելոյն եւ մարդ լինե-  
լոյն, այլ, եւայլն:

Ոչ միայն զի հաստատունն եւ անշարժք են բա-  
րութիւնքն . . . այլ զի դիւրաւն եւ առանց ամե-  
նայն աշխատութեանց շնորհեցան. այսինքն՝ Ոչ  
միայն վասն հաստատունն եւ անշարժ լինելոյ բա-  
րութեանցն, այլ եւ վասն դիւրաւ եւ առանց աշ-  
խատութեան շնորհելոյ նոցա:



1. Գրաբարին շահմանակներուն աշխարհաբարին հետ  
հասե՛ճապոսե՛ինը:

168. Գրաբարին Սահմանական ներկան Գործե՛ճ,  
աշխարհաբարին ներկային հետ նոյն է,  
որ է իւր գործե՛ճ, զոր օրինակ .

Հայր իմ մինչեւ ցայժմ գործե, եւ ես գործե՛ճ. Հայրս  
մինչեւ հիմա իւր գործե, ես ալ իւր գործե՛ճ:

Այսպէս ամեն բայ, զոր օրինակ .

Գիտեմք եթէ ուղիղ խօսեա՛ն ոչ աւանա ալին, այլ  
ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ սաստ-  
ցանեա՛ն. Գիտենք որ շիտակ իւր խօսեա՛ն, աչառութիւն  
չե՛ն բնիւր, այլ Աստուծոյ ճամբան ճշմարտութեամբ  
իւր սորվեցնեա՛ն:

169. Գրաբարին Անկատարն ալ նոյն է աշխարհ-  
հարարին անկատարին հետ, որ է իւր գործե՛ճ,  
զոր օրինակ .

Յառաջագոյն հայհոյիչ էի եւ հալածիչ. այլ դաի  
ողորմութիւն, դի դայն յանգիտութեան գործե՛ի. Ա-  
ռաջ հայհոյիչ ու հալածիչ էի, բայց ողորմութիւն  
դասայ. քանզի չգիտնալով իւր գործե՛ի: Զցայգ եւ զցե-  
րեկ գործեա՛ր՝ վասն չճանրանալոյ ումեք 'ի ձէնջ.  
Ձենէ մէկուն ծանրութիւն չըլլալու համար՝ գիշեր  
ցորեկ իւր գործե՛ին:

Այսպէս ամեն բայ, զոր օրինակ .

Յաւուրսն Ղովտայ սպե՛ին, բճայե՛ին, արե՛ին, շե՛նե՛ին,  
լաճաւե՛ին. Ղովտին ատենը կ'սպե՛ին, իւր խօսե՛ին, իւր արե՛-  
ին, իւր շե՛նե՛ին, իւր ծախե՛ին:



170. (352) Գրաբարին կատարեալն ալ գործեցի , նոյն է աշխարհաբարին կատարեալին հետ , որ է գործեցի , զոր օրինակ .

Եթէ արժանի ինչ մահու գործեցի , ոչ զանդիտեմ 'ի մեռանելոյ . Եթէ մահու արժանի բան մը գործեցի , մեռնելէն չեմ վախնար :

Այսպէս ամեն բայ , զոր օրինակ .

Իբրեւ ետեւ զնա հայրն , գնացաւ , յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ , անկաւ զպարանոցաւ նորա եւ համբուրեաց զնա . Երբոր հայրը զանիկայ տեսաւ , գընաց , ելաւ դիմացը Վաղէց , անոր վիզն ինկաւ ու զանիկայ համբուրեց :

171. (353) Գրաբարին Հրամայականն ալ գործեալ , գործեցե՛ք , աշխարհաբարին հրամայականին հետ նոյն է , որ է գործե՛ք , գործեցե՛ք , զոր օրինակ .

Որդեակ , երթ այսօր գործեալ յայգւոջ . Որդեակ , այսօր զնա այդին գործե՛ք : Զամենայն ինչ գործեցե՛ք առանց տրանջելոյ եւ քրթմնջելոյ . Ամեն բան առանց տրանջելու ու մրմուալու գործեցե՛ք :

Այսպէս ամեն բայ , զոր օրինակ .

Ա՞՞ զգօտի քո . արհ զձորձս քո եւ եկ զկնի իմ . Գօտիդ կապե՛, լաթերդ հագե՛ր ու ետեւէս եկո՛ւր :

172. (354) Գրաբարին Այաւանին ընդհանրապէս աշխարհաբարին ապառնելոյն չի պատասխաներ . ուստի , գործեցե՛ց՝ պիտի գործեմ ըսել չէ , այլ ի՞նչ գործե՛՞մ \* ըսել է , որ տեսակ մը ապառնի է , զոր օրինակ .

---

\* Աշխարհաբարին մէջ ի՞նչ գործե՛՞մ որ Ներկայ է , շատ ան .



Լուսայց քեզ, յորժամ չարախօսք քո եկեսցեն. քեզի մտիկ կ'ընէ՞՞, երբ ամբաստանողներդ դան: Գու առ այժմ երթ, եւ յորժամ ժամ լիցի, կուչեցեց դքեզ. Գուն հիմակու հիմա գնա, երբ պատենու թիւն ըլլայ, քեզ կը կանչէ՞: Զայս ամենայն փայ քեզ, եթէ անկեալ երկիր պաղանիցես ինձ. Աս ամենք քեզի կու փամ, եթէ երեսի վրայ իցնալով ինձի երկրպագութիւն ընես: Աչ Գործեցեց զՏէր. Տէրը չէ՞ Գործեր:

173. (356) Գարձեալ գրաբարին ապառնին շատ անգամ ստորագասական է, կամ ստորագասականին տեղ ալ կը գործածուի. ուստի Գործեցեց, կը նշանակէ նաեւ որ Գործէ՞, զոր օրի.

Խորհուրդ արարին զի զկապեալն սպանցեն. Խորհուրդ ըրին որ կապեալներն սպանեն: Զինչ կամիս զի արարեց. Ի՞նչ կ'ուզես որ ընէ՞: Կամիս զի երկեցուտ. կ'ուզես որ երկանտ:

174. (357) Գրաբարին ապառնին աշխարհաբարին ապառնուոյն կը պատասխանէ, այս ինքն՝ Գործեցեց, պիտի գործեմ, կը նշանակէ, մինակ սպառնական կամ մարդարէական, այս ինքն գուշակելով եղած խօսքերու մէջ, զոր օրինակ.

Արեգակն խաւարեացի եւ լուսինն ոչ փայլէ զլոյս իւր. Արեգակը պիտի խաւարի, ու լուսինն իր լոյսը չպիտի փայլէ:

---

գամ Ապառնի նշանակութիւն մը կ'առնէ. եւ գրաբարին ապառնին ստորաբար աշխարհաբարին առ ապառնուոյն կը գառնայ:



175. (358) Գրարարին մէջ աշխարհաբարին  
ապառնւոյն ճշդիւ պատասխանող ժամանակը՝  
սա ձեւն է . Գործելոց ե՞՞, պիտի գործեմ . Գոր-  
ծելոց էի , պիտի գործէի . Գործելոց էցե՞՞, պիտի  
գործեմ .

Ա. Գործելոց ե՞՞ ձեւը՝ բուն ապառնի է . եւ  
գալու ժամանակի մէջ , զոր օրինակ՝ վաղը ,  
գալ շաբաթ , գալ ամիս , գալ տարի , պիտի  
Գործե՞՞ ըսել է , զոր օրինակ .

Իբրեւ գիտաց Յիսուս թէ Գալոց են յափշտակել  
զնա, զի արասցեն թագաւոր . Յիսուս երբ խնա-  
ցաւ թէ զինք յափշտակելու պիտի Գան որ թագա-  
ւոր ընեն : Լսելոց է+ պատերազմունս եւ համբաւս  
պատերազմաց . Պատերազմներ ու պատերազմի լու-  
րեր պիտի լսէ+ : Մուրուսթիւնն զիւաց խաբեաց ըզ  
զիւցապաշտա Հայոց եթէ գոմն Արտաւազդ անուն  
արգելեալ իցէ զիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ  
նա ելանելոց է եւ ունելոց գաշխարհս . Գիւաց մուր-  
ուսթիւնը Հայոց զիւցապաշտները խաբեց թէ՛ զե-  
ւերն Արտաւազդ անունով մէկը բանտարկած են,  
որ ցարդ կենդանի է, ու պիտի ելէ եւ աշխարհիս  
պիտի Գերէ : Կանխաւ գիտաց զՅակոբայ թէ առաքի-  
նի վնելոց է, եւ զԵսաւայ՝ թէ յանպիտանութիւնս  
Կործանելոց է . Առաջուց գիտցաւ թէ Յակոբ առաքի-  
նի պիտի ըլլայ, եւ Եսաւ անպիտանութեանց մէջ  
պիտի էցնայ : Յառաջագոյն հայեցեալ 'ի նախանձա-  
ւորութիւնն Յովսիայ՝ ազդ արար կանխագոյն թէ  
յաւնելոց է 'ի նոցանէ թագաւոր, որ զկապաշտու-  
թիւն որդւոցն Եսրայելի եղծանիցէ . Յովսիային նա-  
խանձաւորութիւնը յառաջագոյն տեսնելով՝ կան-



խառ խնացուց թէ անոնցմէ թաղաւոր մը պիտի ելէ որ Իսրայէլի որդւոցը կռապաշտութիւնը ջնջէ:

Բ. Գործեաց էի ձեւը՝ անցեալ ապառնի է, եւ կը նշանակէ բան մը որ ապառնի ժամանակէ մը ետքը, պիտի ըլլայ. զոր օրինակ.

Սա է որ զկնի իմ գալցն էր. Աս է որ ինէ ետքը պիտի գար: Մովսէս եւ Եղիա երեւեալ փառօք՝ առնէին զեկիցն նորա զոր կատարեաց էր յերուսաղէմ. Մովսէս ու Եղիա փառօք երեւնալով՝ կը խօսէին ան բաներուն վրայ զորոնք Երուսաղէմի մէջ պիտի կատարէր: Յառաջագոյն խրատէր զնոսա, թէ պէտք էր խօսէր թէ չէին նմա լսեաց. Չանոնք առաջուց խրատեց, թէ պէտք էր խօսէր թէ իրեն պիտի չլսէին: Ասան Արարտի Պարսկի ասէր թէ արձակեաց էր զգերիա ժողովրդեանն. Պարսկի Արարտին համար կ'ըսէր, թէ ժողովուրդին գերիները պիտի արձակէր:

Գ. Գործեաց էցե՞ ձեւը՝ ստորագասական ապառնի է, պիտի գործե՞ կը նշանակէ, եւ գործեաց է՞ ին տեղ կը գործածուի, երբ խօսքը թէական, հարցական կամ տարակուսական է, զոր օրինակ.

Իսկ կէսքն ասէին, միթէ 'ի Գալիլէէ գալց էցե Քրիստոսն. Ոմանք ալ կ'ըսէին, Քրիստոսը Գալիլեայէն պիտի գայ: Մեր ական ունէաք թէ նա իցէ որ իրիւրեցն էցէ զԻսրայէլ. Մենք կը յուսայինք թէ Իսրայէլն ան պիտի իրիւրէ: Ընդէր աշխատ առնիցեն որ չէցեն անսալաց. Ինչո՞ւ կը յոգնեցնեն անոնք որ պիտի ճորի չլսեն:

176. (362) Գրարարին ստորագասականը գործեցե՞, ընդ հանրապէս աշխարհաբարին ստորա



դասականին հետ նոյն է, որ է գործէ՞:

Ստորադասականը կը գործածուի սովորաբար,

Ա. իբր օրինակ կամ ենթադրութիւն բերուած խօսքեր բացատրելու, զոր օրինակ.

Նման է ազգս այս մանկուոյ որ նապէցն 'ի հրապարակս, կարգացնն զընկերս իւրեանց եւ ասիցն. Փողս հարաք ձեզ եւ ոչ կաքաւեցէք. ողբացաք ձեզ եւ ոչ կոծեցարուք. Աս ազգը կը նմանի տղոց, որոնք հրապարակները նապէն, իրենց ընկերներուն կանչն ու ըսնն. Ձեզի փող հարինք ու չկաքաւեցիք, ողբացինք ու կոծ չըրինք:

Արպէս յորժամ իցէ որ ուրուք թշնամի, եւ թարուցեալ զթշնամութիւնն գաղտ կածիցէ մնասել, եւ չքիտիցէ զհանգամանս մնասակարութեանն, եւ շուրջ եկեալ յածիցէ հնարս խնդրել. ապա գտեալ ժամանակ յորժամ որ 'ի բժշկաց թշնամուոյ նորա պատուէր քացե յայս ինչ չհալել, եւ յայս նիչ կերակրոց չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, վաղվաղակի 'ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պարսաւիցէ, եւ զօգտակարան նմա մնասակարս թելադրեալ կարծեցոցանիցէ, եւ պատուէրս հակառակ հրամանաց բժշկին քացե, եւ այնու առնիցէ նմա մնաս. Ննչպէս երբոր մէկը մէկուն թշնամի ըլլայ, եւ թշնամութիւնը ծածկելով՝ գաղտ մնաս ընել քալէ, բայց մնաս ընելուն եղանակն ալ չքիտնայ, ու հնարք փնտռելու պարի. ետքը բժշկի մը անոր թշնամոյն պատուէր տուած ատեն՝ թէ այս ինչ բանին չմօտենայ, այն ինչ կերակուրէն չուտէ որ առողջութեանը հասնի, պատեհութիւն գտնելով եւ բարեկամութիւն կեղծելով բժիշկը պարսաւի,



օգտակարներն անոր մնասակար կարծեցնէ, բժշկին հրամաններուն հակառակ սխառութիւնք պայ, ու այնպէս անոր մնաս ընէ:

Բ. Ստորադասականը տարակուսական կամ անստոյգ խօսքերու մէջ կը գործածուի . ուստի դրարարին մէջ թեական, հարցական եւ բացասական խօսքերու մէջ սովորաբար Ստորադասական կը գործածուի, երբ գործողութիւնը ներկայ կամ Սպառնի\* է, զոր օրինակ .

Եթէ ոք աճիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո նմա եւ զմիւսն. Եթէ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ մը շարնէ, մէկալն ալ անոր դարձուր: Եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա. Եթէ հոն ողջունի որդի կայ, ձեր ողջոյնն անոր վրայ հանգչի: Միթէ +աղբե՞ն 'ի փշոց խաղող. Փուշերէն խաղող կը +աղբե՞: Բարեացն արարիչ եւ չարեաց ո՞քան զո՞ հարուստ իցէ. Բարւոյն ու չարին արարիչներէն ո՞քն աւելի զօրաւոր է\*\* : Զիցէ՞ ընթերցեալ ձեր զոր արարն Գաւիթ:

\* Թեական եւ հարցական խօսքեր, ինչպէս աշխարհարարին, նոյնպէս դրարարին մէջ, կրնան ներկայով ալ բացատրուիլ. ուստի վերի խօսքերն այսպէս ալ կ'ըլլան. Միթէ քաղե՞ն 'ի փշոց խաղող. Բարեացն արարիչ եւ չարեաց, ո՞քան զո հարուստ է:

\*\* Եթէ գործողութիւնն աճեալ է, թեական, հարցական եւ բացասական խօսքեր աճարարով կամ կորարեալով կը բացատրուին. զոր օրինակ, Եթէ գեղեկ գի՞նչ է, « Զողորմութիւն կամիմ եւ ոչ զգո՞՛՛ », ոչ դատապարտէիք զանմեղսն. Եթէ « ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զո՞՛՛ » խօսքին ի՞նչ ըլլալը գեղեցիկ, անմեղները չէիք դատապարտէր: Եթէ իմ շէն եւ ի՞նչպէս ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. Եթէ



2. Անորիշ Դերբայ :

177. Ձի Շաղկապով դիմաւոր Բայր շատ անգամ Անորիշ դերբայի զօրութիւնն ունի, զոր օրինակ :

Ձի ներող եւ արդահատող է արարիչն՝ այն ամեն նեցուն իսկ յայտնի է. փոխանակ ըսելու՝ ներող եւ արդահատող լինելն արարչին յայտնի է ամեն նեցուն :

Այլ դի Աստուած մահուան չէ պատճառ՝ վկայեաց է ամենարուեստ իմաստունն. այսինքն՝ Ոչ լինելն Աստուծոյ պատճառ մահուան՝ վկայեաց է իմաստունն :

Եւ դի ճշմարիտ է բանս՝ յայտ անտի է դի . . . . այսինքն՝ ճշմարիտ լինելն բանիս անտի յայտ է դի . . .

Եւ դի բարեաց կամեցող է Աստուած՝ ուսուցանէ մեզ Տէր յասելն, եւ այլն. այսինքն՝ Զլինելն Աստուծոյ կամեցող բարեաց՝ ուսուցանէ մեզ Տէրն :

Եւ եկած ու անոնց հետ խօսած ըլլայի, յանցանք չէին ունենար : Ի՞նչո՞ւ զայս ամենայն, ասեն ցնա. Այո, Տէր. Աս ամենք հասկըցա՞ք, Այո, Տէր, ըսին : Եթէ ննջեաց, ապա սպրի. Եթէ քնացաւ, կ'ազատի :

Աս խօսքերուն մէջ, ինչպէս յայտնի է, Բեախն եւ հարցախն բայերուն գործողութիւնը անշեւ է, այսինքն արդէն եղած է :

Բայց ո՞ւր խօսքերուն մէջ գործողութիւնն ապաւնի է, այսինքն՝ տակաւին պիտի ըլլայ :

Եթէ անիցի՝ հաւատս քան զհատ մանանխոյ եւ ասիցէք թիմենւոյս այսմիկ, խլեաց եւ անկեաց 'ի ծովու, հնազանդեցի ձեզ : Եթէ մանանխոյ հատէն ալ չիլ հաւատք անինս, եւ այլն : Եթէ ոչխար ուրուք անինիցի 'ի խորխորատ 'ի շաբաթու, Բեթ ո՞չ անիցի եւ յարուցանիցի զնա. Եթէ մեկուն ոչխարը շաբաթ օր խորխորատ էյնայ, անիկայ չի բռնեց, չի լերցանիցի :



Այլ զի դեւ զգեւ ոչ հանէ՝ զայն իսկ յայտ ա-  
րար. այսինքն՝ Զոչ հանէն եւս զիւր զգեւ յայտ ա-  
րար. Գիւին դեւ չհանելն ալ իմացուց:

178. Ասոր հակառակ շատ անգամ զկամ թէ  
Շաղկապով Գիւմաւոր բայն՝ Անորիշ դերբայի  
կը փոխուի, եւ ան ասեան է որ Տէր բային Տը-  
րական կրնայ դրուիլ, եթէ զՇաղկապին Բայը  
յայտնի Տէր բայի ունի, զոր օրինակ.

Աամիմ՝ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս  
ծնանել, եւ այլն. փոխանակ ըսելու, Աամիմ զման-  
կամարդքդ ամուսնացին, որդիս ծնցին, եւ այլն: Աը-  
ւաք զգորա խօսել բանս հայհոյութեան. այսինքն՝  
Աուաք զի խօսէր դա: Պատասխանի ետուն չգիտել.  
այսինքն՝ թէ չգիտեն հակառակէին չլինել յարու-  
թեան. (Տրական). այսինքն՝ Հակառակէին թէ չիք  
յարութիւն: Ժողովուրդն որ կայր եւ լսէր՝ ասէին  
որոտումն լինել, այսինքն՝ Ասէին թէ որոտումն  
լինի. Ննջել ասեն զիրք զԱստուած եւ զարթնուլ.  
այսինքն՝ Գիրք ասեն թէ Աստուած ննջէ եւ զարթ-  
նու. Եւ եզեւ բանալ երկնից. փոխանակ, Եւ եզեւ  
զի բացան երկինք: Բերին ջուր լուանալ դոտս նո-  
ցա. Ել Նսահակ զբօսանել 'ի դաշտի. Ն մէջ լերանց  
զնասցեն ջուրք արբուցանել զամենայն զազանս  
վայրի. Ակնարկէին որսակցացն զալ օղնել նոցա.  
Եզ զնոսա (զլուսաւորս) Աստուած 'ի հաստատու-  
թեան երկնից լուսատու լինել յերկիր, եւ իշխել  
տուրնջեան եւ զիշերոց. Ոչ եւս եզիցի ջրհեղեղ  
ջուրց ասպականել զամենայն երկիր. Եզիցին լու-  
սաւորք ծագել յերկիր. Ոչ ասպաքէն զի քննեացեն  
զքաղաքս եւ զիտել զերկիրս եկին. Մխիթարէր  
զնոսա զի մի վհատեացին, այլ կալ եւ մարանջել



քաջութեամբ. Տայր ցաշակերտան (ղնկանական) արկանել ժողովրդեանն. Յաղօթս կայէք չմտանել 'ի փորձութիւնս. Պատուիրեաց նմա մի ումեք ասել. Եղիցիս կոյր չտեսանել զարեւ:

179. Աս տեսակ խօսքերուն մէջ Անորիշ գերբային Հայցականը կամ Տրականը 'ի կամ ... 'ի, ... նախադրութիւնն ալ կ'առնէ, զոր օրինակ.

Ի լսել եկեալ եմ. այսինքն՝ դի լուայց. Ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց 'ի սատակել զամենայն մարմին. Ոչ աչայ պիտանութիւն (գործածութիւն) էր 'ի տեսանել, ոչ ականջք (էին) 'ի լսել, եւ ոչ ունչք առ 'ի ձգելոյ դօդ, եւ ոչ մատունք ձեռայ առ 'ի շօշափելոյ. Առ լաւութեանցն խելամուտ լինելոյ. Ձիոյ սանձս 'ի բերան զնեմք առ անաւոյ նոցա մեզ. Հաղիւ լուցուցանէին զժողովուրդսն 'ի չզոհելոյ նոցա. Լուցուցէ զչրթունս իւր 'ի չխօսելոյ զնենգութիւն. Ոչ եթէ առ ատել հաստատեցեր ինչ. Առ խրատել զքեզ. Ասն արծաթոյն մտանեմք առ 'ի խուզելոյ զմեզ:

180. Աս տեսակ խօսքերուն մէջ Անորիշ գերբայն առանց նախադրութեան լսի Տրական ալ կը դրուի, զոր օրինակ.

Օտարոտի ինն դից թուի պատմիչ լինելոյ. այսինքն՝ Թուի թէ իցէ պատմիչ, եւայլն: Նորա ակն ունէին նմա այսնոյ կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ. այսինքն՝ Ակն ունէին թէ այտոնուցու կամ անկանիցի, եւայլն: Մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի: այսինքն՝ Մի կրթել դի տացէք պատասխանի. Ոչ էր կարող մերժելոյ ըզչարն. Ճամանակի սպասէր իւրում անմտութեանն



օգնական գտանելոյ. Գուհոյս առ գուհոյս կազմեալ  
ցեն հանելոյ զհէնն յաշխարհէն. Աչ ոք եբաց զգուրս  
տանն հայելոյ 'ի ներքս. Աչս ամէին փախչելոյ 'ի  
տեղւոջն. Ետ նոցա իշխանութիւն հանելոյ զայսս  
պիղծս:

181. Անորիշ դերբային Հայցականը 'ի կամ  
ընդ նախադրութեամբ թնշ, թնդրեա, իբրեւ, արեւը  
կը նշանակէ, զոր օրինակ.

Ի Զնանելն Յիսուսի. Ի դաւանալ արդարոյն յարդա-  
րութենէ. Ի Պաւղոսի բողոքելն. Եւ եղև 'ի մկրտել  
ամենայն ժողովրդեանն եւ ընդ Յիսուսի մկրտելն  
եւ կալ յաղօթս՝ բանալ երկնից. Ընդ երթալն նո-  
րա ժողովուրդքն նեղէին զնա. Ընդ խօսելն նոցա  
եւ ընդ վիճել, եւ ինքն իսկ Յիսուս մերձեցաւ եւ  
երթայր ընդ նոսա. Ընդ յափշտակել նաւին, եւ 'ի  
չհանդուրժել ընդդէմ հողմոյն՝ թոյլ տուեալ եր-  
թայաք եւ գայաք. Ընդ անցանելն Պետրոսի գոնէ  
հովանի նորա հասցէ ումեք 'ի նոցանէ. փոխանակ  
ըսելու, Իբրև ծնաւ Յիսուս. Իբրև դարձցի ար-  
դարն. Մինչ երթայր նա՝ ժողովուրդքն նեղէին ըզ  
նա. Մինչդեռ խօսէին նոքա եւ վիճէին եւայլն.  
Աշխարհարար՝ Գարձաժ ատենը, ծնած ատենը, խօ-  
սած ատենը, եւայլն:

182. Անորիշ դերբայը թնշեւ նախադրու-  
թեամբ այնպէս զի, անանկ որ կը նշանակէ, զոր օ.

Մինչեւ չմնալ 'ի նոցանէ ասրեալ. Այնպէս որ ա-  
նոնցմէ ազատող չեղաւ: Մինչեւ մտանել նմա 'ի  
նաւն. փոխանակ, Այնպէս զի եմուտ նա 'ի նաւն.  
Մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նո-  
րա. Մինչեւ հծծել ընդ միմեանս. Մինչեւ տեղի եւս



ոչ լինել. Մինչ դալ խոնել. Մինչ դրեթէ լի խկ  
լինել:

183. Մնորիչ դերբայը կրկնուելով, ապառէն,  
Բեպէտէ- կը նշանակէ, զոր օրինակ.

Տալ էրո- կնիք եւ տանն Ստեփանեայ. Իրաւ Ստե-  
փանին ընտանիքն ալ մկրտեցի. Ունել ունէր պար-  
ծանա, այլ ոչ առ Աստուած. այսինքն՝ Թէպէտ եւ  
ունէր պարծանա, այլ ոչ առ Աստուած: Որ յասպա-  
րիղին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան,  
բայց մի ոք առնու զյաղթութեանն. այսինքն՝ Թէ-  
պէտ եւ ամենեքին ընթանան: Ունել ունէին իւր,  
այլ ոչ բաւական. Միրել սիրեն, այլ ոչ սերտիւ.  
Առնուլ առ 'ի ձեռս զիշխանութիւնն, բայց ոչ կարէր.  
Առնել արարեր ողորմութիւն, այլ ոչ այնչափ որչափ  
կինն այրի. Յանհիւթ ապառած տեղին որ, թէպէտ  
վարել վարիցեմք, անմասն եղեալ 'ի պաղոյն զրկի:

5. Անցեալ դերբայ.

184. Անցեալ Դերբայն ալ իբրեւ, յորժամ, ելե  
շաղկապներով Դիմաւոր բայի տեղ կը դրուի,  
զոր օրինակ.

Եւ ճորեալ 'ի կափառնաում, մատեաւ առ նա հա-  
րիւրապետ մի. փոխանակ՝ Իբրեւ եմուտ 'ի կափառ-  
նաում, եւ այլն: Եւ ճանապարհ արարեալ յերու-  
տաղէմ, ասէ ոմն ցնա. այսինքն՝ Իբրեւ ճանապարհ  
արար, եւ այլն: Եւ բախեալ զգուրս տանն, մատեաւ  
ազախին մի ունկն գնել. այսինքն՝ Իբրեւ բախեաց  
նա զգուրս տանն, եւ այլն: Եւ նորա զայս պատաս-  
խանի տուեալ, Փեստոս 'ի ձայն մեծ ասէ. այսինքն՝  
Իբրեւ նա զայս պատասխանի ետ, եւ այլն: Եւ հրամայ-



եալ Փետտոսի, ամին զՊաւղոս. Իբրեւ հրամայեաց  
Փետտոս, եւ այլն: Գորա ինքնին կալեալ բողոք առ  
քաջարանցն, խորհեցայ յղել. այսինքն՝ Իբրեւ բո-  
ղոք կալաւ նա, եւ այլն:

185. Ներդործական բայերուն Անցեալ դեր-  
բայը ոչ իբր ածական եւ ոչ իբր գոյական  
կրնայ դործածուիլ, ուստի չըսուիլ:

Տուեալ պարգեւն քո. Ասացեալ բանն մեր. Ա-  
ռաքեալ պատգամաւորք նորա. Տուած պարգեւդ.  
Ըսած խօսքերնիս. Ղրկած պատգամաւորները:

Ասանկ խօսքեր՝ Յարաբերականով ու Դի-  
մաւոր բայով կը բացատրուին, այսպէս:

Պարգեւն զոր ետուր. Բանն զոր ասացաք. Պատ-  
գամաւորքն զորս առաքեցին:

186. Կրաւորական բայերուն Անցեալ դեր-  
բայը թէ իբր ածական եւ թէ իբր գոյական  
կրնայ դործածուիլ, զոր օրինակ:

Կառաց խորտակելոց. Կորստած կառքերու: Ոգւոց  
էրկելոց. Կորստելոց. Փրկուած, կորսուած հողիներու:  
Բանիցն ասացելոց. Ըսուած խօսքերուն: Չալիան կո-  
տակալ. Դիզուած ալիքները: Ձեռք կառնել. Ծունկք  
կենցեալ. Գանձի թափելոց յազարակի. Ուռկանի ար-  
կելոց՝ ի ծով. Կոյս խօսեցեալ առն. Նեղեւիտն յայսոց  
պղծոց բժշկէին. Պիղծ հողիներէն նեղուածները.  
Բժշկել զբեկեալ. Աղատել զբերեալ. Մի ոմն՝ է կառնելոց:

187. Չէղոք բայերուն Անցեալ դերբայն ալ  
թէ իբր ածական եւ թէ իբր գոյական կը  
գործածուի, եւ աշխարհաբարի մէջ ոչ նշա-  
նակու թիւնը կ'ունենայ, զոր օրինակ:



Արանց անկէլաց, Վեռնաց, Եկէլաց, Ինկող, մեռնող,  
 եկող մարդոց: Ո՞վ է մեծ, Բաղճեա՞ն էթէ սպասա-  
 ւորն. Ո՞վ մեծ է, նստո՞ղջ էթէ սպասաւորը: Եւ ասէ  
 ցեկէալն 'ի վերայ նորա. Իր վրայ եկողներուն կ'ըսէ:  
 Ո՞ յերեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ  
 անկէլայն 'ի ձեռս աւաղակաց. Աւաղակներուն ձեռքն  
 ինկողին: Ոչ կամիմ էթէ սոգէտք իցէք վասն ննջեցե-  
 լոցն. Մեռնողներուն համար, եւ այլն:

Ե. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

188. Երբեմն ասն նախադրութիւնը իրմէ ետ-  
 քը շ նախդիրը կ'առնէ, թէեւ խնդիրը հայ-  
 ցական չլլայ, զոր օրինակ.

Զինչ առաւելութիւն է իմաստնոցն քան զանմը-  
 տին. Զի ամաց էր այրն աւելի քան զքառասուն.  
 Ապա երեւեցաւ աւելի եւս քան զհինգ հարիւր եղ-  
 բարց միանդամայն. Արամբ միով որ խուժադուժ  
 եւս էր տեսանելով քան զմտօքն թանձրութեան.  
 ԶՆիկանովր 'ի ձեռն գումարէր ոչինչ պակաս քան  
 զքառասուն հազարաւ. Որ յառաջածանօթ էր նախ  
 քան զ'ի սկզբանէ աշխարհի. Առաւել ունկն դնէր  
 մանկտւոցն քան զձերոցն իմաստնոց. Նախ քան  
 զամենեցուն քեզ հանգիստ առնիցես. Մեղօքն՝ քան  
 զբաղում քարամբք եւս չարաչար կոշկոճի. Բանն  
 աստուածպաշտութեան տարածանիցի ոչ նուազա-  
 գոցն քան զառաքելովքն. Այս շինուած յետոյ է քան  
 զՏրովացւոց պատերազմն աւելի քան զչորեքհա-  
 րիւր երեսուն եւ երիւք ամօք:

189. Ճիշդ ասոր նման կը գործածուին եր-  
 բեմն իբրեւ եւ «բոլե» բառերը, զոր օրինակ.



Իբրև զգծնդակ բռնաւորի ումեք կան 'ի հարկի. Ոչ համբերէր նոցա իբրև շեփրեմեան գնդին. Սպասաւորէր նմա յոյժ սիրով իբրև զՏօր. Զայս աւմենայն պարգեւէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց որպէս զհոներմաց. Զեռնուլ խորհրդովքն, եւ իբրև զհրով տոչորել:

Ս, յնպէս է որպէս զհայհոյիչն. Ոչ այնպէս մեղանչելն, որպէս զանյոյսն լինել կորուսանէ. Եղիցին իբրև զպատերազմողք որ ճակատիցին. Լինիցիմք իբրև զհեղեակք:

Նախադրութեանց վրայ տես եւ ընդ 121-123:

2. ՄԱԿԲԱՅ

190. (392) Ա.դ. Մակրայ է, եւ կընշանակէ Երեւ, զոր օրինակ .

Զոր ինչ եսս գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց ապա գիտաս ջիր. Գուն հիմա իմ բրաճներս չես գիտեր, բայց Երեւ պիտի գիտնաս: Նախ վասն մեղաց իւրեանց մատուցանելին պատարագս, եւ ապա վասն ժողովրդեանն:

Գարձեալ ապա Շաղկապ է, եւ կընշանակէ Երեւ, զոր օրինակ .

Եթէ մատամբն Աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ. Եթէ Աստուծոյ մատովը դեւերը կը հանեմ, ապա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է:

Ապա Շաղկապը՝ Երեւ, շաղկապներով ալ կը գործածուի, զոր օրինակ .

Սիմոն, թագաւորք յուսմէ՞ ասնուն զհարկն. նա



տոյ. Յօտարաց. ասէ ցնա Յիսուս. Ապա ուրե՞ն աս-  
զատ են որդիքն: Ապա է՞նէ եւ սատանայ բաժանե-  
ցաւ յանձն իւր, զիսորդ կայցէ թագաւորութիւնս  
նորա.

191. Եւ Շաղկապ է՝ երբ ու կը նշանակէ .  
Մակբայ է՝ երբ ու կը նշանակէ , զոր օրինակ .

Օն եկայք է՝ մեք, զի ընդ նմա մեռցուք. Հապա,  
եկէք, մենք ու (երթանք) որ անոր հետ մեռնինք:  
Արա է՝ զիս իբրեւ զմի 'ի վարձկանաց քոց. Իս ու  
քու վարձուորներէդ մէկն ըրէ: Ստոյգ է՝ սա ընդ  
նմա էր. Ստուգիւ աս ու անոր հետ էր:

Աս իմաստով երբեմն ալ կը կրկնուի , զոր օ .

Յիրաւի պատժեցան, է՝ նա (սատանայ) է՝ մարդն  
զոր յօժարեցոյց յանաստութիւնն:

192. (396) Եւ ալ նոյն նշանակութեամբ կը  
գործածուի , եւ Մակբայ է . զոր օրինակ .

Յաւել միւս է՝ ծառայ յղել, նոքա եւ զնա է՝  
դան հարին. Ուրիշ ծառայ մ'ու զրկեց. անոնք ան  
ու ծեծեցին: Ոմն մերկանայ զհանդերձս ընկերին.  
եւ եթէ ընդդէմ դառնայցէ, յարեւէ է՝ արկանէ:

Եւ երբեմն ու է՝ կը նշանակէ . եւ բաղդա-  
տական խօսքերու մէջ Աժականի կամ Մակ-  
բայի հետ կը գործածուի , զոր օրինակ .

Քակեցից զշտեմարանս իմ, եւ է՝ մեծամեծս շի-  
նեցից. Ոչ ոք արկանէ կապերտ նոր 'ի վերայ հնա-  
ցեալ ձորձոյ. ապա թէ ոչ առնու նորն 'ի հնոյ ան-  
տի, եւ չար է՝ պատառումն լինի:

193. (398) Գոյցէ , բերեւ Մակբայներն ան-  
խտիր իրարու տեղ գործածել աղէկ չէ :



Գո֊ցէ կը գործածուի , երբ գործողութեան  
կատարուիլը շէնք ուզեր ու կը վախնանք թէ  
կ'ըլլայ . ուստի քաջ թէ կը նշանակէ , զոր օրի .

Գո֊ցէ, մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցորեանն  
ընդ նմին 'ի բայ խլիցէք . Զքաջ թէ որոմը քաղած  
ատեննիդ՝ ցորենն ալ մէկտեղ բրցնէք : Արձակել  
զդոսա նօթիս չկամիմ, Գո֊ցէ նքթիցեն զճանապարհ  
հայն : Ասեն յիմարքն (կուսանք) ցիմաստունն . Տուք  
մեզ յիւղոյդ ձերմէ . Իմաստունքն ասեն . Գո֊ցէ ոչ  
իցէ մեզ եւ ձեզ բաւական . այլ երթայք 'ի վաճա  
ռականս եւ գնեսջիք ձեզ : Ասեն (Հրեայքն) ցՊի  
ղատոս . Հրամայեա զգուշանալ (առնել պահպանու  
թիւն) գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս . Գո֊ցէ  
եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա : Ար  
թուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայ  
ցէ . Գո֊ցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ 'ի  
քուն : Առեալ զմակոյկն յօգնականութիւն կապէին  
ընդ նաւն, երկուցեալք թէ Գո֊ցէ 'ի յորձանուան  
անկանիցին : Ճնշեմ զմարմինս իմ, զի Գո֊ցէ, որ այ  
լոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ :

Ասոր հակառակ՝ Թեբե֊ս կը գործածուի , երբ  
գործողութեան ըլլալը կ'ուզենք , եւ կը յու  
սանք թէ պիտի ըլլայ , զոր օրինակ .

Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր, եւ ասէ .  
Թեբե֊ս ամաչեացեն յորդւոյ աստի իմմէ : Ասէ ցնա  
այգեգործն . Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ  
շուրջ զդովաւ բրեցից եւ արկից աղբ . Թեբե֊ս ա  
րասցէ պտուղ : Ապաշաւեա դու 'ի չարեացդ . Թեբե֊ս  
թողութիւն լիցի քեզ : Հաստատեաց ժամանակս  
խնդրել զԱստուած, զի Թեբե֊ս զննիցեն զնա եւ գը



տանիցեն: Ընդ ամենայնի ամենայն եղէ, զի Ռեբե-  
ապրեցուցից զամանա: Հանդարտութեամբ խրատեա  
զհակառակողսն: Ռեբե-ա տացէ նոցա Աստուած ա-  
պաշխարութիւն:

Ինչպէս յայտնի է, եթէ գոցէ եւ Ռեբե-ա իրա-  
րու տեղ դրուին, կրնայ հակառակ խմատ  
ելլել:

194. (401) Ոչ կամ շ, Բացասական մակբայ  
են. եւ, բաց 'ի հրամայականէն, ուրիշ ամեն  
ժամանակի հետ կը գործածուին, զոր օրինակ.

Հայեցարուք 'ի թռչունս երկնից, ոչ վարեն եւ  
"չ հնձեն եւ "չ ժողովեն 'ի շտեմարանս. Ոչ գոյր  
նոցա տեղի յիջեւանին. Չերկնչիս յԱստուծոյ զի 'ի  
նմին պատժի կաս. Եթէ գիտէր տանուտէրն յորում  
ժամու գող գայ, հսկէր եւ չտայր թոյլ ական հա-  
տանել 'ի տան իւրում. Մտայ որ գիտիցէ զկամս  
տեառն իւրոյ եւ "չ պատրաստեացէ ըստ կամաց  
նորա, արբցէ գան բազում. եւ որ "չ գիտիցէ եւ  
արժանի գանի ինչ գործեացէ, արբցէ գան սակաւ.  
Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել  
շանց:

Ոչ, նաեւ Հարցական մակբայ է, ու "չ ապա-  
ռէն, չէ մի, կը նշանակէ, զոր օրինակ.

Ո՞չ երկոտասան ժամ է աւուր. Ծրը տասուեր-  
կու ժամ չունի մի: Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել  
Քրիստոսի: Ո՞չ եւ սիրտք մեր ճմլէին 'ի մեզ, մինչ  
խօսէրն ընդ մեզ զճանապարհայն:

195. (403) Չէ, Բացասական մակբայ մըն է,  
եւ, գե- "չ կը նշանակէ, զոր օրինակ.



Աին գու, շէ-է հասեալ ժամանակ իմ: Անիկ, ժամանակս դէ- հասած չէ: Չէ- եւս գիտէին զգիրան. Դէ- գիրքերը չէին գիտեր:

Մինչէ- ալ նոյն նշանակու թիւնն ունի :

Մինչէ- հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս գիտ. Դէ- հաւը չխօսած իս երեք անգամ պիտի ուրանաս: Մինչէ- բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք եւ ոչ երկիր եւ ոչ այլ ինչ արարած, Չրուան ոմն անուն էր: Մինչէ- ծնեալ էին, եւ Տինչէ- բարի ինչ կամ չար գործեալ էր, ասացաւ թէ՛ Երէցն կըրտսերոյն ծառայեսցէ:

196. (405) Չէ+, Բացասական բառ մըն է որ Սահմանական ներկայ եղակի երրորդ դէմբայի զօրութիւնն ունի, եւ՝ ոչ Գոյ, չկայ, կը նշանակէ, զոր օրինակ .

Ես եմ Աստուած, եւ չէ+ այլ ոք. Աստուած ես եմ, եւ ուրիշ մը չկայ: Չէ+ ոք բարի բայց մի Աստուած. Մէկ Աստուծմէ դատ բարի չկայ: Չէ+ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի. Մածուկ բան մը չկայ որ չյայտնուի:

197. (406) Մէ ալ Բացասական մակբայ է, բայց արդեւիչ խօսքերու մէջ, ապառնելոյ, ստորադասականի եւ հրամայականի հետ կը գործածուի, զոր օրինակ .

Դատերք Երուսաղէմի, Տէ լայք 'ի վերայ իմ. Մէ առնուցուս զանուն Աստուծոյ քո բնդունայն. Յորժամ առնիցես ողորմութիւն, Տէ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. Արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ, որպէս զի տայցէ նոցա վկայութիւն, զի Տէ եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց:



198. (407) Արդեօտ, Ռէ Մակրայները՝ հարցական խօսքերու մէջ կը գործածուին:

Արդեօտ կը դուրսի նախ՝ երբ հարցնողը չգիտնալով կամ տարակուսանօք կը հարցնէ, զոր օրինակ.

Ո՞րք արդեօտ իցէ սա, զի եւ հողմք հնազանդին սմա: Գիտիցես արդեօտ զոր ընթեռնուցուսդ: Մի արդեօտ դու իցես Նգիպտացին:

Երկրորդ՝ արդեօտ կը նշանակէ նաեւ, արդարեւ, ապաւին, անշուշտ, զոր օրինակ.

Եթէ գիտէիր ո՞վ է որ ասէդ ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու արդեօտ խնդրէիր 'ի նմանէ. Եթէ՛ Ննծի ջուր տուր, ըսողն ո՞վ ըլլալը գիտնայիր, անշուշտ դուն անկէ կ'ուզէիր: Եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօտ զի մի մատնեցայց Հրէից:

Մէրէ, ոչ տարակուսական, այլ հաստատական հարցումներու մէջ ալ կը գործածուի. երբ հարցնողը գիտէ ու կը հարցնէ. զոր օրինակ.

Մէրէ օրէնքն մեր դատին զմարդ, եթէ ոչ լսեն ինչ նախ 'ի նմանէ:

199. (408) Ո՞ր, տեղ ցուցնող Մակրայ է, զոր օրինակ.

Ո՞ր եսն իցեմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. Ո՞ր եղիք զնա. Ո՞ր իցէ նա:

Դէպ 'ի տեղ մը շարժում ցուցնելու համար՝ յ՞ ալ կը գործածուի, զոր օրինակ.

Յ՞ երթայց. Յերեսաց քոց յ՞ փախեայց:



Ուր, միանգամայն Շաղկապ է, եւ Տնչ կը նշանակէ, զոր օրինակ .

Չեն ինչ դարմանք եթէ նոքա (հրեշտակք) մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուանին, ուր եւ նոցա արարիչն ոչ գարչի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ. Չարմանք չէ որ անոնք մեր դրացի արարածներուն անուններովը կ'անուանուին, Տնչ կամ ուր ուր անոնց արարիչն ալ անանկ անուններ վրան առնելէ չի գարչիր:

200. (409) Շատ անգամ հորոված բառ մը, նախադրութեամբ կամ առանց նախադրութեան, իբր Մակբայ առնել՝ լեզուին մէջ սովորութիւն եղած է, զոր օրինակ . Համաօպիւ, Այգուան, Ի զուր, Աւօրի, Չճանապարհայն, Ընդ առաւօպս, եւ այլն :

Է. ՇԱՂԿԱՊ

201. 1<sup>o</sup>. Եւ Շաղկապը ու կը նշանակէ, եւ երկու բառ կամ խօսք իրարու հետ կը կապէ .  
2<sup>o</sup>. Եւ Շաղկապը դարձեալ Տնչ ի նշանակութիւն ունի, զոր օրինակ .

Ի միջոյն է՝ 'ի խոնարհ' հուր. Ի միջոյն է՝ 'ի վեր' իբրեւ զտեսիլ փայլական. Ի քսանամենից է՝ 'ի վեր. Կոտորեաց զամենայն մանկունս որ էին 'ի Բեթղահէմ, յերկեմենից է՝ 'ի խոնարհ. Ի լուսնոց է՝ 'ի վեր զամենայն ինչ անմահ համարել. Անտի է՝ 'ի խոնարհ. Յերկնից է՝ այսր. Ի քէն է՝ այսր է փքինն. Յօրէն ութերորդէ է՝ անդր. Ի նմանէ է՝ անդր. Անտի է՝ այսր:



3<sup>o</sup>. Եւ Շաղկապը հետեւեալ օրինակներուն մէջ այլ եւ այլ առում ունի . եւ այլ եւ այլ կերպով աշխարհաբարի կը դառնայ , զոր օրի .

Այն ինչ վարդապոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, Եւ նոքա, կողմանքն երկօքին, ընդ միմեանս խառնէին. Եղիցի քեզ որ պէս Եւ կամիս. Քանիցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ Եւ թողից նմա. Այ, հայր Աբրահամ, բայց եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա Եւ ապաշխարեացեն. Արք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն Եւ կորնչին. եւ որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն Եւ դատեացին. Եկեացէ, յորժամ Եւ պարապեացէ. Յորոց յորժամ Եւ կամիցի՝ Եւ մեկնել կարող է. Արոնցմէ՝ երբ որ ուզէ, կրնայ ետ կենալ: Այնչ այնպէս ուրախ առնէ զԱստուած՝ որպէս Եւ վարք առաքինիք. Արպէս զիարդ Եւ ուսաւ 'ի վարդապետէն՝ Եւ արար. Ընդ հրամանին՝ Եւ առնէին. Հրամայելուն պէս՝ կ'ընէին: Եւ որհօքն Աստուծոյ եմ զինչ Եւ իցեմ. Առ որ զինչ ոք Եւ կամէր՝ խառնէր. Զինչ Եւ խնդրեացեն՝ եղիցի նոցա. Զինչ Եւ խնդրեացեն յԱստուծոյ՝ տացէ նոցա. Ա ոք Եւ երթայր առ նոսա. Այր ուրուք Եւ դիպէր ծնունդն. Զոյր ինչ ուրուք Եւ առեալ իցէ. Արով իւիք Եւ յաղթիցի ոք՝ նորին Եւ ծառայ է. Ժողովեցին զամենեսեան զորս Եւ գտին. Յոր պէտս իրաց Եւ կոչեացէ զձեզ. Զորեքին բնութիւնքն ուստի աշխարհս կազմեալ՝ Եւ կայ. Արոյ թողեալ ըզ ճշմարտութիւն հոգւոյն՝ Եւ նստի առասպելս կարկատէ. Սակաւ ինչ երեւեալ՝ Եւ անդէն ամփոփէր:

202. (446) Զ Շաղկապ է , եւ քանի մը առում ունի .



1<sup>o</sup>. Կը նշանակէ Կանգ, ինչու որ, զոր օրինակ.

Գուք յոյժ մոլորեալ էք, զի ոչ գիտէք զգիրս, եւ զգորութիւնն Աստուծոյ. Գուք խիստ մոլորած էք, ինչու որ գիրքերն ու Աստուծոյ գորութիւնը չէք գիտեր:

2<sup>o</sup>. Կը նշանակէ «բռն» զի, որ. եւ իրմէ ետքը եկող բայն Ապառնի կամ Ստորագասական կ'ուզէ, զոր օրինակ.

Ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին. Ըսէ որ սա քարերն հաց ըլլան:

3<sup>o</sup>. Կը նշանակէ, ընդէ՞ր, ինչո՞ւ համար, զոր օրինակ.

Զի՞ տեսանես զշիղ ական եզբօր քո. Եզբօրդ աչքին մէջի շիւղն ինչո՞ւ համար կը տեսնես: Զի՞նչ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ:

203. (447) Իսկ Շաղկապ է, եւ կը նշանակէ, Բայց, ալ, զոր օրինակ.

Իսկ Պետրոս ուրացաւ եւ ասէ. Ոչ գիտեմ զնա, կին դու. Պետրոս ալ ուրացաւ, եւ այլն: Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն. Սա է ժառանգն, եւ կայք սպանցուք զսա. Մշակներն ալ երբոր տեսան, եւ այլն:

204. (438) Իսկ բառը հայերէնի մէջ յաճախ գործածութիւն մը ունի, եւ կը գործածուի.

1<sup>o</sup>. Գերանուեններու հետ, եւ կը նշանակէ, նոյն ինչն, ալ, զոր օրինակ.

Նոքին իսկ արարածք իւրաքանչիւր փոփոխամարք յայտ առնեն, եթէ է ոմն որ փոփոխէ զնոսա: Զի-



անդ պաշտօնացեալք զհուր որում զքեզ խօսել կրկնորդ  
արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝  
վառիցես, եւ յորժամ կամիցիս՝ խափուցանիցես.  
Եթէ որդի ուրուք չիցէ մտաւարժ, բազում անգամ  
զժառայ այր առաջի նորա գան հարկանեն, զի 'ի  
նա հայեցեալ լինիցի մտաւարժ. ապա եթէ եւ այ-  
նու եւս ոչ խրատիցի, 'ի նա խօս մատուցանեն ըզ  
տանջանան. Երբեմն հարկանէ զանասուն մեր, եւ  
երբեմն զանգս եւ զայգիս, զի ընդ այն հայեցեալ  
մտցուք ընդ լծով կրկիւղին Աստուծոյ. ապա եթէ  
այնու եւս ոչ խրատիցիսք, 'ի մեզ խօս մատուցանէ  
զտանջանան. Մի ոք լիցի դատաւոր 'ի միջի մերում,  
այլ քո խօս օրէնքն զոր զրեցեր: Չինչ եւս պիտոյ է  
մեզ վկայութիւն, զի մեզէն խօս լուաք 'ի բերանոյ  
զորա:

2<sup>o</sup>. Գոյականներու հետ կը գործածուի բռն,  
ալ, նշանակութեամբ, զոր օրինակ .

Ի մարդոյ խօս առ օրինակ. զի յորժամ գայ 'ի չափ  
հասակի մարդոյ, յայնժամ միտի 'ի չարիս. Բուն  
մարդէն օրինակ առ, եւայլն: Այսու յայտ առնեն  
թէ զյարութիւն խօս մարմնոյ խափանել կամին.  
Ասով կը ցուցնեն թէ մարդոց յարութիւնն ալ խա-  
փանել կ'ուզեն: Նա եւ 'ի տէրունական խօս փոր-  
ձանացն իմանալի է, թէ չէ (սատանայ) կանխադէտ-  
է երբէք զի վասն մեզաց խօս լինին այսպիսի տան-  
ջանք. Երբեմն մեզքի համար ալ ասանկ տանջանք-  
ներ կ'ըլլան: Այլ զի մի 'ի մէնջ եւ եթ լսիցէք, ըզ  
զիրան խօս ընթերցարուք:

3<sup>o</sup>. կը գործածուի Ածականներու, Մակ-  
բայներու եւ Բայերու հետ, նոյն նշանակու-  
թեամբ, զոր օրինակ .



Եթէ Աստուած չէր կանխագէտ եւ ամենագէտ, ապա եւ կարարեալ իսկ չէր. եթէ Աստուած կանխագէտ չլլար, կատարեալ ալ չէր ըլլար: Ասան որոյ եւ ընդունայն իսկ եղեւ յոյս նոցա. Անոր համար յոյսերնին ընդունայն ալ եղաւ: Այն իսկ մեծ եւ զարմանալի է, զի մարդն վառեալ Աստուծոյ օգնականութեամբն՝ յաղթիցէ սատանայի. Ուստի յայտ իսկ է թէ հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի, այլ ծախումն. Արքունական է քաղաքն (երկինք). ոչ որպէս աստ ՚ի վաճառս եւ յարքունիս բաժանեալ, այլ այն աֆելե-ին իսկ արքունիք են. Արդարեւ իսկ չարիքն որ լինին՝ ՚ի տարակուսի կացուցանեն ըզբազումս. Բնա իսկ, ասեն, յետ թիւրեւոյն սատանայի եւ խարելոյ զմարդն՝ ընդէ՞ր իսկ ոչ երարծ ՚ի միջոյ. Եւ չարագործն, Ֆնչրեւ իսկ ՚ի գործ չարագործութեանն իցէ, եթէ ոք չարագործ կոչէ զնա, ըմբոստանայ. Որպէս յառաջագոյն իսկ ասացաւ, որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել. Այլ եւ փրկէր իսկ ընդէր զայլոյ արարածս, զոր իւր չէր արարեալ. Եւ զօրէնան զիմրդ իշխէր դատաւոր խնդրել. մանաւանդ զի եւ գիտէր իսկ թէ պարտաւորեն զնա օրէնքն եւ ոչ արդարացուցանեն:

205. (449) Ինչ բառը իբրեւ թարմատար կամ զարդ հայերէնի մէջ յաճախ գործածութիւն մը ունի .

1<sup>o</sup>. Սովորաբար էական բայով խօսքերու մէջ ստորոգելոյն հետ կը գործածուի, երբ խօսքը բացասական կամ թէական կամ հարցական է, զոր օրինակ .

Ոչ եթէ կարօր ինչ ոք իւր էր, եթէ վասն այնու-



րիկ խնայիցէ զկենդանութիւնն. Այ թէ հարօր մէկն էր որ կենդանութիւնը խնայէր: Այ եթէ անօր ինչ որ եղեւ նա յԱստուծոյ, եթէ չգիտէր եթէ որ ինչ ըստ Աստուծոյ կամացն լինի՝ բարի է, եւ որ ինչ արտաքոյ քան զնորա կաման՝ այն չար է. Չէր ինչ Տէ գործ Աստուծոյ զսատանայ ինքնին անձամբ սպանանել, այլ թերեւս կարծիք ինչ 'ի մէջ մտանէին թէ հաստար ինչ որ էր նա Աստուծոյ, եւ աճապարեաց 'ի միջոյ երարձ. Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ, ապա չգտանէր ինչ ամենեւին 'ի նմա օգտակար. Որ չար ինչ է, նորա եւ ամենայն ինչ մնասակար է. Եթէ բռնասոր (զօրաւոր) որ ինչ էր, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օձան եւ ապա միտէր 'ի փորձութիւնն. Գարութիւն կամ ճարտարութիւն (քերթողութիւն) կամ բժշկութիւն ոչ եթէ անյիշ ինչ են, այլ, եւայլն. Են զաւր որ ոչ վասն մեղաց են, եւ ոչ յԱստուծոյ ինչ 'ի փառս, այլ 'ի շիշուելոյ (յանհաւասարակշռութենէ) խառնուածոյ. Այ եթէ 'ի դատարարութեան ինչ ոգւոյ լինին մարդոյն տանջանքն դիւաց, այլ առաւել եւս յարգահաստութիւն: Չեն ինչ զարձանք եթէ նաքա (հրեշտակք) մերոց գրացեաց արարածոց անուամբքս անուանին, ուր եւ նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ. Եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխէր զկերպարանն յինչ եւ կամէր:

2. Մակբայի կամ մակբայօրէն գործածուած գործիականի \* հետ կը գործածուի, զոր օրի.

---

\* Գործիականը հայերէն որպիսութիւն ցուցնող Մակբայի զօրութիւն ունի, զոր օրինակ. Քաջութեամբ մեռցուք փոխանակ՝ Քաջութեամբ մեռցուք:



Ուստի լինիցի նոցա զճշմարիտն ուսանել, եւ մեզ ոչ 'ի զոր ինչ զբանս ծախել. Ոչ ընդ զայս ինչ ասացեալ է բան իմաստնոյն թէ, եւ այլն. Յորժամ երեւել սրբոց իւրոց կամէր, մարդոց կերպարանօք յայտնէր, եւ այն ոչ զայսպապ ինչ լինէր, այլ զի զառաւել սէրն իւր զոր ընդ մարմնոյն ունէր, ցուցանիցէ: Ոչ եթէ անիրաւութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ իրաւամբք զճշմարիտն ուսանել: Նոյնպէս յորժամ դուստր զմայր անարդիցէ, եւ նու (հարս) ըզկեսուր իւր, եւ կին զայր, թէ ինչ տարցին ընդ միտոր անարդեցանն:

3<sup>o</sup>. Հարցական խօսքերու մէջ կը գործածուի, եւ արդեօ՛տ, թէ՛նէ, բառերուն զօրութիւնը կ'ունենայ, զոր օրինակ.

Հարցցուք զՀիւղեայն. Պարզ ինչ բնութիւն իցէ եթէ յօդուածով. Հիւլէին համար հարցնենք. արդեօ՛տ պարզ տարր էր թէ բազադրեալ: Օգուտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ. Արդեօ՛տ ըրած զոհս օգուտ ունի: Մարդիկ յանձանց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս, եթէ յԱստուծոյ լեալ իցեն:

4<sup>o</sup>. Մասնական կամ անորոշ մտքով (որես ինչ 127 Գ.) առնուած բառերու հետ, զոր օրինակ.

Եթէ նշանս ինչ ոչ տեսանիցէք, ո՛չ հաւատայք. Եթէ նշան չտեսնէք՝ չէք հաւտար: Եթէ 'ի գետս 'ի կանանց ինչ կերպարանս երեւիցին, սատանայի կերպարանք են. Եթէ գետերու մէջ կանանց կերպարանքով երեւան, սատանայի երեւոյթներ են. Ուտել արժարս ինչ խոտոց. Խոտերու արժարներ ուտել:

5<sup>o</sup>. Բայի հետ կը գործածուի, եւ բնամակբային զօրութիւնը ունի, զոր օրինակ.



Ոչ խոսովէին ինչ, եւ ոչ զճարտար ինչ ամէին. Բնա-  
 չէին խռովիր, ոչ ալ բնա մտքէ կ'անցնէին: Ոչինչ  
 այսպիսի զմտաւ ամին, եւ ոչ խօսեցան ինչ: Ասանկ  
 բան մը չխորհեցան, բնա չխօսեցան ալ: Պարտ էր  
 անկանել 'ի ձեռս Հերովդի, եւ ոչ զնաւել (եւ) ինչ:  
 Հերովդէսին ձեռքն իյնալու էր, ու բնա մնասուե-  
 լու չէր:

206. (450) Իբբէ- եւ Ռնչրէ- Շաղկապները  
 տարբեր առում ունին :

Իբբէ- , լոկ ժամանակ մը , դէպքի մը պատա-  
 հած ատենը ցուցնելու համար է , եւ աշխար-  
 հաբարին երբ ին կը պատասխանէ , զոր օրինակ .

Իբբէ- լուան զայս 'ի թագաւորէն, գնացին. Երբ  
 թագաւորէն աս լսեցին, գացին:

Մինչրէ- կամ Ռնչ, բանի մը տեւողութեան  
 ատենը՝ ուրիշ բան մը եղած կը ցուցնէ , եւ  
 աշխարհաբարին մէջ արեւն բառով աւելի աղէկ  
 կը բացատրուի , զոր օրինակ .

Մինչրէ- նա զայս ամէր զմտաւ, ահա հրեշտակ  
 Տեառն երեւեցաւ նմա. Ան աս խորհած արեւը՝ ա-  
 հա Տէրոջը հրեշտակն անոր երեւցաւ: Զինչ են  
 բանքդ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս, Ռնչրէ-  
 գնայքդ. Գացած ատեննիդ վիճածնիդ ինչ է: Մինչ-  
 րէ- նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ  
 Որմզդի 'ի ժամու իւրում լուսաւոր եւ անուշահոտ՝  
 եկն եկաց առաջի Զրուանայ:

207. (453) Մինչ- Նախադրութիւն է , եւ կը  
 նշանակէ ինչ-ան , զոր օրինակ .



Ասեն հալիւքն. Եկայք երթիցուք Տնչեցեթ-  
դահէմ եւ տեսցուք. Սկսաւ Յիսուս ասնել եւ ու-  
սուցանել Տնչեցեցիս պատուիրելոյ առաքելոցն:

Մնչեցեցեալ է, եւ կը նշանակէ, այնպէս,  
ան աստիճան որ, եւ իրմէ ետքը գրեթէ միշտ  
աներեւոյթ կ'ուզէ, զոր օրինակ.

Եւ դայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, Տն-  
չեցեցեաց եւս ոչ ժամանել ուտել նոցա. ժողովուր-  
դը դարձեալ անոնց հետ կու գայ, այնպէս որ հաց  
անգամ չեն կրնար ուտել: Հասն մանանխոյ յոր-  
ժամ աճիցէ, լինի ծառ Տնչեցեցեալ թռչնոց երկնից  
եւ հանգչել յոստա նորա. Մանանխոյ հասը երբոր  
մեծնայ, ծառ կ'ըլլայ, այնպէս որ երկինքին թռչուն-  
ները կու գան ու անոր ոստերուն վրայ կը հանգ-  
չին:





# ՄԱՍ Գ.

## ՇԱՐՊԱՍՈՒԹԻԻՆ

208. Շարաղասութիւն կամ Շարաղասութիւնը՝ բառերուն խօսքի մը մէջ ունեցած կարգն է :

209. Կարգը կրկին է . ֆերականական եւ Չեւանոր : ֆերականական կարգը խօսքին բնական կարգն է : Չեւանոր կ'ըսուի կարգը՝ որ ֆերականութեան կամ Շարաղասութեան ձևերուն մէջ կ'օգտուի :

## ԳԼՈՒԹ Ս.

### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

#### 210. ԳԻՏԵԼԻՔ

Ա. Որ եւ իցէ խօսք մէկ կամ աւելի նախադասութենէ կը բաղկանայ :

Բ. Նախադասութիւն կ'ըսուի խօսք մը՝ որուն մէջ դիմաւոր բայ մը կայ . եւ դիմաւոր բայ մը եղած տեղ՝ հարկաւ յայտնի կամ լռելեայն Տէր բայի մը եւ Ուղղական խնդիր (ստորոգելի) մը կայ , զոր օրինակ . Աստուած է արդար . Դու ես զի . Նախադասութիւններ են , եւ ամեն մէկուն մէջ Դիմաւոր բայ մը է , եւ , Տէր բայի եւ Ուղղական խնդիր կան :



Երբ բայն ածական բայ մըն է , այսինքն  
էական բայէն զատ ուրիշ բայ մը , Ռւղղական  
խնդիրն էական բային հետ միացած կ'ըլլայ .  
զոր օրինակ , Ննջեմ , նշող եմ . Սիրեմ , սիրող եմ ,  
ըսել է :

Գ. Խօսքի մը մէջ որչափ Գիմաւոր բայ կայ ,  
այնչափ նախադասութիւն կայ , զոր օրինակ .

Որ սիրէն զիս՝ սիրեցի 'ի հօրէ իմմէ . Եթէ առնիցես  
ողորմութիւն , մի գիտացի ձախ քո զինչ գործե աջ քո :

Աս խօսքերուն առջինին մէջ՝ երկու նա-  
խադասութիւն , երկրորդին մէջ երեք նա-  
խադասութիւն կայ . քանզի առջինին մէջ երկու  
Գիմաւոր բայ կայ , երկրորդին մէջ երեք :

Դ. Թէպէտ նախադասութեան մը էական  
մասերն երեք են , Տէր բային , Բայն ու Ռւղ-  
ղական խնդիրը , շատ անգամ նախադասու-  
թեան մէջ աս երեքէն զատ ուրիշ բառեր ալ  
կը գտնուին . Այսինքն՝ նախադասութեան մը  
մէջ կրնան գտնուիլ՝ Ածական , Բացայայտիչ ,  
Յատկացուցիչ , Խնդիր եւ Մակբայ :

Ե. Տէր բայիէն , Գիմաւոր բայէն եւ Ռւղղա-  
կան խնդրէն զատ՝ նախադասութեան մը մէջ  
գտնուած ուրիշ բառեր՝ արդիւնէն կամ յատկութեան  
կը կոչուին , եւ նախադասութեան էական մա-  
սերուն , այսինքն՝ Տէր բայիին եւ Ռւղղական  
խնդրոյն կամ Բային իմաստը լրացնելու (ամբ-  
բողջացնելու , որոշելու ) կը ծառայեն , զոր օր .



Աստուած ճշմարիտ արարիչ է երկնի եւ երկրի:

Աս խօսքին մէջ ճշմարիտ ամականը լրացուցիչ կամ յաւելուած է Աստուած Տէր բայիին . երկնի եւ երկրի յատկացուցիչներն ալ արարիչ Ուղղական խնդրոյն լրացուցիչը կամ յաւելուածն են :

Գու խորհիս զայդ 'ի սրտի +ում:

Աս խօսքին մէջ զայդ , 'ի սրտի +ում խնդիրները լրացուցիչ են խորհիս բային , կամ լաւ եւս ըսենք՝ խորհող ուղղական խնդրոյն . (քանզի խորհիս խորհող ես , ըսել է) :

Նա տրտմեցաւ յոյժ:

Աս խօսքին մէջ ալ՝ յոյժ Մակբայը լրացուցիչ է արտօնեցաւ բային , կամ արտօնաւ ստորոգելոյն . (քանզի արտօնեցաւ՝ արտօնաւ եղեւ ըսել է) :

211. Նախադասութեան մը բառերը +երականական կարգով շարելու հանուններ :

1°. Նախադասութեան մը Տէր բային ամենէն առաջ կը դրուի , ետքը Բայը , ետքը Ուղղական խնդիրը , այսպէս .

Ես եմ հովիւ . Գու ես մէմ . Նոքա խորհեցան . Այրն էր մեծատուն :

2°. Եթէ նախադասութեան մը Տէր բային , կամ Բայը կամ Ուղղական խնդիրը լրացուցիչ կամ յաւելուած մը ունին , լրացուցիչը կամ յաւելուածն՝ անմիջապէս լրանալի բառէն ետքը կը դրուի :



Չոր օրինակ , եթէ Տէր բային ածական մը , կամ Բացայայտիչ մը , կամ Յատկացուցիչ մը ունի՝ ասոնք Տէր բայիէն անմիջապէս ետքը կը դրուին : Բային կամ Ուղղական խնդրոյն համար ալ նոյն բան է , զոր օրինակ .

Այրն այն էր մեծատուն . Այրն Յոգք էր արդարեւորաբն Յոգեփոխիչին յեգեպոս . Նա էր իշխան երկրն . Եւ նա տրամեցաւ յոյժ . Տեսի զէն ՚ի ներոյ իցենոյն :

Աս խօսքերուն մէջ ալ կարգը բնական է , քանզի լրացուցիչները լրանալի բառերուն անմիջապէս քովը եւ անոնցմէ ետքը դրուած են :

3. Եթէ բառ մը երկու լրացուցիչ ունի , զոր օրինակ՝ Ածական մը եւ Բացայայտիչ մը , կամ Ածական մը եւ Յատկացուցիչ մը , բառէն անմիջապէս ետքը նախ Ածականը կը դրուի , ու ետքը Բացայայտիչը կամ Յատկացուցիչը , զոր օրինակ .

Այրն այն , Յոգք , էր մեծատուն . Բշխոյն Ռժ հարսոյ եկն տեսանել զՍողոմոն :

Նոյնպէս եթէ Բայ մը երկու խնդիր ունի , Սեռի եւ Բնութեան , սովորաբար նախ Սեռի խնդիրը կը դրուի խնդրառու բայէն անմիջապէս ետքը , եւ ապա Բնութեան խնդիրը , զոր օրինակ .

Գու խորհիս զայր ՚ի սրտի Կոմ . Հերովդէս սպան զՅակովբոս սրտէ



4. Եթէ լրացուցիչն ալ ուրիշ լրացուցիչ ունի, զոր օրինակ՝ Յատկացուցիչ մը ուրիշ Յատկացուցիչ, կամ Խնդիր մը ուրիշ Խնդիր մը՝ միշտ լրացուցիչը լրանալի բառէն ետքը կը գրուի, զոր օրինակ .

Կապանք յեւաց նորա լուծան. Իբրև լուան զհաւանել նոցա 'ի Կապան. Կոչեաց զերհոսս 'ի ծառայեց Խորոց:

Բոլոր առ օրինակներուն մէջ շարադրութեան կարգը բնական է. քանզի ամենուն մէջ ալ նախ Տէր բային, ետքը Բայն ու ետքը Ստորոգելին գրուած է: Երկրորդ՝ լրացուցիչները լրանալի բառերէն անմիջապէս ետքը գրուած են:

ԳԼՈՒԽ Բ.

ՁԵՒԱԻՈՐ ԿԱՐԳ

212. Ձեւաւոր կարգը՝ քերականական շրջակերուն պատճառաւ կ'ըլլայ, որոնք Շարահասո-նեան յետեր կը կոչուին, եւ հետեւեալներն են . Արտո-ղը-նի-ն, Ձեղը-ճ, Ա-եւադրո-նի-ն, եւ Բակարո-նի-ն :

Ա. ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

213. Երբ նախադասութեան մը բառերը բնական կամ քերականական կարգէն տարբեր կերպով շարուած են, նախադասութիւնը ձեւաւոր է, եւ խօսքին ան մասը կամ բառը որ



այսպէս իր քերականական դիրքը փոխած է,  
արտադէ կամ շքան կ'ըսուի, զոր օրինակ .

Ան ուրումն մեծատան կտուն անդք տոհմա-  
կանս. Ի միւտանդամ Պաւղոսի յԵրուսաղէմն ելանել-  
Երկուց արարչաց, դբարուոյ եւ գչարի, 'ի միոջէ հօրէ  
զծնունդն համբաւէ. Առ 'ի դխաւարն եւ զատուերն  
զերկուց մեծացն անօթոց 'ի բաց 'ի միջոյ փարա-  
տելոյ. Ասան բազում ժամանակաց մոգութեամբքն  
ապշեցուցանելոյ զնոսա :

Աս խօսքերը շքան են :

214. Արտուղութիւնը կամ Շրջուն կարգը  
երկու է, Հարկաւոր եւ Ազատ :

1. Հարկաւոր արտադրութիւն.

Արտուղութիւնը հարկաւոր է ամեն անգամ,  
երբ կը տեսնենք որ բառ մը իր բնական  
դիրքը պահելով խօսքին մէջ երկդիմութիւն  
պիտի պատճառէ :

Արտուղութիւնը հարկաւոր ընող դէպքերն  
են .

1<sup>o</sup>. Բնական կարգով ածականը, իբրեւ լը-  
րացուցիչ, լրացուցած բառէն, այսինքն՝ իր  
գոյականէն ետքը պիտի դրուի : Բայց հարկ  
է գոյականէն առաջ դնել :

Նախ՝ երբ ածականը բաղմավանկ է, գոյա-  
կանն ալ հոլոված բառ մը : Ասոր պատճառն  
աս է : Ածականը գոյականէն ետքը դրուած  
ատեն՝ անոր հետ մէկտեղ կը հոլովի (3<sup>9</sup>), արդ՝  
բաղմավանկ ածականներ սովորաբար չեն հո-



լովիր , եւ կամ եթէ հոլովելու ըլլան՝ ականջի  
խիստ կամ ծանր կու գան , զոր օրինակ .

Վասն իջանելոյ աստուածեղէն ստորէ հոգւոցն :

Աս խօսքին մէջ եթէ ածականը բնական  
կարգին համեմատ գոյականէն ետքը գնենք ,  
հոլովել հարկ կ'ըլլայ , այսպէս .

Վասն իջանելոյ հոգւոցն սրբոյ աստուածեղէնի :

Յայտնի է որ աստուածեղէն ածականը հոլ-  
ովելն ականջի ծանր է .

Երկրորդ՝ հարկ է երբեմն ածականը գոյա-  
կանէն առաջ գնել , երբ գոյականը հոլոված  
բառ չէ եւ իրմէ ետքը Բացայայտիչ կամ Յատ-  
կացուցիչ մը ունի , զոր օրինակ .

Դասն է աստակիչ կործանածն Հերոզրի :

Յայտնի է որ եթէ աս խօսքին մէջ դասն է  
աստակիչ ածականները գոյականին յետագաս  
ըլլան , այսպէս .

Կործանածն դասն է աստակիչ Հերոզրի .

Հոմ իմաստ կու տան , քանզի ան ատեն դասն է  
աստակիչ Հերոզրի ալ կրնայ հասկցուիլ :

2<sup>o</sup>. Յատկացուցիչը բնական կարգով , իբրեւ  
լրացուցիչ , լրացուցած բառէն , այսինքն՝  
յատկացեալէն ետքը պիտի դրուի . բայց յատ-  
կացուցիչը յատկացեալէն առաջ գնել հարկ է .

Նախ՝ երբ յատկացեալն իրմէ ետքը յարա-  
բերական մը ունի : Ասոր պատճառն աս է որ  
յարաբերականը հոմութիւն չտալու համար ,



( մանաւանդ հայերէնի մէջ ուր սեռի զանա-  
զանութիւնը չկայ) յարաբերեալին անմիջապէս  
քովը պիտի դրուի : Եթէ յատկացուցիչը յա-  
րաբերական ունեցող յատկացեալէն ետքը  
դրուի , յարաբերականը կրնայ շատ անգամ  
թէ յատկացեալին եւ թէ յատկացուցչին վե-  
րաբերութիւն ցուցնել , զոր օրինակ .

Յովհաննոս եղբայրն որ սպանաւ սրով :

Աս խօսքին մէջ եթէ Յովհաննոս յատկա-  
ցուցիչը յատկացեալէն ետքը դրուի , կրնայ  
հասկցուիլ թէ սրով սպանուողն Յովհաննէսն է :

Երկրորդ՝ երբ յատկացուցիչը յարաբերա-  
կան դերանունն է , միշտ յատկացեալէն ա-  
ռաջ կը դրուի , զոր օրինակ .

Կինն՝ որոյ անունն պարօժ ընդ աօնայն աշխարհ :

Որոյ յարաբերականը՝ անուն բառին յատկա-  
ցուցիչն է , բայց անմիջապէս իր յարաբերեա-  
լին կը բառին քովն ըլլալու համար՝ յատկա-  
ցեալէն առաջ դրուած է , ուստի չըսուիր ,

Կինն՝ անուն որոյ պարօժ ընդ աօնայն աշխարհ :

3<sup>o</sup>. Բնական կարգով բայն անմիջապէս Տէր  
բայիէն ետքը կը դրուի : Բայց Տէր բային բա-  
յէն զատել հարկ կ'ըլլայ երբ Տէր բայիէն ան-  
միջապէս ետքը՝ անոր մէկ յատկութիւնը բա-  
ցատրող յարաբերականով միջանկեալ խօսք  
մը (141) կայ , զոր օրինակ .

Յակոբոս զոր սպան շերտիկէս , կոչէր եղբայր տեառն :



Ինչպէս կը տեսնուի , զոր սպան Հերովդէս , միջանկեալ խօսքը Տէր բային Բայէն բաժնած է : Ասանկ միջանկեալ նախադասութիւններ Տէր բային լրացուցիչը կը համարուին , անոր համար անմիջապէս անոր քովը կը դրուին :

Ասանկ խօսքերու մէջ գլխաւոր նախադասութիւնն իր բոլոր մասերովն առաջ ալ կրնայ դրուիլ . բայց ան ատեն Տէր բային վերջը դնել հարկ կ'ըլլայ , որպէս զի յարաբերականն անմիջապէս անոր քովն էինայ , զոր օրինակ .

Եղբայր Տեառն կոչէր Յակոբոս՝ զոր սպան Հերովդէս :

4<sup>o</sup>. Հարցական խօսքերու մէջ հարցում բացատրող անունը կամ ածականն՝ իրեն վերաբերեալ մասերովը խօսքին սկիզբը կը դրուի , զոր օրինակ . Որպէ՞տե՞ս էցէ՞ս խօսքին մէջ սա Տէր բային՝ Բայէն ետքը դրուած է , իսկ որպէ՞տե՞ս բառերը , թէպէտ Ուղղական խնդիր են , խօսքը հարցական ըլլալուն համար խօսքին սկիզբը դրուած են :

Վասն որո՞յ գործոյ կամիք քարկոծ առնել զիս , խօսքին մէջ վասն որոյ գործոյ բառերը որ քարկոծ առնել բային խնդիրն են , ուստի եւ անկէ ետքը պիտի դրուէին , խօսքը հարցական ըլլալուն համար՝ խօսքին սկիզբը դրուած են :

Ձե՞նչ գործ գործեալ է քո . հոս ալ զե՞նչ գործ բառերը որ սեռի խնդիր են գործեալ է բային , եւ անկէ ետքը պիտի դրուէին , խօսքը հար-



ցական ըլլալուն համար՝ խօսքին սկիզբը դըր-  
ուած են :

5<sup>o</sup>. Մակբայները , իբր լրացուցիչ , բնական  
կարգով , լրանալի բառէն կամ բայէն ետքը  
կը դրուին . բայց « և » , « թ » , բացասական մակ-  
բայներն հայերէնի մէջ գրեթէ միշտ բայէն  
յառաջ կը դրուին , զոր օրինակ .

Ոչ եմ , կամ , զեւ արժանի . Ոչ կամիմ . Մի սիրէք :

2. Ազատ արտուղութիւն .

Արտուղութիւնն ազատ է՝ երբ խօսքին քե-  
րականական կարգը փոխել թէպէտ հարկ չէ ,  
այնպէս ընել լեզուն կը ներէ , եւ ականջն ու  
ճաշակը փոյելուչ կը դատեն :

215. Հայերէնի մէջ ազատ արտուղութեան  
սովորական դէպքերն են .

1<sup>o</sup>. Տէր բային բայէն ետքը դնել .

Էր այրն մեծատուն . փոխանակ՝ Այրն էր մեծատուն

2<sup>o</sup>. Ուղղական խնդիրը բայէն առաջ դնել .

Մեծատունն էր այրն . փոխանակ՝ Այրն էր մեծատուն

3<sup>o</sup>. Խնդիր մը խնդրառուէն առաջ դնել .

Ա. Յատկացուցիչը յատկացեալէն առաջ .

Աստուծոյ բարբառ է . Պարէրազմաց սկիզբն յազա-  
հութենէ մարդկան եղեւ . Եթէ Աստուծոյ կա՛նօք  
գործէին այնպիսի չարիք , ընդէր 'ի գործելեաց  
չարեացն վրէժս պահանջէ . Ոչ իշխէ արտայից արտայի  
ճառայ 'ի կայսր խրախուսել , եւ ոչ կայսեր որ ճառ-  
այ 'ի ստամանականն խիզախել :



1<sup>o</sup>. Յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուած ատեն, եթէ յատկացեալը նախդիր կամ նախադրութիւն մը ունի, այն նախդիրը կամ նախադրութիւնը սովորաբար յատկացուցչին վրայ կը դրուի, երբեմն ալ երկուքին վրայ կը կրկնուի, զոր օրինակ.

Սատանայ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմարտութենէն. Առ հնորին սուսեր եւ եհատ ըզ դլուխ նորա. Գիտել զտարեաց փոփոխմունս եւ զաստեղաց դիրս. Մի շանձանց վրէժ խնդրէք. Գարձան յիւրեանց տեղիս. Յամենեցուն մեր անկանելն յերկիր. Ընդ Յիսուսի մկրտելն եւ կազ յաղօթս. Սատանայ յերբայեցւոց եւ յԱսորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի. Յուղղոյն սնանալոյ եւ 'ի մտաց իսկ անկանի մարդն. Զարժանի զվրիժուց զհասուցումն անդրէն յանձն իւր ընկալեալ. Զմեծին Աստուծոյ Արտեմեայ զմեհեանն. Զորոյ ես զդլուխն հատի. Զազնուականի ուրուք զորդի տեսանիցէ ոք յաղակատանս հատեալ. Զայնչափ հոգւոց զորս եհան առ նոքօք յերկինս, զսօսաւիւն դիմրդ ոչ առ նուին. Զօղոյն՝ որ ցայգ ոռնու 'ի խոնաւութենէ ջուրոց, հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն, շքթեցուցանէ 'ի բաց զտամկութիւնն. Զնոցա զբազմութիւն որդւոցն սատակեցեր:

2<sup>o</sup>. Կրնայ նաեւ նախդիրը յատկացելոյն վրայ միայն դրուիլ, զոր օրինակ.

Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնան ուշ եղին. Այլ նոցա որպէս զմորթն զգեհուամք եւ ոչ մնասէ, եւ զմիան, եթէ սիրտ ուրուք առնոյր եւ ուտէր, ոչ մնասէր. Նորա զմիտս հաճէք, այլ զտիե-



զերաց միտս ոչ կարէք հաճել. Քաղաքի միայ մեծի  
գիշխանութիւնն հաւատալ. Երկուց արարչաց, ըզ  
բարւոյ եւ զչարի, 'ի միոջէ հօրէ զճնունդսն համ  
բաւէ:

Յաչաց ելանել բառն ալ այսպէս կը դործած  
ուի, այսինքն՝, նախդիրը նախադաս յատ  
կացուցչին վրայ չի դրուիր, զոր օրինակ.

Շատից յաչաց ելանէին. Աստուծոյ յաչաց ելին.  
Նոյն իսկ հանէ զքեզ առնն յաչաց:

3<sup>o</sup>. Նաեւ երբ նախադաս յատկացուցիչը յա  
րաբերական դերանունն է, կրնայ յատկացե  
լոյն նախդիրը յարաբերական յատկացուցչին  
վրայ չդրուիլ, զոր օրինակ.

Ազգ՝ որոյ ոչ լուիցես զլեզու նորա. Արոյ հուր  
յաչացն արձակիցի. Արոյ զարիւնն Պիղատոս խառ  
նեաց ընդ զոհս նոցա. Արոյ զչափ գիտէր զքրիս  
տոնէութեանն. Արոյ ընդ հարսն երդմունս եւ դա  
չինս արարեր. Արոյ ընդ բարս եւ ընդ գնացս նա  
խանձէին:

Բ. Սեռի կամ Բնութեան խնդիրը բայէն  
առաջ.

Զհաց ձեր հանապազորդ տուր մեզ. փոխանակ՝ Տուր  
մեզ զհաց մեր հանապազորդ:

Յովսէփայ եւ Դանիէլի մեծամեծ իրաց տեսիլք յայտ  
նեցան. փոխանակ՝ Մեծամեծ իրաց տեսիլք յայտ  
նեցան Յովսէփայ եւ Դանիէլի:

Գ. Նախադրութեան կամ ածականի մը խըն  
դիրը՝ նախադրութենէն կամ ածականէն ա  
ռաջ, զոր օրինակ.



Յիճասարտութեան կարօտ. Ի բնակչաց թափուր. Խնկով  
լի. Մարքն հանդերձ. Մէր առաջի. Փորձելոյ վասն.  
փոխանակ՝ կարօտ յիմաստութենէ. Թափուր 'ի  
բնակչաց. Լի խնկովք. Հանդերձ մարքն. Առաջի մեր.  
Վասն փորձելոյ:

Ծովակն որ զնովաւ շուրջ էր. Քան զաւուրս ինչ  
յառաջ. Այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ:

Եթէ նախադրութիւնը նախդիր ունի, կըր-  
նայ խնդիրը նախադրութեան ու նախդրին  
մէջ տեղը դրուիլ, կամ նախդիրը երկուքին  
վրայ ալ կրկնուիլ.

Ի պէս պէս փորձութեանց 'ի մէջ անկանիցիք. Ի յերոս-  
միջի. Զձեր կնի ոչ շրջէր. Զոյր զհետ ելեալ ես.  
Ի ձեր վերայ. փոխանակ՝ Ի մէջ պէս պէս փորձու-  
թեանց. Ի միջի ձերում. Զկնի մեր. Ի վերայ մեր:

Դ. Բացասական մակբայները ոչ թ, եւ հար-  
ցական մակբայները, ընդէ՞ր, զե՞րդ, որպէ՞ս, ո՞ր-  
չա՞ք, կրնան բայէն վերջը դրուիլ, զոր օրինակ.

Խող թաթահերձ է, բայց որոճայ ոչ պիղծ իցէ  
նա ձեզ. Տկարանայ ինչ ոչ քեզ. Գրեցաւ իսկ ոչ  
Եթէ գովեսցես զբանան, եւ առնիցես ոչ, մեծամեծ  
պատիժք են. Յայտ է թէ բնաւ եւ էր իսկ ոչ Զըր-  
ուանն. Նա եւ առնուին իսկ ոչ յանձն. Բնաւ եւ  
յիշեմ իսկ ոչ Որ ոչն գործիցէ, եւ կերիցէ թ. Եւ  
փրկէր իսկ ընդէ՞ր զայլոյ արարածս. Բնաւ իսկ  
սուս ընդէ՞ր կոչիցի. Եւ գոհանային զե՞րդ. Կամի  
զի կանգնեսցէ, եւ կանգնէ ո՞րպէս:

Ե. Շաղկապներէն ոմանք կրնան խօսքին  
սկիզբը դրուելու տեղ՝ մէջտեղը դրուիլ.



Սուղ էլէ լինիցի յերկրի. փոխանակ՝ Նթէ սուղ լի-  
նիցի յերկրի. Բամ էլէ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ  
նոսա. Զի կամակար մաօք էլէ յանցանիցեմք. Զայն  
խեղեղեմ զանկութիւն շահիցն հնարեցաւ. Կոյր կու-  
րի յորժամ առաջնորդէ. Զերմ ճնշդեմ էր իբրեւ զջուր

Բացասական մակրայը շ, ոչ կրնայ, անորիչ  
դերբային վրայ դրուելու տեղ, հրամայել բային  
վրայ դրուիլ, զոր օրինակ.

Զգրաստու թշնամւոյն անկելոյ բեռամբ հրա-  
մայէ զանց առնել. Զուլ 'ի մօր կաթն հրամայէ  
եփել. Ուտել 'ի պտղոյ ծառոյն՝ յոր հուսն հրա-  
մայեաց երթալ. Վասն հողւոյն չտայ հողալ, եւ  
վասն մարմնոյ հրամայեաց տատամսել. Պաւղոս  
հրամայեաց զարդարել կանանց. Զհրամայեաց ու-  
մեք 'ի վեր հանել. փոխանակ բսելու՝ Հրամայէ  
չառնել զանց, չեփել, չզարդարել, եւայլն

216. Տեսակ մը արտուղութիւն ալ կայ. սա  
է որ իրարու հետ անմիջապէս կապակցու-  
թիւն ունեցող բառերու մէջտեղն ուրիշ խօս-  
քեր կը մտնեն, զոր օրինակ.

1<sup>o</sup>. Նախադրութեան ու խնդրոյն մէջտեղը.

Թշնամի կոչի (տատանայ) վասն զորոմն 'ի մէջ ցո-  
բենոյն սերժանելոյ. փոխանակ՝ Վասն սերմանելոյ զո-  
րոմն, եւայլն. Վասն 'ի լաւութիւնս զմարդն յորդո-  
բելոյ. Յետ զաշխարհն ընդ ձեռամբ նոսանելոյ. Առ 'ի  
զաւերն Բաբիլոնի նշանակելոյ:

2<sup>o</sup>. Բացասական մակրային ու բային մէջ  
տեղը, զոր օրինակ.

Մէ, զի չեմք ակն, ասացող՝ թէ չեմք 'ի մարմնոյ



անտի. փոխանակ՝ Մի ասասցուք թէ չեմք 'ի մարմնոյ անտի, այնու դի չեմք ակն. Մի, ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն, կորոսաներ զիս. Մի, վասն զի չէ դիւրին մտաց մերոց կալ 'ի վերայ սկզբան աշխարհիս թէ զիարդ եւ որպէս իցէ, կարծիցե՞՞ թէ անսկիզբն եւ առանց արարչի իցէ. Զի մի, միթարքն որ զբբօքն շողայցեն, արգել հայելոյ 'ի յատակութիւն լուսոյն լիցին. Եւ ոչ, թէ վիշտս ինչ կրիցեն, գփան:

3<sup>o</sup>. Երկու բառէ շինուած նախադրութեանց կամ մակբայից մէջ տեղը, զոր օրինակ .

Ընդ հողմոյն գե՞՞. փոխանակ՝ Ընդդէմ հողմոյն. Գրէ իսկ ինչ ամենայն. փոխանակ՝ Գրեթէ ամենայն.

Այսպէս կ'ըսուի նաեւ .

Այլ ինչ ազգ. Այլ իմն ազգ. Ոչ այսչափ միայն, այլ եւ այլ եւս ազգ. փոխանակ՝ Այլազգ ինչ, Այլազգ իմն, Այլազգ եւս:

4<sup>o</sup>. Երկու բառէ շինուած ասութիւններու մէջ տեղը, զոր օրինակ .

Ասլա եթէ զմարտուսոյցն զճարս ոչ ածիցեն. փոխանակ՝ Ոչ ածիցեն զմտաւ. Արկ Հերովդէս արքայ Յեռն չարչս ընդ զոմաւս. փոխանակ՝ Արկ ձեռն Հերովդէս, եւայլ:

Զի մի, միթարքն որ զբբօք շողայցեն, արգել հայելոյ 'ի յատակութիւն լուսոյն լիցին. Արար Աստուած այց որդւոցն Նարայելի. Յորժամ առաջնորդն ազր, կամ ոտա 'ք կամ ձայնիւ, աւիցե. Զինչ ինչ յայտ օրհնութիւնքն աւիցեն. Յայտ 'ի Յորայ փորձանացն է:

5<sup>o</sup>. Էական բայով ու անյեալ դերբայով բա.



ղաղրեալ ժամանակներու մէջ Էական բային  
ու Մնցեալին մէջ տեղը , զոր օրինակ .

Ես շնեալ իսկ 'ի դմին էճ. փոխանակ՝ Ես ծնեալ  
եմ իսկ 'ի դմին: Որ էր, վասն խոսվութեան իրիք  
եղելոյ 'ի քաղաքին եւ սպանութեան, ճորեալ 'ի  
բանտ. Մինչչեւ ձեր խնդրեալ ինչ էցէ. Ձեւ էցէ հա-  
ւու խօսեալ. Անդ էր նաւն խափեաց դբեռինան:

Բ. ՁԵՂՉՈՒՄ

217. Ձեղշմ կ'ըսուի , երբ խօսքին մէջ խօս-  
քին մէկ մասը , զոր օրինակ՝ Բայը կամ Տէր  
բային կամ խնդիր մը , պակաս կը թողունք ,  
կամ լռելեայն կ'իմացնենք :

Ձեղշում կ'ըլլայ . 1<sup>o</sup>. Տէր բայի . 2<sup>o</sup>. Բայի .  
3<sup>o</sup>. խնդրոց . 4<sup>o</sup>. Դերբայներու . 5<sup>o</sup>. Դերանուն  
ածականներու . 6<sup>o</sup>. Նախադրութեան եւ նախ-  
դիրի . 7<sup>o</sup>. Շաղկապի :

1. Ձեղշմն Տէր Բայիէ .

218. (480) Առաջին եւ երկրորդ դէմքի բա-  
յերուն Տէր բային , ես , ձե+ , դու- , դու+ , սովո-  
րաբար կը զեղչուին : Ուստի կ'ըսուի .

Աամիմք տեսանել զՅիսուս. փոխանակ՝ Մե+ կա-  
միմք: Առչեցի զնոսա. փոխանակ՝ Ես կռչեցի զնոսա:

Բայց երրորդ դէմքի բայերուն դերանուն  
Տէր բայիները , նա , նո+ա , ին+ն , ին+եան+ , հայե-  
լէնի մէջ սովորաբար կը զեղչուին , այսինքն՝  
լռելեայն կ'իմացուին , երբ զեղչուած Տէր բա-



յին՝ նախընթաց բային Տէր բային հետ մի  
եւ նոյն անձը կամ իրն է, զոր օրինակ .

Զակքէսս խնդրէր տեսանել զՅիսուս, եւ ոչ կար  
էր 'ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ:

Աս խօսքին մէջ՝ կարէր, էր, բայերուն Տէր  
բային Զակքէսսն է . անոր համար աս բայե  
րուն վրայ նա դերանուն Տէր բային կրկնել  
հարկ չէ . ուստի աւերորդ է ըսել .

Զակքէսս խնդրէր տեսանել զՅիսուս, եւ ոչ կար  
րէր նա 'ի բազմութենէն, զի կարճ էր նա հասակաւ:

Բայց երբ բայի մը Տէր բային՝ նախընթաց  
բային Տէր բային հետ մի եւ նոյն անձը կամ  
իրը չէ, անոր զատ անուն կամ դերանուն Տէր  
բայի տալու է, զոր օրինակ .

Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրթա  
սեր որդեան՝ քնաց յաշխարհ հետի, եւ անդ զարնեաց  
զինչս իւր, զի կեայր անառակութեամբ. եւ իբրեւ  
սպառեաց զամենայն, եղև սո՛վ սաստիկ յաշխարհին  
յայնմիկ:

Աս խօսքին մէջ՝ քնաց, զարնեաց, կեայր, սպառեաց  
բայերուն Տէր բային դրուած չէ, քանզի ա  
մենուն ալ Տէր բային 'ի սկզբան բացատրուած  
կրթսեր որդին է . բայց եղև բային Տէր բային զատ  
ըլլալուն համար՝ զատ բառով բացատրուած  
է, որ է սո՛վ բառը:

Հետեւեալ խօսքը վերի խօսքին շարունա  
կութիւնն է .

Եւ սկսաւ ինքն (կրտսեր որդին) չքաւորել. եւ



գնացեալ յարեցաւ 'ի մի ոմն 'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ, եւ սա յղեաց զնա յագարակ իւր

Աս խօսքին մէջ յղեաց բային Տէր բային՝ քնացեալ յարեցաւ բային Տէր բային շէ : Քաղաքացիներէն մէկուն յարողն ուրիշ է, եւ զանիկայ իր ագարակը զրկողն ուրիշ է, այսինքն ան քաղաքացին՝ որուն անիկայ զնաց յարեցաւ, անոր համար յղեաց բային շա կամ սա Տէր բային տալու է : Եթէ շա, Տէր բային չդրուի, այսպէս :

Գնացեալ յարեցաւ 'ի մի 'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ, եւ յղեաց զնա յագարակ իւր

այնպէս կը հասկցուի թէ ագարակը զրկողն ան է՝ որ զնաց յարեցաւ, ուստի եւ զրկողը քաղաքացին ըլլալու տեղ՝ անոր յարողը կ'ըլլայ, եւ զրկուողն ալ քաղաքացին, ագարակն ալ ոչ թէ քաղաքացւոյն, այլ անոր յարողինը եղած կը հասկցուի, որ սխալ է :

### Ուրիշ օրինակ :

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա եւ դժացաւ. յարեալ եւ ընթացաւ ընդ առաջ. անկաւ զպարանոցաւ նորա եւ հաճութեաց զնա, եւ ասէ ցնա. Հայր, մեղաց յերկինս եւ առաջի քո. եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո : Եւ ասէ ցճառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմութեանն առաջին եւ ագուցէք նմա :

Աս խօսքին մէջ երրորդ դէմքի բայերուն ամենն ալ Տէր բայի շունին, ուստի եւ ամենուն ալ Տէր բային մի եւ նոյն անձը կը հաս-



կըցուի • բայց ան բայերէն ոմանք տարբեր  
Տէր բայի ունենալուն համար, նոյն խօսքը  
հետեւեալ կերպով պիտի գրուի •

Եւ յարուցեալ զնաց առ հայր իւր • եւ մինչդեռ  
հեռագոյն էր, ետես զնա հայրն եւ զթացաւ • յար-  
եաւ եւ ընթացաւ ընդ առաջ նորա, եւ անկաւ ըդ  
պարանոցաւ նորա եւ համբուրեաց զնա • Եւ ասէ  
ցնա որդին • Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո,  
եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո • Ասէ հայրն  
ցժառայս իւր • Ազգլխադակի հանէք զպատմութեանս  
առաջին եւ ազուցէք նմա •

21<sup>0</sup> • Բացառական խնդիր առնող բառեր  
խնչալէս են անորոշ կամ միջակ անուններ, իբ-  
րեւ Տէր բայի կրնան զեղչուիլ, զոր օրինակ •

Եկն առ իս յեղբարցն իմոց, այսինքն՝ Եկն առ  
իս «Տ» յեղբարց իմոց • Եկին ընդ մեզ եւ յաշակեր-  
տաց անտի, այսինքն՝ Եկին ընդ մեզ «Տա՛» յաշակեր-  
տաց • Եկին եւ առաջի մեր 'ի նոցանէ • Անմեղի ու-  
մեք ոչ դեւք, եւ ոչ 'ի գաղանաց եւ 'ի սողնոց  
կամ յայլ անամնոց կամ 'ի մարդկանէ մնասել կա-  
րասցեն • այսինքն՝ եւ ոչ Տն 'ի գաղանաց • • կամ  
'ի մարդկանէ «+ եւայլն»

22<sup>0</sup> • Ե՛՛ք բայով եւ անցեալ դերձայով շինուած  
բաղադրեալ ժամանակներուն երրորդ դէմքին  
առաջին եւ երկրորդ դէմքի դերանուն Տէր  
բային ալ (որ սեռական հոլով է • տես 111 Բ •)  
երբեմն կը զեղչուի, զոր օրինակ •

Մինչչեւ զասենայն մարմնիս անգամ լուծեալ է •  
այսինքն՝ Լուծեալ է Տը • Զգաւ իթն մի չափեր, զի



տուեալ է զնա հեթանոսաց. այսինքն՝ ի՞նչ տուեալ է զնա. Մինչչեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի գիտեմ զքեզ. այսինքն՝ Մինչչեւ ստեղծեալ էր ի՞նչ զքեզ. Եթէ զգործսն չէր գործեալ 'ի նոսա, մեղինչ ոչ գոյր նոցա. այսինքն՝ Եթէ ի՞նչ չէր գործեալ. Ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին գորութեամբ ինչ կամ քաջութեամբ արարեալ իցէ զզնալդ դմա. այսինքն՝ Արարեալ իցէ Զր. Մինչչեւ խօսեալ իցէ՝ ուսիր. այսինքն՝ Մինչչեւ խօսեալ իցէ +. Զինչ ունիս զոր ոչ իցէ առեալ, այսինքն՝ զոր ոչ իցէ առեալ +.

221. Շատ անդամ բաղադրեալ ժամանակները խօսքին մէջ երկուք են, ան ատեն բային մէկը առաջին կամ երկրորդ դէմք դրուելով, միւս բայը երրորդ դէմք կը դրուի, ու երրորդ դէմքին դերանունը կը զեղչուի.

Զառ 'ի յետոյսն մոռացեալ է, եւ 'ի յառաջագէմսն նկրտեալ եմ. փոխանակ ըսելու՝ մոռացեալ է՞, կամ մոռացեալ է ի՞նչ: Ոչ յերկիր ուրուք մտեալ եմք, եւ ոչ 'ի բաժին յուրուք տարապարտուց ձեռն բռնութեամբ մխեալ է (մեր). Եթէ կացեալ էաք 'ի պատուիրանիդ քում, Տէր, եւ պահեալ էր (մեր) զպատուիրանս զոր եղեր. Որպէս զամենայն ազգս նուաճեալ էր (մեր) եւ 'ի հնազանդութեանս ունէաք. Մինչչեւ տեսեալ էր (նոցա) զնա, եւ մինչչեւ 'ի նախանձուէն էին հաշեալք. Թէեւ բիւրապատիկ յափշտակեալ իցէ (մեր), եւ սակաւ ինչ տայցեմք. Յորժամ զայսպիսի մեծամեծս առեալ իցէ (մեր), եւ սակաւս պահանջիցիմք: Մինչչեւ ծնեալ էին, եւ մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էր (նոցա):



222. Երբեմն զեղչուած Տէր բային երրորդ դէմքի անորոշ դերանուն մը կամ անուն մը կրնայ ըլլալ, զոր օրինակ .

Ձայս ամենայն գրեալ է (առաջնոց, կամ ուրուք) 'ի գիրս ժամանակաց թագաւորացն. Չեւ եւս էր արկեալ (Հերովդի) զՅովհաննէս 'ի բանտ. Եդ 'ի գերեզմանի զոր էր փորեալ (մարդկանն կամ ուրուք) 'ի վիմէ. Տեսին զի թաւալեցուցեալ էր (այլոց կամ ուրուք) զվէմն 'ի գերեզմանէն. Եդ 'ի կռածոյ գերեզմանի ուր չէր բնաւ զոք եղեալ (ուրուք):

2. Բայի զեղչում.

223. Ե՛մ բայով եւ անցեալ դերբայով շինուած բաղադրեալ ժամանակներուն մէջ եւհան, բայը երբեմն կը զեղչուի, զոր օրինակ .

Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, եւ Որմիզդ 'ի վերայ քո արքայ կացուցեալ (լիցի). Տուեալ (եմ) քեզ ընդ այնր վրիժուց զամենեւեան որ կամիցին հաւատալ քեզ. Տուեալ (եմ) քեզ զՀագար նաժիշտ իմ. 'ի նմանէ եղիցի քեզ որդի. Ամենեքեան որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ (եմ) քեզ իշխանութիւն պատուհասել. Որչափ եւ գրէք, իմ արքայի հրաման տուեալ (է) զի մի ոք գտցի դիմակաց. Արքայ, տուր իշխանութիւն եւ սպանից զվիշապդ. եւ ասէ թագաւորն. Տուեալ (եմ, կամ լիցի) քեզ: Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից սլատուիրեալ (եմ) ձեզ, զի եւայլն. Զի ահաւասիկ Հողովեոն յերկիր կործանեալ (է), եւ գլուխ իւր չէ առ նմա. Ոչ կերեալ (է) դորա եւ ոչ արբեալ. Ոչ խօսեալ (է) նոցա երբէք եւ ոչ ի-



մացեալ (է) եւ ոչ դմտաւ ինչ ածեալ (է)։ Նա աւանիկ նորին հոգւոյ միւսով մարդարէիւ յայտ աւրարեալ (է), թէ լոյս է։ Եւ զոր նորա ժողովեալ (է), սա ցրուէ։ Քնացին արք անօրէնք պատմել թագաւորին եթէ Յովնաթան մեքենայս կաղմեալ, շուրջ զբերդաւն պատեալ, յառնուլ պատրաստեալ (է)։ Եւ արքայ Գաւիթ ծերացեալ եւ անցեալ (էր) զաւուրքք, եւ ծածկէին զնա հանդերձիւք եւ ոչ ջեռնոյր։

224. Աս զեղչումը կ'ըլլայ մանաւանդ մինչեւ լեւառերէն ետքը, զոր օրինակ։

Մինչչեւ լերինք հաստատեալ էին. մինչչեւ ըստեղծեալ (էր Աստուծոյ) զերկիր եւ զամենայն տիեզերս։ Ասեմ ձեզ մինչչեւ եղեալ (իցէ), զի յորժամ լինիցի՝ հաւատասցիք։ Չինչ չար քան զօձ կայցէ, եւ 'ի նմանէ թերիակէ. եւ 'ի սպանող դեղոց՝ որք 'ի նենգութենէ մարդկան կաղմեցան, չեւ հասուցեալ եւ անդէն բուժէ։ Մինչչեւ եկեալ առ միւսնա՝ դտաւ յղացեալ 'ի հոգւոյն սրբոյ։ Ի սկրզբանն այնպիսի բանս խօսէր, մինչչեւ զգօրութեանն իւրոյ փորձ ցուցեալ։ Չեւ այդ եղեալ՝ իւրաքանչիւր զբնկեր կոչե՛ք։ Չեւ նստեալ՝ եւ անդրէն եւս յօրհնութիւնն յորդորին։ Մինչչեւ դիմեալք 'ի կռիւն, այլ կային ճակատեալք, եցոյց վերին դօրութիւնն եւայլն։

225. Հետեւեալ օրինակներուն մէջ ալ բայի զեղչում կայ։

Այդ ձեզ օրհնութիւն (է) յաւարէ թշնամեաց տեառն։ Այր եհաս 'ի բանակէ դօրուն Սաւուղայ, եւ հանդերձք իւր պատառեալք (էին), եւ հող ըղ



գլխով (էր). Եկաց քարոզ զօրուն 'ի բանակին եւ  
 ասէ. Իւրաքանչիւր ոք 'ի քաղաք իւր եւ յերկիր  
 իւր (երթիցէ) զի մեռաւ արքայ. Ի ու բարձրու-  
 թիւն Երուսաղեմի, դու ցնծութիւն Նարայելի, դու  
 պարծանք ազգիս մերոյ. այսինքն՝ դու էա եւայլն  
 Մեք կաւ եւ դու ստեղծիչ մեր. եւ գործք ձեռաց  
 քոց ա՛ննեքին մեք. այսինքն՝ Մեք է՞՜, Ի ու էա  
 Սուր 'ի վերայ Քաղղէացւոցն. այսինքն՝ Վշի կամ  
 է՛է-ցէ սուր. (Պաւղոս) ձեռն տուեալ էր Պետրոսի  
 եւ այլոց առաքելոց հաւանութեան, զի ինքն Բառ-  
 նարաւ հանդերձ 'ի հեթանոսս, եւ Պետրոսեանք  
 'ի թլխատութիւնն (սահմանեացին կամ կարգեսցին  
 եւայլն). Չեւ (էր) ուրեք որդի 'ի միջի, եւ նա  
 չյղացելոյն եւ չծնելոյն անուն դնէր. Անէծք (լիցին)  
 այնպիսի կծծի բանից. Մի այսուհետեւ անագո-  
 րոյնք եւ անգութք եւ անխնա՛ք եւ անողորմք,  
 մի եւս չար քան զգաղանս (լիցուք):

Ս. յսպէս են նամակներու մէջ .

Առ Յովնասթան եղբայր. Աս աղգն Հրէից. Առ  
 Սպարտացիս եղբարս ողջոյն, խնդալ, խաղաղու-  
 թիւն. այսինքն՝ Վշի ողջոյն, եւայլն

226. Որ յարաբերականէն ետքն ալ էական  
 բայր կը զեղչուի շատ անգամ, երբ յարաբե-  
 րականով կազմուած խօսքը յարաբերելոյն մէկ  
 պարագան կը ցուցնէ, զոր օրինակ .

Լուան ամենայն թագաւորք Ամովրհացւոց որ  
 յայնկոյս Յորդանանու (էին). Ասեն արքն որ ընդ  
 նոսա (էին). Յիշէին տակաւին զիրան որ 'ի պան-  
 դրխատութեան իւրեանց (լեալ էին). Յիշեաց զուխտ  
 իւր որ ընդ Աբրահամու. Որդի Յովսեփայ որ Յա-  
 կոբայն, որ Հեղեայն, այսինքն որ էր ոչոքի եւայլն



227. Շատ անգամ այս տեսակ խօսքերուն մէջ, բային հետ յարաբերականն ալ կը զեղչուի, զոր օրինակ.

Ացեցան յարս անօրէնս յԽարայելացւոց անտի. այսինքն՝ որ էին յԽարայելացւոց անտի. Բերին մեզ վահան ոսկի (որ էր) 'ի հինգ հազար քանքարէ. Ունէր հանդերձ (որ էր) 'ի ստեւոյ ուղտու. Երթալին զհետ նորա ժողովուրդք բազումք. (որ էին) 'ի Գալիլէէ եւ յայն կոյս Յորդանանու. Առ 'ի քէն իմաստութիւնդ. այսինքն՝ իմաստութիւնդ (որ է) առ 'ի քէն. Փառաւորեա զիս առ 'ի քէն փառօքն. այսինքն՝ Փառօքն՝ որ են եւայլն. Զփառս զառ 'ի միայն Աստուծոյ ոչ խնդրէք. այսինքն՝ Զփառս (որ են) առ 'ի միայն Աստուծոյ. Զխարդ մաքսաւորն եւ ձկնորսն եւ առանց դպրութեանն. այսինքն՝ այն որ էր առանց դպրութեան. Զողջակէզսն եւ զվասն մեղացն. այսինքն՝ Զայն որ է վասն մեղաց. Առեալ լի ափով զառ 'ի յիշատակէն նորա. այսինքն՝ Զայն որ է 'ի յիշատակէ նորա. Ընկալայ զառ 'ի ձէնջն. այսինքն՝ Զայն որ է 'ի ձէնջ:

228. (483) Այլ կամ եւ, (աւնշանակութեամբ) եւ ուրիշ ասոնց նման շողկապներէն, ու ոչ ճ, բացասական մակբայներէն ետքը՝ մի եւ նոյն բայը սովորաբար չի կրկնուիր, այլ լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ.

Որ առողջ միտս ունին, ոչ զշարժունսն՝ այլ ըզշարժիչն պարտին փառաւորել. այսինքն՝ Ոչ զշարժունսն պարտին փառաւորել, այլ զշարժիչն պարտին փառաւորել: Զերախատաւորսն եւ զբարերարս որ 'ի նմանէ կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարդել.



բայց դարձեալ եւ ոչ դպաշտօն արարչին արարածոց մատուցանել. այսինքն՝ Բայց դարձեալ եւ ոչ դպաշտօն արարչին հրամայե՛ժ արարածոց մատուցանել, եւ այլն: Ձիարդ պաշտօնցեմք զարեգակն որ կոչի ծառայ, կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւժանի, կամ զերկիր՝ զոր հանապաղ բրեմք եւ ցանկ կոխեմք. այսինքն՝ կամ զհարդ պաշտօնցե՛ժ զլուսին... կամ զհարդ պաշտօնցե՛ժ զերկիր, եւ այլն: Լեր իրաւախոն ընդ սոսիսի քում վաղադոյն. գուցէ մատնիցէ զքեզ սոսիսն դատաւորի, եւ դատաւորն՝ դահճի. այսինքն՝ Եւ դատաւորն ճարեցէ զքեզ դահճի: Ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ. մի յերկինս՝ զի աստուէ Աստուծոյ. եւ մի յերկիր՝ զի պատուանդան է սոսից նորա, եւ մի ՚ի զլուսի քո երդնուցուս, եւ այլն. փոխանակ ըսելու՝ Մի երդնուցուս յերկինս զի... եւ մի երդնուցուս յերկիր զի...: Թէպէտ եւ ամենեքին գայթաղդեսցին, այլ ես ոչ այսինքն՝ Այլ ես ոչ գայթաղդեսցայ:

229. (484) Երբեմն բային հետ ուրիշ բառ մ'ալ, զոր օրինակ՝ ածական մը, խնդիր մը, մակբայ մ'ալ մէկ տեղ կը զեղչուի, զոր օրի.

Արեգակն յայտ առնէ թէ չեմ ես արժանի պաշտաման, այլ այն որ զիս դամենայն տիւ լուսաւոր պահէ. այսինքն՝ Այլ այն է արժանի պաշտաման որ...: Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի քո բերան, ստարն՝ եւ մի քո շրթունք. այսինքն՝ Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի գովեսցէ զքեզ քո բերան. գովեսցէ զքեզ ստարն եւ մի գովեսցեն զքեզ քո շրթունք: Նոքա կարօտ են հացի, եւ դու իմաստութեան. այսինքն՝ Եւ դու կարօտ ես իմաստութեան:



5. Զննանք խնդրոց.

230. Մի եւ նոյն հոլով խնդիր առնող բա-  
յերէն ամենուն քով դերանուն խնդիրը չի  
կրկնուիր, այլ անգամ մը մէկուն քով դրուե-  
լէն ետքը՝ յաջորդ բայերուն քով լռելեայն  
կ'իմացուի, զոր օրինակ.

Ետես զնա եւ կոչեաց. փոխանակ՝ Ետես զնա  
եւ կոչեաց զնա:

231. Բայց երբ բայերը տարբեր հոլով խըն-  
դիր կ'ուզեն, ամեն մէկուն պահանջած հո-  
լովով խնդիրն անոր քով դնելու է, զոր օրինակ.

Ետես զա եւ խօսեցաւ ընդ ՚ճա. Ընդեցաւ 'ի նա  
եւ ոչ մեկնեցաւ 'ի ՚ճանէ:

232. Երբեմն դերանուն կամ դոյական խըն-  
դիր մը կը զեղչուի, զոր օրինակ.

Առաքեաց զլիսատեաց զՅովհաննէս 'ի բանտի-  
այտինքն՝ Առաքեաց դահլճա եւ զլիսատեաց եւ այլն  
Առաքեցին ընդ առնայն գաւառն, եւ ամին առ  
նա գառնայն հիւանդս. . . այսինքն՝ Առաքեցին արս  
եւ այլն. Առաքեցին 'ի բանտն ամէլ զնոսա. Յղեցին  
եւ կոչէին զնոսա. գուցէ սատակիցէ 'ի նոցանէ  
տէր. Առ ընդ քեզ 'ի ծերոց ժողովրդեանդ. Յաղ-  
քատաց ժողովրդեանն եթող անդրէն յերկրին. Արբ  
'ի գինւոյն եւ արբեցաւ. 'ի պտղոյ այգւոյն տացեն  
նմա. Առ 'ի պտղոյ նորա եւ եկեր. Առ ընդ քեզ 'ի  
ծերոց ժողովրդեանդ. Յաղքատաց ժողովրդեանն  
եթող անդրէն յերկրին Յուդայ:

233. Երբ յատկացեալ մը քանի մը յատկա-



ցուցչի կը վերաբերի, անդամ մը միայն գլխու-  
ուելով, յաջորդ յատկացուցիչներուն քով զօ-  
րութեամբ կ'իմացուի. միայն՝ եթէ յատկաց-  
եալը նախդիր ունի, նախդիրը յատկացուցիչ-  
ներուն վրայ կը կրկնուի, զոր օրինակ.

Լուաւ զձայն երգոցն եւ զպարուց, այսինքն եւ  
ճայն պարուց. Զվարագոյր դրան խորանին եւ ըզ  
դրան սրահին. Խոստովան լինիցին զմեզս իւրեանց  
եւ շարչ իւրեանց Փետէի զվարսս գլխոյ իմոյ եւ  
զֆօրուաց իմոց. Զպտուղ կալոյ քոյ եւ զհնձանի մի  
հատանիյես. Բուրեսցէ հոտ նորա իբրեւ զկնդրկի.  
Զայն նորա իբրեւ շօճի որ շչիցէ. Զամենայն ճարպ  
զարջառոյ եւ զոչխարի եւ զայծեաց մի ուտիցէք.  
Բաշում են որդիք սկնդկիդ առաւել քան զարա Բ-  
ւոյն. Գուցէ տեսանիցէ զերեսս ձեր տրտնագոյնս  
քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոյ. Եթէ ոչ  
առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան ըզ  
դպրացն եւ զփարխեցւոյ. Առնէաք զկամս մարմ-  
նոյ եւ զհոտաց. Տգէտ են Աստուծոյ արդարութեան  
եւ զիւրեանցն, (այսինքն՝ զիւրեանց սրդարու-  
թիւնն) խնդրեն կացուցանել. Զիրաւունս զեկին  
եւ զորքոյ եւ զայրւոյ. Մի լիցի ապրեալ տուն նո-  
րա, այլ 'ի նորայն (այսինքն՝ 'ի տան նորա կացցեն  
օտարք. Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նո-  
րա եւ ընդ ամենայն որդւոցն Եսրայելի. Արպէս թէ  
արդարոցն մեռելոց ոգիք յայլ 'ի սուրբ մարմինս  
փոխիցին, կամ 'ի մարդկան կամ 'ի գազանաց եւ 'ի  
ձձեաց եւ 'ի սուղնոց. Լուաւ Գոթողիա զձայն ժո-  
ղովրդեանն զընթանալոյն, զգոհանալոյն եւ զօրհնե-  
լոյն զարքայ:

234. Երբեմն յատկացեալը բոլորովին կը



զեղչուի, մանաւանդ երբ յատկացեալը երբ  
բառն է, կամ մէկուն վերաբերեալ բան մը  
կ'իմացնէ, զոր օրինակ .

Ձխափանածոյ նորա եւ զբժշկութեանն տու-  
թեացի, այսինքն՝ զՅակոբ կամ զՎնաս խափանածոյ եւ  
բժշկութեան նորա. Տալով տաջիք նմա զհարուա-  
ծոցն, այսինքն՝ զհարուածոցն կամ զսոցժա հարուա-  
ծոց նորա. Տօնեացին զտաղաւարացն, այսինքն ըզ-  
տօն տաղաւարաց. Նն որ զիւրեանց սերմանեն, եւ  
բազմապատիկ առնեն, այսինքն սերմանեն որ ինչ  
իւրեանց է. Աոյսն հոգայ զտեառնն. այսինքն՝ զիրս  
տեառն. Ձյափշտակեն զուրուք. Մի որ զանձին  
եւեթ խնդրիցէ, այլ եւ զընկերին. Յորժամ եղէ  
այր՝ զտղայութեանն 'ի բաց խափանեցի. Երթայք  
տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ:

4. Դերբայներու զեղչում.

235. Մնորիչ դերբայ մը նախընթաց խօսքին  
մէջ անգամ մը դրուելէ ետքը, խօսքին յա-  
ջորդ անգամին մէջ լռելեայն կ'իմացուի, զոր  
օրինակ .

Ձինչ գործէք, զոր չէ օրէն (գործել) 'ի շարաթու-  
Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ  
քարտիսիւ եւ զեղով (գրել). Պարտ է եպիսկոպո-  
սին անարատ լինել. մի (լինել) թշնամանող, մի հար-  
կանող, եւ այլն. Տեսեալ արդարոյ՝ ծիծաղեցան. ա-  
նարատին (տեսեալ)՝ եւ արհամարհեաց:

236. Երբեմն անցեալ դերբայ մը գոյական  
ներու հետ լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ .

Մեռաւ ամաց քսանից. այսինքն՝ Լեււ ամաց քը-



սանից. Յայն ինչ ապաստան (լեալ)՝ դամենայն ինչ  
 անխտիր գործեմք. Զստէպ յօրանջելն եւ ձգտելն  
 հմուտ բժիշկք 'ի մթերելոյ մաղասոց ասեն (լեալ  
 կամ լինել). Ննքն երթայր բոկ. եւ ամենայն ժողո-  
 վուրդն ընդ նմա ձորձ զգլխով (արկեալ). Հարիւր  
 հազար, ասպար 'ի ձեռին, տիգաւոր հետեւակ. Ան-  
 կանէր 'ի ներքս սուսեր 'ի ձեռին. Կոյս վճարեցաւ  
 յաշխարհէ. Դի պասկեցաւ. այսինքն՝ Մինչդեռ  
 կոյս էր, դի էր. Սասանականքն որդի 'ի հօրէ կար-  
 դաւ առին զթագաւորութիւնն. այսինքն՝ Սասա-  
 նականքն կարգաւ առին զթագաւորութիւնն, որ-  
 դի 'ի հօրէ ~~աւ զնախաորոշիւնն~~

Այսպէս զեղչմամբ կ'ըսուի .

Բերան 'ի բերան խօսել. Մարտնչել ճակատ առ  
 ճակատ. Սիրտ 'ի բերան շրջել. Գայլ 'ի բերան ա-  
 ծել. Սուր 'ի ձեռին ընթանալ. Զեռս 'ի գլուխ ե-  
 լանել. Խեղդ ընդ անձն պաշարել. Բերան 'ի վայր  
 անկանել. Կապել զոք ձեռս յետս:

Ասոնց մէջ՝ ճարտարեալ, եղեալ, կալեալ, կամ ու-  
 ըիշ ասոնց նման անցեալ մը լռելեայն կ'իմա-  
 ցուի :

Այսպիսի բացատրութիւններ երբեմն ածա-  
 կանի կամ մակըայի զօրութիւն ունին, զոր օ .

Հող 'ի գլուխ կամ ձորձ 'ի գլուխ լինել. Կախել  
 գլխովայր. Հիմնիվեր տապալել. Կապել ձեռնդ-  
 ձեռս, եւայլն:

5. Յոսոցական եւ Սորացական ածականաց զեղչումք.

237. Յուցական ածականները, այս, այդ, այն,  
 շատ անգամ կը զեղչուին, գոյականին վրայ



գրուած «, դ, ն, գրերը բաւական համարե-  
լով: (Տես 154):

238. Շատ անգամ Ստացականները, իճ, Կ, Պ,  
Քր, Յր, ի-ր, եւ նորա, նոցա, ի-լեանց յատկացու-  
ցիչներն ալ կը զեղչուին, երբ յայտնի է թէ գո-  
յականը որու կը վերաբերի, զոր օրինակ .

Եթէ (թագաւորն) հրամայէ պատերազմել, ոչ  
իշխեն անցանել գրանիւ. այսինքն՝ գրանիւ նորա  
Քէպ եղեւ եզրարս եօթն մարքն հանդերձ կալեալս  
ածել. այսինքն՝ հանդերձ մարք ի-լեանց. Որ անար-  
գէ գհայր (իւր). Աոչէ գրարեկանս եւ գղրացիս  
(իւր). Մեծէին զգլուխն (նորա) եղեգաւք եւ թքա-  
նէին ընդ երեսս (նորա). Եւ ոչ, յորժամ ընդ աւա-  
զակուտ տեղիս դիմեալ զընկերն (իւր) ոք տեսա-  
նիցէ, եւ ասիցէ թէ եղեոն գտանէ, նա ինչ իցէ  
պատճառք մնասուն. Ակսաւ Յիսուս ցուցանել ա-  
շակերտացն (իւրոց), թէ պարտ է նմա երթալ. Զոր  
'ի ձեռին (իւրում) ունէր. Ընդէր բարկանաս եղբօրն  
(քում). Քարա ըք եւս կոծէր զանձն (իւր). Մատ-  
նեաց զանձն (իւր) վասն ին:

239. Երբեմն Տ՛ ածականը գոյականին քով  
լուեկեայն կ'իմացուի, զոր օրինակ .

Երկու գրիւք գարւոյ սկեղ միոյ լինիցին, եւ  
քրի-նաշնոյ՝ «կեղ. այսինքն՝ եւ գրիւ Տ՛ աշնոյ՝  
սկեղ Տ՛ոյ. Արկ վարձս մշակացն աւուրն գահեկան  
(մի). Արարին չորս մասունս, իւրաքանչիւր զին-  
ուորի մասն (մի). Առանց կուոյ ամ (մի) չեմ լեալ.  
Աւուր (միոյ) գնաց աստի, եւ աւուր (միոյ) գնաց  
անտի. Որ գիշերի ել, եւ միւս գիշերի կորեաւ. այս  
ինքն՝ ի Տ՛ում գիշերի



6. Նախադրութեան է- Նախդիրներու- զեղան-5.

240. Երբեմն Նախադրութիւն մը որ քանի մը խնդիր ունի, առաջին անգամ դրուելէն ետքը, միւս խնդիրներուն քով լուեւայն կ'իմացուի. մինակ, եթէ Նախդիր ունի, Նախդիրը խնդիրներուն վրայ կը դրուի, զոր օրի.

Վասն խոսովութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին եւ սպանութեան. այսինքն՝ եւ վասն սպանութեան Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն 'ի թագաւորութեան (վերայ). Վէրս 'ի վերայ վիրաց եւ ցաւս 'ի ցաւոց (վերայ) յաւելուին. Ն վերայ խաշանց իմոց մեռանիմ. յորոց խաշանց արդեօք. 'ի հարթուցելոցն, 'ի փախուցելոցն, 'ի գաղանակուր եղելոցն. Վթայր 'ի վերայ նորա, իբրեւ հայր յորդոց. Երթ դհեա արդարութեան, զաստուածալաշտութեան, զհաւատոց, զսիրոց, զհամբերութեան, զհեղութեան:

241. Նախդիրներն ալ երբեմն կը զեղչուին, զոր օրինակ, 'ի նախդիրը հետեւեալ խօսքերուն մէջ.

Առնուլ զոք կնութիւն. Յա արքայ զաղջիկն կընութիւն սիրելւոյն. Տայցեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ. փոխանակ՝ 'ի կնութիւն. Ձեռնադրեացեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց. փոխանակ՝ 'ի կաթողիկոսութիւն:

242. Երբ Անորիշ դերբայները նախդիրով մը խնդիր են, եւ իրենք ալ նոյն նախդիրով խընդիր ունին, առ խնդիրը դերբայէն առաջ դրուած ատեն, դերբային նախդիրը զանց կ'առնուի, զոր օրինակ.



Յառաջ քան զերկիր առնել, եւ նախ քան զան-  
 դունդս գործել. Յառաջ քան զլերինս հաստատել.  
 փոխանակ՝ Յառաջ քան զառնելն զերկիր, նախ քան  
 զգործելն զանդունդս, եւ այլն. Ի քուն լինել մարդ-  
 կանն. փոխանակ՝ Ի լինել մարդկանն 'ի քուն: Ի  
 ճանապարհ անկանել նոցա եւ մօտ 'ի քաղաքն լի-  
 նել. այսինքն՝ Յանկանել նոցա 'ի ճանապարհ, եւ 'ի  
 լինելն մօտ 'ի քաղաքն: Արդելին զմեզ 'ի ներքս  
 մտանելոյ. այսինքն՝ Ի մտանելոյ 'ի ներքս: Ար յար-  
 ջառոց, որ յոչխարաց, 'ի թռչնոց, 'ի նաշհւոց, 'ի  
 թոնրի երկելոյ. այսինքն՝ Յերկելոյ 'ի թոնրի: Եւ այն  
 լինի յոյժ 'ի տօթի աշխատելոյ կամ կարի 'ի ցրտոց  
 լկելոյ. այսինքն՝ Յաշխատելոյ 'ի տօթի, 'ի լկելոյ 'ի  
 ցրտոյ: Զթագաւորէն Յունաց զառ ինքն եկեալան.  
 այսինքն՝ Զ'ի թագաւորէն Յունաց առ ինքն եկեալան:  
 Զծնէ կոյրն. փոխանակ՝ Զ'ի ծնէ կոյրն:

243. Երբեմն շեւ « զրերով սկսող բառե-  
 րու վրայ շնախդիրը, ինչպէս նաեւ, եւ և  
 զրերով սկսողներուն վրայ ալ շնախդիրը զանց  
 կ'առնուի, զոր օրինակ .

Ի տալ տեառն Զեքէի եւ զՍաղմանայ 'ի ձեռս իմ.  
 Առ զամենայն զօրս իւր, զհեծեալս եւ զհետեւակս  
 եւ զէս եւ զկառս եւ զնայ. Մերկացաւ զհետս իւր.  
 Զեղէլն եւ զբազկելն՝ զայն մեք ոչ զանդադեցար.  
 Աթեցի զհոսս իմ հանդերձ խնկօք իմովք. Աարդե-  
 ցին անդ զէս պատարագաց իւրեանց. Այլ ինչ գործ  
 ոչ ունէին բաց միայն զարդարելն եւ զպճնելն եւ  
 քնդ ոսկի ելանել. Եւ սրբօրէն սրանն յազատեղու-  
 թիւն զարձուցանէին. Զգուշանային սահմանօք երկ-  
 րին իւրեանց. Յորժամ մանկալին ստանչելի օրհնու-  
 թիւնն երգէին. Յարկս նոցա փուշ բուսցի. Աստա-



բաժնոցս երթայ յապահս դժոխոց. Թէպէտեւ յապահս  
 չարեացն երթեալ հասեալ իցեն. Հաց արդեանց եր-  
 կրի քո եղիցի յաֆուրդ եւ 'ի պարար. Յաֆուրդս յա-  
 լիտենից. Յանցանս ինչ անկանել. Եթէ յաֆուրդս  
 ինչ հատանիցիս. Յաֆուրդս նստել. Յաֆուրդս մինչեւ  
 յալիտեանս. Յարդէ 'ի ցորեանս փոխել. Յոմանկան բար-  
 բառոցն 'ի Հայերէն դարձուցեալ. Ուստի եւ յեփս եր-  
 թալոյ զհակառակասէր զսատանայ անուն ժառան-  
 դեաց. Յոմանկան ժամանակացն մինչեւ ցՍեմ. Ոչ այլ  
 ուստեք այլ յաճախ զտագնապան կրելոյ. Հեփ աշ-  
 խարհ ուրեք գնալ. Ե՛ջ յաֆուրդս հոսանացն Եփ-  
 րատու. Հոմանկան թանձրախուռն անտառին. Մարկոս  
 յետ նորա համարոց ճանապարհն եկն. Ս. յժմիկ հե-  
 րասարանէ գրեմ առ ձեզ:

Աս օրինակներուն մէջ նօսը գրով գրուած  
 բառերուն՝ որ չկամ « գրով են , չնախդիրը  
 զեղչուած է . իսկ , կամ & գրով եղողներուն՝  
 է նախդիրը . ուստի պիտի ըլլայ , զԶեբէի ,  
 զԳէնս , եւ այլն . Զսրբութեան սրահն . զսահ-  
 մանօք , եւ այլն . Ի յարկս , 'ի յատակս , 'ի յա-  
 գուրդ , եւ այլն . Ի հեռի աշխարհ , 'ի հովիտս ,  
 եւ այլն :

7. Շաղկապի զեղչում.

244. Զէ եւ երէ Շաղկապները երբեմն կը  
 զեղչուին .

Տուաք մեք քեզ գիտել, թագաւոր, եթէ քաղաքս  
 այս շինեացի եւ պարիսպք սորա կանգնեացին, չէ  
 քեզ խաղաղութիւն. այսինքն՝ զէ եթէ քաղաքս եւ  
 այլն: Թոյլ տուր անցից ընդ երկիր քո. այսինքն զէ



անցից: Ես գիտեմ, յուշ լիցին նմա չարիքն զոր ան-  
ցուցաք մեք ընդ նա. այսինքն՝ զի յուշ լիցին եւ  
այլն

Մի հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք.  
այսինքն՝ Թէ զինչ ուտիցէք: Ակնարկէ նմա հարցա-  
նել ո՞վ իցէ վասն որոյ ասեն. այսինքն՝ Հարցանել  
Թէ ո՞վ իցէ: Էր խռովութիւն 'ի մէջ զինուորացն, զի  
արդեօք Պետրոսն եղեւ. այսինքն՝ Թէ զի արդեօք  
եւ այլն: Գիտասցեն, եթէ ոչ ձիւն եւ սառնամանիք  
պնդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին.  
այսինքն՝ Գիտասցեն՝ զի եթէ եւ այլն: Եւ է երբէք  
չարանց կերպս դարձեալ, զկանայս յանցուցանէ.  
այսինքն՝ Է երբէք զի եւ այլն: Աարծէին խարէու-  
թեամբ 'ի մնասել զնոսա եկն. այսինքն՝ Աարծէին  
էթէ եւ այլն: Այլ եւ զպատճառսն եւս՝ վասն էր  
չտայցէ, ասէ. այսինքն՝ Զպատճառն եւս Թէ վասն  
էր եւ այլն: Զի յայտ արասցէ, թէ ծուլանայցեն՝  
առանց բժշկութեան առնին վէրքն. այսինքն՝ Զի  
յայտ արասցէ Թէ՛ եթէ ծուլանայցեն, եւ այլն: Եւ  
զինչ իցէ խորագիտութիւն օձին, եթէ ոչ՝ իբրեւ  
ձերասցի նա եւ տեսանիցէ ապականեալ զմարմին  
իւր... զիմէ նա ընդ տեղի ինչ նեղածերպ վայ-  
րաց, եւ ընդ կրթելն կեղեւէ զապականեալ մորթն.  
այսինքն՝ Եթէ ոչ զի իբրեւ ձերասցի եւ այլն: Տե-  
սանեմք երկուս արս միազգիս ընդ միմեանս զըր-  
զրուեալ, միմեանց մահու եւ արեամբ ծարաւի են.  
այսինքն՝ Զի ընդ միմեանս զրզուեալ եւ այլն: Եթէ  
տեսանիցես զոր սուր առեալ եւ անձին առնիցէ,  
արգահատել երբէք կարիցես այնպիսւոյն. այսինքն՝  
Տեսանիցես զոր զի սուր առեալ եւ այլն



Գ. ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

245. Կրկնում ու Աւելարբութիւնը տարբեր են .  
Կրկնում ճարտասանական ձեւ մըն է , մի եւ  
նոյն բառը կրկնելով կ'ըլլայ , զոր օրինակ .

Աստուած, Աստուած իմ, ընդէր թողեր դիս. Եմ,  
եմ եւ ես մահկանացու. Գու ես, դու ես այրն:

Իսկ Աւելարբութիւնը ֆերականական ձեւ է ,  
եւ կ'ըլլայ՝ երբ խօսքին մի եւ նոյն մասը , զոր  
օրինակ՝ Տէր բային կամ Խնդիրը , տարբեր  
բառերով երկու անգամ կը բացատրուին , զոր  
օրինակ .

146. 1. Դերանուն Տէր բայի աւելարբութիւն .

Կինս՝ զոր ետուր ընդ իս, աւ ետ ինձ 'ի ծառոյ  
անտի եւ կերայ. Աէմն զոր անարգեցին շինողքն,  
աւ եղեւ դլուխ անկեան. Առաջնորդ իշխանն՝ աւ  
նստցի 'ի դմա ուտել հաց. Բանն զոր ես խօսեցայ,  
աւ դատի զնա. Յիսուս Նազովրեցի՝ աւ փակեցէ  
դտեղիս զայս. Ամենայն ինչ որ յաշխարհի է, չէ աւ  
մեր. Աղգքն այնոքիկ զորս դու ժառանգելոց ես,  
աւ ա հմայից եւ դիւթութեանց անսան. Եւ մնա-  
ցեալ բանքն Յովակիմայ եւ ամենայն ինչ զոր ա-  
րար՝ ոչ աւանիկ գրեալ են աւ 'ի դիրս:

247. 2. Դերանուն խնդրոց աւելարբութիւն .

ՉՅիսուս զոր դուք սպանէք, զաւ յարոյց Աստուած.  
Չբաժակն զոր ետ ինձ հայր, ոչ ըմպիցեմ զաւ:

Ամենայնի որ լսիցէ՝ հնչեցեն երկոքին ականջք  
իւր. Լուսնի չիք իւր լոյս առանձինն. Մարդոյ որ-  
պէս խոտոյ են աւուրք իւր. Եւ Սաղապաղայ որ-



դւոյ Ուփերայ ոչ գոյին նորա ուստերք. Այո իսկ,  
 յարքայութենէն զոր ասէի՝ անփի դամ. Ի լերինն  
 մեծի եւ բարձու՝ անփ է անկողին քո. Եւ զթագա-  
 ւորն Յուդա որ առաքեաց զձեզ խնդրել զՏէր, այս-  
 պէս ասասցիք ցնա. Եթէ ընդ դուռն ընդ որ թա-  
 գաւոր ելանէ՝ հանցես ընդ նա աղբ. Եր այր մի յո-  
 բոււմ այս պիղծ գոյր 'ի նճա. Յորմէ եւ հեթանոսք  
 մեծաւ զգուշութեամբ խորշեալ պատկանէին 'ի  
 նճանէ. Արոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են եւ  
 աջ նոցա լի է կաշառօք. Չարք որոց ոչ էր նոցա թիւ.  
 Յորոց յափրացաւ անձն իմ 'ի նոցանէ. Աստուածք  
 նոցա յորս յուսացեալ էիք 'ի նոսա. Չորոց զճարպ  
 զոհից նոցա ուտէիք. Ի տեղւոջն յորոււմ դուք կա-  
 միք մտանել բնակել անփ. Տանն՝ յոր ես մտից անփ:

248. Այն, այդ, այս Դերանունը ոչ միայն ե-  
 զակի, այլ եւ յօքնակի բառերու եւ անորիչ  
 դերբայներու տեղ աւելադրութեամբ կը դրու-  
 ուի, զոր օրինակ.

Ամուրքդ զոր շինէք՝ այդ ձեզ իսկ լիցին. Արժ-  
 նելն եւ նկարելն՝ այն 'ի զարդարիչ անդր հայի. Եւ  
 մեղք հարցն՝ այն ընդ մեզ ելին. Իսկ հանդերձիկն  
 որ զնոքօք արկեալ՝ այն ցեցակեր, մեցոտեալ,  
 փխրեալ մաշեալ կորուսեալ ասպականին. Չիք ինչ  
 այն որ ըստ քո կամսդ արտաքս կարէ ելանել. Նո-  
 բողել 'ի փտութենէ մեղացն՝ այն Քրիստոսի ուղ-  
 դութիւնքն (երախտիք) էին. եւ անդրէն 'ի նոյն  
 չղառնալ՝ այն նոցա փութոյն եւ տառապանաց գործ:

249. Այն, շատ անգամ ամբողջ խօսքի մը  
 տեղ ալ աւելադրութեամբ կը դրուի, զոր օր.

Եթէ որչափ մնաս արգելու Աստուած 'ի մարդ-



կանէ՛ այն ոչ ամենեցուն յայտնի է. Զի ներող եւ արդահատող է արարիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է. Նթէ չխօսիցին ինչ այնպիսի բանա՛ այն նոցա ազնուականութեանն է համար. Եւ զի խնդիրք ամենայն գործոց լինելոց են՝ զայս վերագոյն յայտ արար:

250. Այն, այս, այդ Անորիչ գերբայներու նախադաս ըլլալով, աւելագրութեամբ կը գործածուին, զոր օրինակ .

Նա եւ այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յու՛մմէ է շնորհն. փոխանակ պարզապէս ըսելու թէ, Իմաստութիւն է ճանաչելն թէ յու՛մմէ է շնորհն: Արարչի այն գործ է՝ զբնութիւնս առնել եւ ոչ միայն արդս եւ զարդս եւ կերպարանս. Այն եւ եթ առաջի կայր՝ կամ անապ Աստուծոյ կամ չանապ. Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է՝ զարտաքինան իրօք ճշմարտութեան առանց գրոց յանդիմանել. Երեցուն (երից աւետարանչաց) այն ինն փոյթ եղեւ՝ վասն տեսչութեանն պարապել. փոխանակ ըսելու՝ Փոյթ երեցունց եղեւ պարապել վասն տեսչութեան: Այն իսկ գործ է աղի՝ կակծեցուցանելն եւ մորմոքեցուցանել զլոյծս. փոխանակ՝ Գործ (ներգործութիւն) աղի է կակծեցուցանել, եւ այլն:

251. 5. Յարաբերեալի աւելագրութիւն.

1<sup>o</sup>. Յարաբերեալը փոխանակ իր հոլովը գրըռուելու՝ «դղական կամ Յարաբերականին հաւել գրուած», եւ ետքը ուրիշ Գերանուն մը աւելագրութեամբ յարաբերեալին հոլովը գրուած, զոր օրինակ .

Եւ քորոտ՝ յորում իցէ արած, հանդերձ նորա քակ-



եալ լիցի. փոխանակ՝ Քակեալ լիցի հանդերձ բու-  
րոտի՝ յորում իցէ արած: Աճնայն այր՝ որոյ էր դատ  
գալ առ արքայ 'ի դատաստան, բարբառէր առ նա  
Աբեսաղոմ եւ ասէր. Եւ ասան զոր շինեաց արքայ  
Սողոմոն տեառն՝ վաթսուն կանգուն երկայնութիւն  
նորա. Մորհակ՝ զոր ունէի զումեքէ, ընթեոնուի եւ  
ոչ պատառէի զայն. Ամենայն ասր կամ խարակ՝ յոր  
հասանէ պողիպտան 'ի մէջ ծովուն, զնորուն գոյն  
առնու. Չորսն՝ որովք հեղձուցանէրն Փարաւոն ըզ  
մանկտին, նոթիճք հեղձաւ. Աճնայն ճարդ եւ անասան՝  
որ գացի 'ի դաշտի եւ ոչ մտցէ 'ի տուն, անկցի 'ի  
վերայ նորա կարկուտն եւ սատակեացէ. Քաղաք՝ որ  
հուպ իցէ 'ի վիրաւորն, առցէ ծերակոյտ ասղաթն  
այնորիկ երինջ մի. Այն այն Մովսէս՝ որ եհան զմեզ  
յճգիպտոսէ, ոչ գիտեմք զի եղեւ նճա. Թագաւոր՝ որ  
քան զսպասաւոր եւս վատթարագոյն է, լաւ էր նճա  
քնաւ չառնուլ իսկ զթագ 'ի գլուխ. Մասայ որ ընդ  
ունկն ոչ լսէ, ընդ մկանունան տան լսել նճա. Մո-  
լաթնոր՝ որ առանձինն 'ի յայտնի ինչ ժամանակի  
սպանող է, նոթիճք զմաղձս հնացեալս հնարին բժիշկք  
հատանել. Այն որ այն ինչ կամէր 'ի վերայ ալեաց  
ծովու սաստել, զնա ինքն յերկիր հողեալ՝ շալակաւ  
չըջեցուցանէին. Ասորթինք եւ արծաթաթինք՝ որ էին  
յազգաց օտարաց, թլիատեաց զնոսա. Եղբարք յեր՝ որ  
ոչ ելին, ահաւասիկ ես առաքեմ 'ի նոսա սով. Աճ-  
նայնի՝ որոց ոչ իցեն թեւք եւ թեփ, պիղծ իցէ  
ձեզ այն. Աճնայն սարսաթ՝ որոյ իցէ 'ի տան իւրում  
կին այլազգի, երթեալ պահանջեացեն 'ի նճանէ ժա-  
մանակս. Աճնայնի՝ որում շատ տուաւ, շատ խընդ-  
րեացի 'ի նճանէ. Չաճնայնէ՝ զորմէ ասացից թէ դա  
մի երթիցէ ընդ քեզ, նա մի երթիցէ. Չհինգ հազար  
կէր արծաթոյն՝ զոր առնուն, եւ այդ թողեալ լիցի.



Չի՞՞ն զոր անարգեցին շինողք, նա եղև գլուխ անկեան. Զայն՝ զոր արքայ կամի փառաւորել, բերցեն զպատմութեանն զարքունի եւ զերիւարն, եւ տացեն ասնն այնիկ. Զայդ ամենայն զոր տեսանէք՝ եկեացեն աւուրք յորս ոչ թողցի այդք քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի. Զամենայն՝ զոր ետ ցիւ Հայր, ոչ կորուսից 'ի նճանէ. Ի արեւոջ ուր բնակիցեն, ընդ այն մի անցանիցես. Զգործան՝ զոր ետ գործեմ յանուն հօր իմոյ, նոյն վկայեն. Ի ճահիճար՝ յոր ելեր, ոչ իջես այտի. Զամենայն արեւիս յոր հասանիցեն զնացք ոտից ձերոց՝ ձեզ տաց զնոսա:

Աս տեսակ խօսքերու մէջ երբեմն Յարարերեալին հօլովը աւելադրութեամբ դրուած Գերանունը զանց կ'առնուի, զոր օրինակ.

Մէ+ որ զայսպիսի բանս լսելոց եմք, պարտ է բազում պարկեշտութիւն ցուցանել. Ամենայն աղօթեւ եւ ամենայն խնդրոսած+ կամ պաղատան+ որ լինիցին ամենայն մարդոյ, լուիցես յերկնից. Ընդ երկերն՝ ընդ որ մեք անցաք լրտեսել զնա, երկիր մարդածախ է բնակչաց իւրոց. Զքանն՝ զոր ետ խօսեցայ ընդ ձեզ, հոգի է եւ կեանք. Յերկերն, յոր հասեր, քեզ լիցի 'ի ժառանգութիւն. Եղիպարոս, այր մեծ ընդ առաջինսն 'ի գնտի անդ, լցեալ աւուրքք ձերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք, ածեալ գայլ 'ի բերան՝ ստիպէին ուտել խողենի:

2<sup>o</sup>. Յարարերականը փոխանակ իր հօլովը դրուելու՝ ուղղական դրուած, եւ անոր տեղ Գերանուն մը աւելադրութեամբ յարարերականին հօլովը, զոր օրինակ.

Տէր ամենակալ, ոչ ամենայն ինչ սարսի եւ դո-



դայ յերեսաց ահի դօրութեան +. փոխանակ՝ Տէր  
 ամենակալ, շորոյ երեսաց ահի դօրութեան սարսեալ  
 դողաց եւ այլն: Մեծ մարգարէն Մովսէս ելեալ 'ի  
 լեառնն մեռանէր հրամանաւն Աստուծոյ, որ մինչեւ  
 ցայսօր զգերեզմանն նորա ոչ ոք գիտել կարաց. փո-  
 խանակ՝ Զորոյ զգերեզմանն եւ այլն. Ո՛չ այդ այն  
 Մուշեղ է, զի (որ) զարքայն Պատկ հրամանաւ դորա  
 սպանին. փոխանակ՝ Արոյ հրամանաւ սպանին եւ այլն:

4. Նախադրութեան եւ Նախդիրներու աւելադրութեան.

252. Վասն Նախադրութիւնը զի, ինչ Շաղկա-  
 պով սկսող խօսքերու սկիզբը աւելադրութեամբ  
 կրնայ դրուիլ, զոր օրինակ .

Շրջեցուցեալ զնոսա անդ ամս քառասուն, վասն  
 զի մոռացուցէ նոցա զսովորութիւնն զիւցապաշտ  
 քարապաշտութեանցն. Վասն զի մի ընդ խոտանս  
 գտանիցիմք. Վասն զի արժանի արասցէ դսս մտա-  
 նել ընդ նեղ դուռն՝ զտէր աղաչեսցուք. Վասն թէ  
 զիմրդ է որդի Դաւթի Քրիստոս. Վասն թէ սակաւք  
 իցեն որ ապրելոց իցեն:

Աս տեսակ խօսքերու մէջ այնք, այնքի Դե-  
 րանունները զեղչուած ալ կրնայ ըսուիլ, որ-  
 պէս թէ ըլլար .

Վասն այնքի զի մոռացուցէ. Վասն այնքի զի  
 մի ընդ խոտանս գտանիցիմք, եւ այլն:

253. Նախդիրները աւելադրութեամբ կը  
 կրկնուին :

1. Յատկացելոյն նախդիրը Յատկացուցին  
 վրայ, թէ եւ Յատկացուցիչը յետադաս ըլլայ,  
 զոր օրինակ .



Ձհանդերձս սրբութեան զՍհարոնի քահանայի.  
 Հարկանէր զԴարեհ արքայ զՊարսից եւ զՊարթե-  
 ւաց. Ածել 'ի վերայ մեր զարիւն շառնն շայնորիկ.  
 Ձառաջին քինու վրէժն զամենեցունց՝ ընդ այն հա-  
 նէին. Առցես զառաջին պտուղս զերկրին քոյ. Գրը-  
 կաց դքանս ուխտի զտանս պատգամացն. Պահեսցեն  
 զամենայն ինչ զսեղանոյն. Մի մերձենայցէք յինչ 'ի  
 դոցա. Ոչ յինչ 'ի մեր հայեցեալ:

Աս կրկնումը կ'ըլլայ մանաւանդ եթէ Յատ-  
 կացուցիչը Յատկացեալէն ուրիշ միջանկեալ  
 բառերով զատուած է, զոր օրինակ.

Ձմանկունսն զստեանցն կախեցին զմարցն. Տացեն  
 'ի բաց զդեօղս եւ զտեղիս զոր ունին զՀրէից. Մա-  
 տուցին զթիւն արքայի զկորուսելոցն. Ձլեղուն հը-  
 րամայեաց զանօրէն Նիկանովրայ հատանել. Ձգլուխն  
 հատանել զՆիկանովրայ. Ձչափ առցուք զհեղու-  
 թեան նորա. Եբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամ-  
 բոխին. Ձգէմ ունել զայնորիկ որ դայցէ 'ի վերայ  
 նորա. Ոչ կարէին զգէմ ունել զիմաստութեան եւ  
 զհողւոյն որով խօսէր. Հարկ է զմահ 'ի մէջ բերել  
 զկտակագրին:

2<sup>o</sup>. Բացայայտելոյն նախդիրը Բացայայտչին  
 վրայ.

ՁԱդդա զդուստր Եղոնայ. ՁԱքիմելէք որդի Աքի-  
 տովբայ՝ զքահանայ. Ընտրեցին զՆիկողայոս՝ զեկն  
 Անտիոքացի. Հանցեն զճարսն՝ զթաղանթ քաղրթին.  
 Շրջել զեղբարբք իւրովք՝ զորդւովքն Խարայելի. Եի  
 'ի Շաւշ՝ 'ի մայր քաղաքացն Աբիրայ. Ի Մովսիսէ՝  
 յառնէն Աստուծոյ. Ասէ Յուդա ցԽորայէլ՝ ցհայր իւր.  
 ՅԵղիազար՝ ցորդին Ահարոնի ցքահանայ. Առ Շմաւոն



քահանայապետ՝ առ բարեկամ թագաւորաց. Հայ-  
եաց ընդ ծառայ իմ ընդ Յոր. Յուսացեալ իցես 'ի  
ցուպն եղեգնեայ ջախջախեալ՝ յԵգիպտոս:

3<sup>o</sup>. Գոյականին նախդիրն Ածականին վրայ,  
թէ յետադաս ըլլայ Ածականը եւ թէ նախա-  
դաս. մանաւանդ եթէ ածականները մէկէ բ-  
ւելի են, զոր օրինակ.

Ա. Յեղատաւ Ածականի վրայ.

Զխոյն զմի առցես. եւ առցես զխոյն զերկրորդ.  
Հեղին զարիւն զարդար. Զտասանորդան զամենայն  
բերին. Առչեա զՍխմոն զոմն. Գարձցիս յայր յայլ.  
Գումարէին յերկիրն 'ի հեռաւոր. Ասէ ցարսն ցյա-  
րուցեալս 'ի վերայ նորա. Ընդ քաղաքն ընդ ամե-  
նայն այսր անդր ընթանային. Զլորն զայն զմեծ.  
Զժողովուրդդ զայդ զչար. Զտունս զայս զբարձր.  
Թաղեցին զնա յայրի անդ 'ի կրկնում. Յերկրին յայն-  
միկ 'ի պղծում. Գաի զոչխարս իմ զկորուսեալ.  
Զժողովուրդս քո զայս զմեծ. Զորդի իւր զերէց.  
Զորդին իւր զանդրանիկ. Յաւուր միում յերեւելւոջ.  
Ի տնկոյ իմեքէ 'ի մահաբերէ. Եթէ հանիցէք զամե-  
նայն ակն ձեր զաջոյ. Ատրեցէք զմանուկն զստնդ-  
եաց զկենդանի յերկուս. Բուռն եհար զհանդերձէն  
իւրմէ զնորոյ. Զազգ մի զանդէտ եւ զարդար կո-  
րուսանիցես. Զամենայն ոչխար զխայտախարիւ եւ  
զգորչ. Զխմրդ առնիցեմ զբանդ զայդ զչար եւ զմեծ.  
Զեօթն հասկան զընտիրս եւ զատորս. Զժողովուրդն  
մեծ զբազում եւ զյաղթանդամ. Զամենայն փայտ  
զազնիւ հարին. Զսուրն սուրբ եւ զմեծ եւ զհզօր.  
Զկուռնս զարծաթապատս եւ զոսկիապատս. Տայ  
մեզ զանձրեւ զկանուխ եւ զանագան. Զգործ զմի



եւ զնոյն վճարեցաք. Զազգան մեծամեծս եւ դրա-  
զուսն. Զայր զուարթ եւ զառատ. Զեօթանասուն  
արամբքն զծերովք. Յերկիրն մեծ եւ յանչափ. Յուս-  
մունս պէսպէսս եւ յօտարածայնս. Յաղղ մեծ եւ 'ի  
հղօր եւ 'ի բաշում. Յամին հարիւրորդի յիսներորդի  
յառաջնում. Յերկրիս յայսմիկ 'ի լայն եւ յընդար-  
ձակ եւ 'ի պարարտ. Նրջեցաք ընդ ամենայն անա-  
պատն ընդ մեծ եւ ընդ ահագին. Ընդ ամենայն քա-  
ղաքս ընդ յոյժ հեռաւորս:

Նախդրի աս կրկնումը կ'ըլլայ նաեւ, երբ  
Գոյականին ու Սժականներուն մէջ ուրիշ բառ  
մը, զոր օրինակ՝ Յատկացուցիչ մը կը մտնէ,  
ինչպէս.

Գործեսցէ զվանդակս նորա զազնձիս. Արածէր  
զխաչինս Լարանու զմնացեալս. Արար զիւղն օծու-  
թեան զսուրբ. Ողջացոյց զսեղան տեառն զկործա-  
նեալ. Շինեաց զգուռն տանն տեառն դրարձր. Ոչ  
լուս 'ի թիւրեւոյ զճանապարհս տեառն զուղիղս.  
Բերել զգիրս կախարդանացն զճանրագինս եւ այ-  
րել. Զդրունան առին զարտաքինս պարսպացն. Հայր  
իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ. Զօրէնան  
կատարիցէք զարքունականս. Ի ճանապարհս հօր իւ-  
րոյ յառաջինս. Ի ծառայից տեառն իմոյ 'ի յեանոց.  
Ի Սաղմոսին գրեալ է յերկրորդում. Զմարգարէան  
ամօթոյ զչորեքհարիւր եւ զյիսուն. Զեօթն երինջս  
գեղեցիկս տեսլեամբ եւ զընտիրս:

Բ. Նախադաս Սժականի վրայ.

Ածեր 'ի վերայ դոցա զանհնարին զմեղսդ. Առ նա  
զածիւնախառն զկրակն. Զմերոցի տեղիս՝ զգժնեայ  
զվայրսն հրամայէին նոցա. Զմեծապատիւ շքեղա-



չուք ոսկիակուռ զաթոռն. Զերկոսին զորդիս իմ.  
 Զեօթանեսին զորդիան իմ. Յերկոսեան 'ի սրահս  
 տանն. Նաեա զայնչափ զքսան եւ զինն ազգաց զո-  
 դիս տանջեալս 'ի գեհենի. Խ տէրունական իսկ 'ի  
 փորձանայն իմանալի է. Զյանդուզն զբունն ար-  
 քայն սաստիկ զՓարաւոն. Ոչ հալէին զսառնակերպ  
 զգիւրահալ զազգ անուշակ կերակրոյն. Զնոյն զհո-  
 դեւոր զկերակուրն կերան. Խ նոյն 'ի նմանավիշտ  
 յերկիր անկայ. Յայնչափ 'ի բազում 'ի նախրաց փի-  
 վաստիայիցն աստուածոց. Յիւրոց 'ի բարիօք արա-  
 րածոցն. 'ի քարեղէն 'ի փայտեղէն յարձաթագործ  
 պղնձագործ 'ի պատկերաց այտի. Յանբաւ եւ յան-  
 կոխ եւ յանջուր եւ յանպտուղ երկրին. Խ պղծոց  
 եւ 'ի նորածայն բանից. Խ հարիւրորդի յիաներորդի  
 յառաջնում ամի. Յերեաներորդի եւ յեօթներորդի  
 ամի:

Ս. յապէս կ'ըսուի .

Զնոյն զմի. Զնոյն եւ զմի. Զմի եւ զնոյն. Խ մի եւ  
 'ի նոյն միաս. Ընդ նոյն եւեթ ընդ մի հեա զնար:

Գ. Ա. Բնայն Ածականը նախադաս եղած ատեն ,  
 նախդիրը սովորաբար Գոյականին վրայ կը կըրկ-  
 նուի , զոր օրինակ .

Զամենայն զերկիրս զայս. Զամենայն զկահ նորա.  
 Զամենայն զգունդն. Զամենայն զինչս իւր. Զամե-  
 նայն զպատգամս տեառն. Յամենայն 'ի կեանս քո.  
 Յամենայն 'ի թագաւորութեան նորա. Յամենայն  
 իսկ 'ի թուղթսն, եւայլն:

Ծ. Մակբայնէրոս աւելարրոսն.

254. Իբրէն , սրպէս , ըստ բառերէն ետքը՝ այդ



պէս, այնպէս, նոյնպէս աւելի կը դրուին, ազդու-  
ութեան համար, զոր օրինակ .

Որպէս հուր զի այրէ դանտառս, որպէս բոց զի  
կիզու զլերինս՝ այսպէս հալածեացես զնոսա. Իբրե-  
զկաւդ 'ի ձեռս բրտիդ՝ այդպէս էք 'ի ձեռս իմ. Իբ-  
րեւ զծիծառն՝ այնպէս ճշեցի, եւ իբրեւ դադաւնի՝  
այնպէս մնչեցի. Որպէս զեղբայր եւ զընկեր այն-  
պէս հաճոց լինէի. որպէս սղաւոր եւ արտում՝  
այնպէս խոնարհ առնէի. Օրն Տեառն իբրեւ զգող  
դիշերի՝ այնպէս հասանէ. Այնպէս աներկիւզս առ-  
նէ զմարդիկ՝ իբրեւ դանմարմին զօրս հրեշտակաց.  
Ձիք այլ ինչ զօրաւոր որ այնպէս խածանէ զսիրտ  
մարդոց՝ իբրեւ զնախաստինս. Ըստ բազմութեան  
իւրեանց՝ նոյնպէս եւ մեղան ինձ. Ըստ դիպելոց  
իրաց ինչ՝ նոյնպէս եւ դանուն իրացն դնել. Ըստ  
տկարութեան ընդունելեացն՝ նոյնպէս եւ զօրէնան  
'ի ժամանակսն կարգեաց:

**Աս վերջինները Հայերէն աշխարհաբար կը  
թարգմանուին .**

Իրենց բազմութեանը համեմատ ինձի դէմ մեղան-  
չեցին. Բէպքերուն համեմատ կամ նայելով իրերուն  
անուն դնել. Ընդունողներուն տկարութեանը նայելով  
օրէնքները ժամանակին դրաւ:

**255. Նոյնպէս ոչ բառն ազդուութեան հա-  
մար կը կրկնուի .**

Ոչ կարացին ապրեցուցանել եւ ոչ դանձինս իւր-  
եանց. Ոչ սղակասեցէ 'ի նոցանէ եւ ոչ մի. Ոչ ու-  
մեք պատմեցին եւ ոչինչ յորոց տեսինն. Չնախան-  
ձի եւ ոչ ընդ ումեք երբէք. Չանկանի եւ ոչ ընդ  
միով քննութեամբ. Ոչ ումեք ոչ երեւէին՝ բայց



միայն Հրէիցն. Այնպիսին հպարտացեալ է, եւ ոչինչ  
ոչ գիտէ. Բայց դուք եւ ոչ զմի զայն ոչ յիշեցէք.  
Ես եւ ոչ զմի ոք ոչ գիտեմ. Զոր ոչ երկինք եւ ոչ  
երկիր արժեղ ոչ կարեն:

Դ. ԲԱԿԱՌՈՒԹԻՒՆ

256. Բակառութիւն կը կոչուի ան ձեւը՝ ուր  
երկու բառ իրարու հետ կը համաձայնին ոչ  
ըստ ֆերականութեան՝ այլ ըստ իմաստին.  
ինչպէս է հետեւեալ օրինակներուն մէջ:

1. Բայը զօրութեամբ իմացուած բառի մը  
համար յոքնակի դրուած.

Զօրածողով լինն արքայն Ասորւոց եւ Իսրայելա-  
ցւոց. փոխանակ՝ Արքայն Ասորւոց եւ արքայն Իսրա-  
յելացւոց. Ի բերանոյ նոցա էլանեն հրաման մահու եւ  
կենաց. այսինքն՝ Հրաման մահու եւ հրաման կենաց.  
Զոր աղի եւ անոյշ զամանս ջրւորացն լինն. այս  
ինքն՝ Զուր աղի եւ ջուր անոյշ. Այժմ երկրաւոր  
նշանաց պէտք են, եւ երկնաւորն այլում ժամանակի  
պահեալ են. այսինքն՝ Եւ երկնաւոր նշանքն պահ-  
եալ են, եւ այլն:

2. Իական բայը յոքնակի դրուած՝ ուղղա-  
կան հոլով խնդիրն (ստորոգելին) յոքնակի ըլ-  
լալուն համար.

Բարկութիւն հօր՝ որդի անմիտ, եւ ցատկն ծնա-  
նելեաց նորա. Այժմ՝ իմաստութիւն մարդոց էն. Մտաց  
բազաղանքն աղանդն, եւ ոչ ճշմարտութիւն. Չեն օ-  
րենք աշխարհի մերում տալ նախ զկրտսերն քան  
զերէց. Փատկն՝ առն խոտորել ՚ի հայհոյութեանց.  
Ոչ վայրապար ինչ երէկն զՓարէս յիշել:



3. Հաւաքական անուններուն խայր կամ Ածականը կամ Դերանունը յոքնակի դրուած .


Ամենայն Իւրայել զկնի երկային նոցա զառեալք եւ հազմեալք . Դարձաւ ամենայն ժողովուրդն 'ի բանակն առ Յեսու 'ի Մակեթայ ողջանդամք . Ամենայն քրտանն Իսրայելի հահառահողք եւ խաղաղութեամբ են . Արարին զՔանանացին հնազանդս, բայց սատակելով ոչ սատակեցին զնոսա . Եւ եղև Մովսէս Իսրայելի 'ի Չարայս պատարագարերս . Տեսեալ զքրտանդն Հայոց լքեալս եւ պարտասեալս . Եթէ եղիցի ժողովուրդն իբրև զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնացեն 'ի նոցանէ . Նման են ժանկարոց որ նարեցին 'ի հրապարակս . Չուեաց ամենայն ժողովուրդն ըստ բանակս իբեանց . Կողոպտեաց ամենայն ժողովուրդն զգինդս ոսկիս յականջաց կանանց իբեանց . Զի նա փրկեացէ զժողովուրդը իւր 'ի մեղաց իբեանց . Իբրև զըզեար որոց ոչ իցէ հովիւ :

Ամենայն բառին եղակին ալ, իբրև հաւաքական, նոյն համաձայնութիւնը կ'ունենայ .

Ամենայնի որոց իցեն թիւք եւ թեփի զայնս ուտիցէք : Յամենայնէ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն :

4. Եղակի թուական անուններուն վերաբերութիւն ունեցող ածական կամ բայ յոքնակի դրուած .

Տանն այր բորոտ որք կային 'ի հեռաստանէ . Երկուսսանն այր տղէտք եւ տառապեալք որք 'ի նա յարեալ էին :





## Կ Է Տ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1. Կէփաղբոս-Նի-ն կը կոչուի խօսքին մէջ բառերը եւ իմաստները կէփ կոչուած նշաններով իրարմէ զատելու արուեստը :

2. Կէտադրութեան գլխաւոր նշանները հետեւեալներն են. բո-ր (՝), սորոսկէփ (՛), Ռե-կէփ (օ), Քերէկէփ (z) :

3. Աս նշանները՝ Ա. խօսքի մը նոյնատեսակ մասերը եւ Բ. Պարբերութեան մը մասերն իրարմէ զատելու համար կը գործածուին :

4. Ա. խօսքն ան է որ գլխաւոր բայ մը ունի. խօսքին մասերն են Տէր բային, Սորոսկէփն, Բայը, Խընդերները, Մակբայն ու Ածականները : Երբ խօսքի մը մէջ աս մասերը մէկէ աւելի են, այսինքն՝ երբ խօսք մը Ռե-նոյն բային վերաբերեալ քանի մը Տէր բայի, Ռե-նոյն Տէր բայիին վերաբերեալ քանի մը բայ կամ ստորոգելի, Ռե-նոյն խնդրառուին վերաբերեալ քանի մը խնդիր կամ մակբայ, Ռե-նոյն գոյականին վերաբերեալ քանի մը ածական ունի, ան մասերը խօսքին նոյնատեսակ մասերը կը կոչուին :

5. Բ. Պարբերութեան կ'ըսուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր նախադասութիւններէ՝ որոնք պարբերութեան անդամները կը կոչուին : Եւ պարբերութեան մը անդամները՝ կամ իրարմէ կախած ունեցող կամ իրա-



բու հակադրեալ խօսքեր են , եւ կամ մէկը միւսին իբր 'ի պատճառէ կամ 'ի փաստէ հեղեղանքիւն\* է , զոր օրինակ .

Եթէ մեզի մեր տկարութեանը վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է :

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն . բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին :

Մեր թագաւորը բարեսիրտ եւ մարդասէր է . ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ :

Աս երեք խօսքն ալ մէյմէկ պարբերութիւն են . առաջինին անդամները կտրուած կը ցուցնեն , երկրորդին անդամներն իրարու հակադրեալ են . իսկ երրորդին անդամներուն մէկը (հետեւորդ անդամը) միւսին (նախորդին) իբր 'ի փաստէ հեղեղանքիւն է :

Տ. Պարբերութիւն չէ երկայն խօսք մը՝ որուն մէջ նախադասութիւններն իրարմէ կախում չունին , ոչ իրարու հակադրեալ են , ոչ ալ մէկը միւսին հետեւութիւնն է . այլ միայն իրարու քով շարուելով ընդհանուր իմաստ մը կը բացատրեն , զոր օրինակ սա հետեւեալը .

Առողջութիւնը լոկ անուն է . կեանքը սոսկ երազ է . փառքը մինակ երեւոյթ մի է . զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր գրօսանք են :

---

\* Պատճառի կամ փաստի հեղեղանքեան վրայ տես Տրամաբանութիւն Գարագաշեան էջ 250 :



7. Պարբերութիւն մը պարզ կը կոչուի, երբ անդամներուն երկուքն ալ մէյմէկ նախադասութիւն են. ինչպէս վերի երեք պարբերութիւնները:

8. Պարբերութիւն մը բազադրեալ կը կոչուի, երբ անդամներուն մէկը կամ երկուքն ալ երկու կամ աւելի նախադասութիւններէ կը բաղկանան, զոր օրինակ.

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգունենային՝ եւ ճշմարտութեան մեծ զօրութեանը վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իր նպատակին աւելի մօտեցած կ'ըլլար՝ այլ եւ առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն մը ունեցած կ'ըլլային:

Խօսքի մը ճասերոտն համար կէտադրութեան կանոն.

9. Ստորակէտով կը զատուին.

1<sup>o</sup>. Խօսքի մը նոյնաբնակ ճասերը, եթէ եւ, կամ, քայց, ալ շաղկապներուն մէկովը կապուած չեն, զոր օրինակ.

Աշխարհիս վրայ շք, խնամ, զերմ, ցտար, պինդ, քծ, գիրեւ քաներ խառն կը գտնուին: Տիւրացիք արտեւարաբորձ, համբերող, աշխատասեր, ճախար, սահասապէս եւ խնայող են: Նենգութիւնը, բռնութիւնը, սպերդմութիւնը, դատերը, պատերազմներն ան երկրին մէջ իրենց անազորոյն ձայնը երբէք լսել չեն տար: Ասամբաւ երկրագունտն իր մակերեւութին վրայ մեղի կ'ընծայեցնէ լեռներ, յորեր, որոգարակներ, ծաղեր, ծահիճներ, անջամներ, վիհեր, հրաբխներ: Նա գեղջկաց տուններուն այցելութիւն կ'ընէր. անոնց վիհակիւն, քն-



արանեացը, զաակընէրոան, ըստոյն, հողերոան, կարողութեանը,  
 արարելն, պարարելն եւ արել շատ բաներոա կը տեղեկա-  
 նար: Աս փիլիսոփան ուրախութեամբ կը խոստո-  
 վանէր թէ հողին կ'ըծբունէ, կը խորհի, կը պարահոտաի,  
 կը հաստատայ, կ'իմաստասերէ, կը ճանչնայ, կը կասի, կը խոր-  
 հըրդածէ: Եթէ կ'ուզուի որ տղաք միշտ տղայ չմնան՝  
 այլ վարպետ ըլլան, հայրերն ու վարպետները դա-  
 նոնք խիստ կանուխ յանդիմանած, ուղղած, կշտամբած,  
 սղոտած, սաստած, հրահանգած ու համոզած ըլլալու են:  
 Գերագոյն ու կատարեալ կառավարութիւնը՝ կա-  
 ռավարիչները կառավարելու մէջ կը կայանայ.  
 պէտք է դանոնք դիտել ժողովուրդը, սանձել ուղղել, փաշա-  
 լերել վերցնել իջեցնել, արեւափոխել ու ձշտ 'ի բուն առել:

Ոմանք ասդէպքերուն մէջ բռն կը դործածեն:

2<sup>o</sup>. Խօսքի մը մէջ իբր բացայայտիչ դրուած  
 խօսքի մասեր երկու ստորակէտի մէջ կ'առ-  
 նուին, զոր օրինակ .

Աշխարհիս ամենէն մեծ պետութեանը, Հոռոմեա-  
 հան պետութեան վրայ Աստուծոյ դատաստանները  
 մեղի թաքուն չեն:

3<sup>o</sup>. Նախադրութեամբ խնդիրներ, երբ եր-  
 կայնկեկ են եւ խօսքին իրարու հետ անմիջա-  
 կան յարաբերութիւն ունեցող երկու մասե-  
 րուն, զոր օրինակ՝ Տէր բային ու բային կամ  
 բային ու խնդրոյն, մէջտեղը դրուած են,  
 նոյնպէս երկու ստորակէտի մէջ կ'առնուին,  
 զոր օրինակ .

Անոր նաւը երկայն արեւ հողերոան խաղալի ըլլալն  
 ետեւ, ալեաց մէջ թաղուեցաւ: Տիւրացիք, էրեւոյ գո-



անուշիկանը պարճաբան, զայրացուցած էին Սեաստորիս մեծ թագաւորը որ Եգիպտոս կը թագաւորէր ու բազմաթիւ թագաւորներու տիրած էր... Սեաստորիս, անոնց ամբարտաւանանիւնը կործանելու համար, միտքը դրած էր որ բոլոր ծովերու վրայ անոնց վաճառականութիւնը չփոթէ:

4<sup>o</sup>. Բացադարձութեամբ ըսուած անուն մը, այսինքն կոչական մը, կամ ձայնարկութիւն մը խօսքին յաջորդ մասէն ստորակէտով մը կը զատուի, եւ եթէ խօսքին մէջտեղն է, երկու ստորակէտի մէջ կ'առնուի.

Ով թագաւոր, ահա թշնամիներուդ դէմ քու վրէժխնդիրներդ: Սրժան է, որդեակ, որ քեզի յայտնեմ:

5<sup>o</sup>. Կ'ըսէ՞, ըսաւ, պարտասխանեց, կրկնեց, եւ ասոնց նման ուրիշի մը խօսքը յառաջ բերող բայեր երկու ստորակէտի մէջ կ'առնուին, եթէ յառաջ բերուած խօսքին մէջտեղն են. իսկ եթէ խօսքին սկիզբն են, ասոնցմէ ետքը միջակէտ կը դրուի, ու յառաջ բերուած խօսքը գլխադրով կը սկսի:

Ով է հայրդ, ըսաւ Նիցուհին, զոր կը փնտռեաւ Որդիսեւս կը կոչուի, ըսաւ Տելեմաք: Կամ. Նիցուհին ըսաւ. Ով է հայրդ զոր կը փնտռեաւ Տելեմաք պատասխան տուաւ. Հայրս Որդիսեւս կը կոչուի:

6<sup>o</sup>. Պարբերութիւն չեղող խօսքերու մէջ իւրաքանչիւր նախադասութիւն, մանաւանդ եթէ երկայն է, նախընթացէն ստորակէտով մը կը զատուի.



Առողջութիւնը լոկ անուէն է, կեանքը սոսկ երազ է, փառքը մինակ երեւոյթ մի է, զուարճութիւններն ու հեշտութիւնները միայն վտանգաւոր գրօսանք են:

Երբոր ասանկ բաղմաթիւ նախադասութիւններ նախընթաց խօսքի մը բացատրութիւն կամ իբր թուումն մասանց են, ան նախընթաց խօսքն ասոնցմէ միջակէտով մը կը բաժնուի, զոր օրինակ.

Երբոր թագաւորաց սիրտը մարդոց ձեռքին մէջն է, բնութ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կը միաբանի. շողոքորթութիւնը զանոնք կ'ապականէ, քաղաքականութիւնը զանոնք կը խաբէ, չար խրատաւորները զանոնք կը գրաւեն, գէշ օրինակները զանոնք կը քարշեն, գործերուն զանազանութիւնն անոնց միտքը կը ցրուէ:

Աս դէպքին մէջ ոմանք ստորակէտի տեղ միջակէտ կը դնեն:

- 10. Բութ կը դործածուի խօսքին մէջ
- 1<sup>o</sup>. Հոն ուր բառ մը զեղչուած է, զոր օրինակ.

Փրանկները, վայրենի ժողովուրդ, բանջարով, պտղով, արմատներով եւ որսով միայն կ'ապրէին: Արեւը, լուսինը, լուսաւորները, գետերն էին անոնց չաստուածները. խոր անձաւներ՝ անոնց մեհեանները. աստեղաբաշխներ, բժիշկներ ու դատաւորներ՝ անոնց Նրուիդ կոչուած քուրմերը. փայտակերտ կաւագործ հիւղեր՝ անոնց քաղաքները. իսկ անոնց առուտուրն էր փոխանակութիւն:

- 2<sup>o</sup>. Բութով կը զատուի խօսքին ան մասը որ



դիմաւոր բայ չունենալով՝ ամբողջ նախադասութիւն չէ . այլ ուրիշ նախադասութենէ՝ մը կամ խօսքին դիմաւոր բայ ունեցող մասէն կախում ունի .

Եւրոանակ վարանձան ու անսարսփութեան մէջ ապրելէ յանչրացած՝ որոշեցի որ Սիկիլիա երթամ: Գործին այսչափ անհնարին դժսարութիւնները պեմելով հասկցանք որ մեր բոլոր ջանքերը վայրապար պիտի ըլլան: Պատանին հօրն անուանը լաճին պէս՝ սկսաւ ջերմ արտասուք թափել: Հիացմամբ ասանկ պեսարանի մը հանդիսարէս ըլլալէ ետք՝ սկսանք կրետէ կղզւոյն լեռները նշմարել:

3<sup>o</sup>. Երբ Տէր բային կամ ստորոգելին իր յարակից մասերովը երկայնկեկ է, այն մասը յաջորդ խօսքէն բուժով մը կը զատուի, որ շքնչառութեան հանգիստ տրուի, զոր օրինակ .

Իրենց նախնի ասանդութիւնները պահելու համար Եփեսոսացոց ասէնէն Գեղեցիկ մէկ հնարքն ալ անոնց (աւանդութիւններուն) համար յատուկ տօներ սահմանելն էր. ասով ասանդութեանց Բարոյական նշանակութեանը՝ ժողովրդեան մտքին մէջ կը տպաւորուէր:

4<sup>o</sup>. Յարաբերական դերանունով սկսող միջանկեալ խօսքերուն վերջը բուժ կը դրուի, ու այնպէս խօսքին մնացորդը կը շարունակուի, զոր օրինակ .

Սատուծոյ մեծագործութեանը գահն է բնութիւնը. ան մարդը որ անոր ճգախոհ ու խելամաս է՝ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կ'ամբաստնայ:



Ոմանք բուժը յարարեցեալին վրայ կը դը-  
նեն , ու յարարեցեալանով կազմուած նախա-  
դասութիւնը խօսքին յաջորդ մասէն ստորա-  
կէտով կը զատեն , այսպէս .

Շնչքին՝ որ իմացական կարողութեամբ շունեն . ու կար-  
կեն սորբին է , տակաւին խօսողութեան գրեթէ հա-  
ւասար ձիրք մը բնութենէն ընդունած է : Կարմիր  
ծովը՝ որ զԱրաբիա վերին Նիովաիայէ է - Նիւպոսի մա-  
սէն կը բաժնէ , երեքհարիւր յիսուն մղոն երկայնու-  
թիւն եւ քառասուն մղոն լայնութիւն ունի :

Պարբերութեան անդամներուն համար կէտադրութեան կանոն .

11. Պարզ պարբերութեան մը անդամները ,  
եթէ մէկը միւսէն կախում կը ցուցնէ , իրար-  
մէ ստորակէտով կը բաժնուին .

Մինչ Մենտոր ու Հազայէլ կը խօսէին , ոսկեփայլ  
ու կապուտակագոյն թեփերով ծածկուած դէփին-  
ներ նշմարեցինք : Պարտաւորութիւն մը որչափ ա-  
ւելի մեծ ու տաժանելի է , նոյնչափ անոր հիմը  
դժալի եւ դօրաւոր ըլլալու է : Որովհետեւ յոյս չու-  
նինք որ մեր վրայ թագաւորէք , գէթ մեր օրէնքն  
հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը  
գտնելու մեզի օգնեցէք : Անձնասիրութեան աշ-  
խարհին մէջ որչափ նոր տեղեր գտնենք , տակաւին  
շատ անձանօթ երկիրներ կը մնան :

12. Երբ պարզ պարբերութեան մը անդամ-  
ներն իրարու հակադրեալ են կամ մէկը միւ-  
սին իբր 'ի պատճառէ կամ 'ի փաստէ հետե-  
ւութիւնն է , իրարմէ միջակէտով կը զատուին ,  
զոր օրինակ .



Երջանկութեան համեղու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն. բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ չատ քիչ կը գտնուին: Աստուած անսահման կատարեալ եւ անհուն բարի է. հետեւաբար ոչ կրնայ խաբուիլ, ոչ ալ մեզ կը խաբէ: Մեր թագաւորը բարեսիրտ եւ մարդասէր է. ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ:

13. Բաղադրեալ, այսինքն՝ երկրորդական անդամներէ բաղկացեալ պարբերութեան մը մէջ, եթէ պարբերութեան գլխաւոր անդամներուն իրարմէ մէկը միւսէն կախում ունի, երկրորդական անդամներն իրարմէ բութով կը զատուին. իսկ գլխաւոր անդամները՝ ստորակէտով, զոր օրինակ.

Ինչ նիւթի վրայ որ ճառեն՝ ինչ խորհուրդ որ անոնց մտացը մէջ ծնանի՝ ինչ զգացումներ որ անոնց հոգին գրաւեն, սա ամենը բոլոր պարագաներովն եղածին պէս կը բացատրեն: Եթէ բանաստեղծութիւնը, երկրաչափութիւնը, աստեղագիտութիւնն ու առ հասարակ բոլոր գիտութիւնք, աւելի կամ նուազ տարբերութեամբ, իրենց կատարելութեանը կը դիմեն՝ մինչդեռ բարոյականը հազիւ որրոցէն ելած կը թուի, պատճառն ան է որ մարդիկ, ընկերութիւն ձեւանալով իրենք իրենց օրէնք եւ բարոյական տալու ստիպուած ըլլալնուն համար, գիտողութեամբ բարոյականին սկզբունքներուն հասու չեղած՝ բարոյականի դրութիւն մը շինելու պարտաւորուեցան:

14. Երբ բաղադրեալ պարբերութեան մը գլխաւոր անդամներն իրարու հակադրեալ



կամ մէկը միւսին հետեւութիւնն է, ան աւտեն երկրորդական անդամները իրարմէ միջակէտով կը զատուին. իսկ գլխաւոր անդամները վերջակէտով, զոր օրինակ.

Մարդ իրեն հետ համաժիտ եւ համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն գծտեալ չի կրնար մնալ. վերջապէս կը հաշտուի: Բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում ունողներուն հետ սիրով ու միարանութեամբ ըլլալու վայրապար կ'աշխատի. ասանկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին:

15. Երբ խօսքի մը մէջ քանի մը պարբերութիւն կայ, եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամներն իրարմէ ստորակէտով բաժնուած են, երկրորդ պարբերութեան ու առաջնոյն մէջ տեղը միջակէտ կը դրուի. իսկ եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամները միջակէտով բաժնուած են, յաջորդ պարբերութեան ու նախընթացին մէջտեղը վերջակէտ կը դրուի: Ստոր հետեւեալ օրինակը.

Եթէ մեր նպատակները կամ դիտաւորութիւններն ուղիղ եւ մաքուր են, յաջողելու մեծ յոյս կրնանք ունենալ. եւ եթէ չյաջողինք, չաջողութեամբ ոչ թէ պատժուած՝ այլ զրկուած կ'ըլլանք: Բայց երբ մեր նպատակները թիւր եւ չար են՝ ու մեր յուսացած յաջողութիւնը մենէ կը փախչի, միանգամայն զրկող եւ պատժուած ենք. զրկող ենք, քանզի մեր նպատակն անիրաւ է. պատժուած ենք.



քանզի շաճաղութիւնը որ մաքուր եւ ուղիղ դիտաւորութիւն ունեցողին առ առաւելն արտօնութիւն մը կը բերէ՝ չարին եւ անիրաւին նաեւ յուսահատութիւն է:

16. Խօսք մը որ վերջակէտով կը լրանայ կամ կը գոցուի, քաղցեալ կամ ամբողջական խօսք կը կոչուի:

17. Գրութեան մը շարունակութեանը մէջ ան մասերը որոնք նոր տողով (ալինէա) կը սկսին, փողափեք (փարակրաֆ) կը կոչուին: Տողագիր մը կրնայ մէկ կամ աւելի լրացեալ խօսք պարունակել. ուստի եւ տողագրի մը մէջ որչափ վերջակէտով լմնցած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ:

18. Ամենեւին կէտանշանով չեն բաժնուիր.

1<sup>o</sup>. Երկու նոյնատեսակ բառեր որոնք —, է—, կամ, քայց եւ ուրիշ ասոնց նման շաղկապներով կապուած են ու յարակից մասեր չունին, զոր օրինակ.

Պատիժն — մոլութիւնն անբաժին են: Բոլորտիքդ եղսղներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորստենէդ կամ փրկութենէդ կախում ունի: Մարդուս կիրքերն անոր մնասակար քայց սիրելի թըշնամիներն են:

2<sup>o</sup>. Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքեր, զոր օրինակ.

Ամեն տեղ ծաղկած կը տեսնենք թէ Պոստնային պատուհները թէ Փլորային բնձաները: Մի թողուր ոչ ազահութեան ոչ հպարտութեան որ քեզ քարշ ածեն:



3<sup>o</sup>. Որ, ըն շաղկապներով սկսող խօսք մը որ նախընթաց բային խնդիր է, զոր օրինակ.

Չենք ուզեր որ մէկը մեզ յանդիմանէ. քանզի ուղղուիլ չենք ուզեր: Շողոքորթութենէ կը խարուինք. քանզի կը կարծենք ըն ուրիշներն այնչափ կոյր են որ մեր մոլութիւնները չեն տեսներ:

19. Պարոյիւ (°) հարցական նշան է եւ հարցում եղող բառին վրայ կը դրուի:

20. Երկուսը (´) զարմացական նշան է եւ հոգւոյն մէկ կիրքը նշանակող բառերու վրայ կը դրուի:

21. Կախածը որ երեք կէտ է (...) կը գործածուի խօսքը պակաս կամ կիսկատար մնացած ըլլալը ցուցնելու համար:

22. Տալը (—) կը գործածուի մէյմը հարցման ու պատասխանուոյ մէջտեղը՝ առանց կ'ըսէ, ըստ, պատասխան արտաս, կրկեց բառերը գործածելու. երկրորդ՝ փակագծի տեղ:

23. Չափերը (°) խօսքի մը կողմ ըլլալը նշանակելու համար կը գործածուի:

24. Փակագիծը որ սա նշանն է ( ) խօսքին մարմինէն դուրս բայց անոր յաւելուած մաս մը բուն խօսքէն կը զատէ:





# Ց Ա Ն Կ

ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ . . . . . 1

## ՄԱՍ Ա.

	Բառադիտութիւն . . . . .	1
ԳԼ. Ա.	Անուն . . . . .	1
ԳԼ. Բ.	Ածական . . . . .	22
ԳԼ. Գ.	Դերանուն . . . . .	54
ԳԼ. Դ.	Նախդիր կամ Նախադրութիւն . . . . .	40
ԳԼ. Ե.	Բայ . . . . .	44
	Դերբայներուն վրայ դիտելիք . . . . .	76
ԳԼ. Զ.	Մակբայ . . . . .	78
ԳԼ. Է.	Շաղկապ . . . . .	79
ԳԼ. Ը.	Զայնարկութիւն . . . . .	80

## ՄԱՍ Բ.

	Համաձայնութիւն . . . . .	82
ԳԼ. Ա.	Տէր բայի . . . . .	82
ԳԼ. Բ.	Խնդիր . . . . .	87
	Ա. Գոյականին խնդիրները . . . . .	88
	Բ. Ածականներուն խնդիրները . . . . .	89
	Գ. Նախադրութեանց խնդիրները . . . . .	92
	Դ. Բայերուն խնդիրները . . . . .	105
ԳԼ. Գ.	Ուղղական խնդիր կամ ստորոգելի . . . . .	115
ԳԼ. Դ.	Բացայայտիչ եւ բացայայտեալ . . . . .	117
ԳԼ. Ե.	Կոչական . . . . .	119
	Ութը մասանց վրայ մասնաւոր դիտելիք . . . . .	120
	Ս. Գոյական անուն . . . . .	120
	Շօղի դործածութիւնը . . . . .	120
	Բ. Ածական անուն . . . . .	126
	Գ. Դերանուն . . . . .	129
	1. Ցուցական դերանուն . . . . .	129
	2. Ստացական դերանուն . . . . .	150
	3. Յարաբերական դերանուն, եւ ա. դ. ն. դիմորոշներուն դործածութիւնը . . . . .	151



Գ. Բայ . . . . .	150
1. Գրաբարին ժամանակներուն աշխարհաբարին հետ համեմատութիւնը . . . . .	150
2. Անորիշ դերբայ . . . . .	157
3. Անցեալ դերբայ . . . . .	164
Ե. Նախադրութիւն . . . . .	165
Զ. Մակբայ . . . . .	164
Է. Շաղկապ . . . . .	170

### ՄԱՍ Գ.

	Շարադրութիւն . . . . .	179
ԳԼ. Ա.	Քերականական կարգ. Գիտելիք . . . . .	179
ԳԼ. Բ.	Զեւաւոր կարգ . . . . .	185
	Ա. Արտուղութիւն . . . . .	185
	1. Հարկաւոր արտուղութիւն . . . . .	186
	2. Ազատ արտուղութիւն . . . . .	188
	Բ. Զեղչում . . . . .	194
	1. Տէր բայի զեղչում . . . . .	194
	2. Բայի զեղչում . . . . .	199
	3. Զեղչումն խնդրոց . . . . .	204
	4. Դերբայներու զեղչում . . . . .	206
	5. Յուցական եւ Ստացական ածականաց զեղչ . . . . .	207
	6. Նախադրութեան զեղչում . . . . .	209
	7. Շաղկապի զեղչում . . . . .	211
Գ.	Աւելադրութիւն . . . . .	215
	1. Դերանունն Տէր բայի աւելադրութիւն . . . . .	215
	2. Դերանունն խնդրոց աւելադրութիւն . . . . .	215
	3. Յարաբերեալի աւելադրութիւն . . . . .	215
	4. Նախադրութեան եւ նախդիրներու աւելադրութիւն . . . . .	218
	5. Մակբայներու աւելադրութիւն . . . . .	222
Գ.	Բակառութիւն . . . . .	224
	Կէտադրութիւն . . . . .	226
	Խօսքի մասերուն կէտադրութեան կանոն . . . . .	228
	Պարբերութեան անդամներուն կէտադրութեան կանոն . . . . .	252



ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄԱՀ ՀՈԳԻՈՅ

Արտեմեայ օրիորդի եւ Նասիպի Յ. Խօրասանճեան.  
 Գարրիբեյի Երանեան.  
 Գայիանէ՝ տիկնոջ Նորատունկեան.  
 Գրիգոր Պատուելույ ֆէլախմարճեան.  
 Երանուհի տիկնոջ Յ. Եմէնիճեան.  
 Խրիմցի Գէորգ Աղայէքով եւ Տիրուհի տիկնոջն.  
 Նիկողայոսի Մ. Զօրայեան.  
 Պաղտատար Պատուելույ.  
 Տ. Մխիթար վարդապետի Աբբայ.  
 Տ. Տ. Յակոբ Պատրիարքի Նալեան.

Ալիքսան Յ. Խօրասանճեան.  
 Ահարօն վարպետեան.  
 Անդրանիկ Պէյ կրճիկեան.  
 Անտօն Մալխասեան.  
 Բեգրակ Բարստտանեան.  
 Գառնիկ Յ. Յովակիմեան.  
 Գրիգոր Ա. Փափաղեան.  
 Գրիգոր Խուրասանեան.  
 Գրիգորիկ Կ. Պալեան.  
 Գրիգոր Ս. Բարսեղեան.  
 Գրիգոր Տ. Գէորգեան Առաքաղարցի.  
 Դանիէլ Մարկոսեան.  
 Տ. Տ. ԵՍԱՅԻ Արքեպիսկոպոս եւ Պատրիարք Ս. Երուսաղեմի.  
 Եսայի Մ. Անուխեան.  
 Լեւոն Մ. Գափամաճեան.  
 Խաչատուր Մակաղեան.  
 Տ. Խորեն վարդապետ Գալֆաեան.  
 Կարապետ Սաղաեան.  
 Ճանիկ Պէյլիքճեան.  
 Ճանիկ Ս. Արամեան.  
 Մարկոս Ալաճալրեան Նախիչեւանցի.  
 Մարտիրոս Ա. Հարենց.  
 Մարտիրոս Թօգաթլրեան.  
 Մկրտիչ ճանրմեան.  
 Մկրտիչ Յ. Տամատեան.

Մկրտիչ Պէնատրլեան.  
 Մկրտիչ Ստեփանեան.  
 Յակոբ Թօգաթլրեան.  
 Յակոբիկ Կ. Պալեան.  
 Յակոբ Ոսկան.  
 Յակոբ Ս. Փէրվաղեան.  
 Յարութիւն Մարգարեան.  
 Յովհաննէս Հովիւեան.  
 Յովհաննէս Յակոբեան.  
 Յովհաննէս Յ. Ամիրաղով.  
 Յովհաննէս Պօյաճեանց.  
 Յովհաննէս Սպարթալրեան.  
 Յովսէփ Գափամաճեան.  
 Նիկողայոս Տ. Շմառնեան.  
 Նշան Հարենց.  
 Պօղոս Մէրասեկտեան.  
 Տ. Պօղոս վարդապետ Խօլտամեանց  
 յԱրմաշ.  
 Ռուբէն Յ. Բիւրքճեան.  
 Սարգիս Գալուզճեան.  
 Սարգիս Մ. Գափամաճեան.  
 Սերովբէ Թագւորեան.  
 Սիմօն Սիմօնովիչ.  
 Ստեփան Մ. Ամիրաղով.  
 Տիգրան Գարակէօզեան.  
 Տիգրան Մ. Գափամաճեան.















2520

2013





ՀԱՅԿԱԶԵՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՐԴԵԱՆ  
ՏՈՒՍԵ ԴԱՍԱԳԻՐԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ  
ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ԵՒ ՉԵԳԱՐԱՆ. Յօ  
կաց ՆԵՐՍԷՍ Ս. ՄԷՂՈՒԹԵԱՆ. 46 կրկն  
1 դրոշմ: (Թ. Տպագրութիւն):

ԱՌՁԵՆՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱՆ  
Յօրհնակաց ՅՈՂՈՒԹ ԿՈՂՉԵԱՆ. 42 կրկն  
3 դր:

ԳՊՐՈՒԹԻՒՆ ԿՈՐ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻ  
ՀԱՅԵՐԷՆ. (Պրինկաց Ս. Մ. Վ. ԳԱՐՍԻԱՆ  
256 կրկն դիւ 8 դր: (Թ. Տպագր):

ԹՈՒՍԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՑ. Յօրհն  
ԱՅԵՐԷՆ Պ. Վ. ԿԱՆԱԶԱՆՆ. 157 կրկն դի  
դր: (Թ. Տպագր):

ԿՐՈՒԹՈՒԹԵՆ ՀՈՅՈՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻ  
Յօրհնակաց Ս. Մ. Վ. ԿԱՆԱԶԱՆՆ. 158 կ  
դիւ 6 դր:

ՀԱՄԱՌՈՑ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Յ  
Յիւաց Ս. Մ. Վ. ԿԱՆԱԶԱՆՆ. 90 կրկն  
4 դր:

ՆՈՒՅԿԻՏԷԼԻՔ ՄԱՆՈՒՆՅ. Յօրհնակաց  
Յ ԳԱՊՊԻՆԻԱՆԻ, ՍԵՆՆՈՒ ՄԱՆԱԿ. 180 կ  
դիւ 5 դր: (Թ. Տպագր):

ՄԱՐՏԻ ՏՂԱՅՈՑ. Յօրհնակաց Յ ԳԱՊ  
ԻՆԻԱՆԻ, ՍԵՆՆՈՒ ՄԱՆԱԿ. 112 կրկն  
4 դր: (Գ. Տպագր):

ՍԵՂԱՆՆԻՔ ՏԵՍ ԻՅԱՆ. Յօրհնակաց  
ԿԱՆ, Ս. Մ. Վ. Գ. ԿԱՆԱԶԱՆՆ. 526 կրկն  
6 դր:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒՍԻՒԹԻՒՆ  
ՊՆԻՅԱՆ, Ս. Մ. Վ. ԿԱՆԱԶԱՆՆ. 200 կ  
դիւ 6 դր:

